ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017
02.2017
03.2017
04.2017
05.2017
06.2017
07.2017
Հուլիս
08.2017
09.2017
10.2017
11.2017
12.2017

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Հուլիս

թիվ 7 (227)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Պրեմիում Կրեդիտ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը գրանցելու և լիցենզավորելու, «Միր» քարտային վճարային համակարգը վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում ընդգրկելու, «Միր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում «Արմենիան Քարդ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպությանը մասնակցության թույլտվություն տրամադրելու, «ԻԶԻ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Կենտրոնական» մասնաճյուղը հաշվառելու, «ԱՐՍ ԷԼԻՏ» ՍՊԸ-ին տրամադրված գրավատնային գործունեության, «ՎԱՂԱՐՇ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ին և «Սաք Տրաստ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի «ՎԵԴԻ» մասնաճյուղը գրանցելու, «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ-ի «Տիգրան Մեծ» մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու թույլտվություն տալու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 գրավատան և 4 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 136-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

64 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 141-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 297-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 2436-Ն հրամանի մեջ լրացում կատարելու մասին»

65 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 142-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 205-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

67 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 143-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 294-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

68 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 144-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

69 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 145-Ն որոշումը «Ապահովագրական գործունեության հետ կապված այլ գործառնությունների իրականացման վերաբերյալ»

70 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 146-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

74 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 157-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

101 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 158-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 231-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

102 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել և լիցենզավորվել է*** «Պրեմիում Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 140Ա):
- «Միր» («Мир») քարտային վճարային համակարգը ***ընդգրկվել է*** վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում (որոշում թիվ 148Ա):
- «Միր» («Мир») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում ***մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Արմենիան Քարդ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 149Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԻՋԻ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 150Ա):
- ***Դադարեցնել է*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Կենտրոնական» մասնաճյուղը (որոշում թիվ 151Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԱՐՍ ԷԼԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 152Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՎԱՂԱՐԾ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիան (որոշում թիվ 161Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Սաբ Տրաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիան (որոշում թիվ 163Ա):
- ***Գրանցվել է*** «ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՎԵԴԻ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/561Ա):
- «էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը ***թույլատրվել է դադարեցնել*** բանկի «Տիգրան Մեծ» մասնաճյուղի գործունեությունը (որոշում թիվ 1/562Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան և 4 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/540Ա, 1/582Ա, 1/583Ա, 1/584Ա,1/585Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել բանկերից ստացվող տվյալների որակը, օպտիմալացնել բանկերի հաշվետվական համակարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգը» հաստատելու մասին» թիվ 377-Ն որոշմամբ հաստատված Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
28 հունիսի 2017 թ., N 136-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի հունիսի 23-ի թիվ 136-Ն որոշմամբ

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման

ԲԱՆԿԵՐԻՑ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է հաշվետու բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև հաշվետու բանկի հետ ակտիվ կամ պարտավորություն առաջացնող գործարք իրականացրած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացնելու սկզբունքները:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հունիսի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.07.2017 թ. (ՀՀԳՏ N22 (591)[1] 19.07.2017):

2. Սույն կարգում ներկայացվում է «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ», «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» և «Ծանոթագրություն ֆինանսական վիճակի վերաբերյալ» հաշվետվությունների լրացման կարգը:

3. Հաշվետվություններում հաշվետու բանկի հաճախորդների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է ակտիվի կամ պարտավորության ծագման պահի դրությամբ առկա արժանահավատ տեղեկատվության հիման վրա, որը պետք է ճշգրտվի առնվազն հաշվետու բանկի՝ ակտիվների և պարտավորությունների գծով իրականացվող մոնիտորինգի պարբերականությանը համապատասխան:

4. Հաշվետվությունների այն սյունակներում, որտեղ պահանջվում է լրացնել ծավալային (ոչ տեքստային) տվյալներ, ապա

1) լրացվում է 0, եթե տվյալ հոդվածի գծով հաշվետվությունում պահանջվող այլ մնացորդների առկայության դեպքում տվյալ մնացորդը հավասար է զրոյի,
2) չի լրացվում, եթե տվյալ սյունակը տվյալ հոդվածի համար ենթակա չէ լրացման:

5. Հաշվետվություններում գումարները լրացվում են հազար դրամներով՝ կետից հետո երեք նիշի ճշտությամբ, իսկ տոկոսադրույքները լրացվում են կետից հետո երկու նիշի ճշտությամբ: Տեքստային եղանակով լրացվող տեղեկատվության մուտքագրումը իրականացվում է «Յունիկոդ» (Unicode) տառատեսակով:

6. Հաշվետվությունները ներկայացվում են Կենտրոնական բանկ մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն կարգում հաշվետու ժամանակահատվածը սահմանվում է մեկ ամիսը: Հաշվետվություններում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը:

7. Բանկերը պարտավոր են հաշվետվությունները ներկայացնել Իքս-էմ-էլ (այսուհետ՝ XML) ֆորմատով: Կենտրոնական բանկը մշակում և բանկերին է տրամադրում համապատասխան XML-սխեմա (Իքս-էս-Դի (այսուհետ՝ XSD) ֆայլ), որի հիման վրա բանկերը ձևավորում են հաշվետվության XML ֆայլը: XSD ֆայլերը պարունակելու են սույն կարգով հաստատված դաշտերի հնարավոր տարբերակների կոդերը և դրանց բացատրությունները:

8. XSD ֆայլերը հրապարակվում են Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: Սխեմաների ցանկացած փոփոխության դեպքում Կենտրոնական բանկը ավելացնում է դրանց նոր տարբերակները և նշում ամսաթիվը (ժամկետը), որից հետո (որի ընթացքում) հաշվետվությունները ընդունվելու են համաձայն նոր տարբերակի, ինչպես նաև՝ XSD ֆայլի տարբերակի համարը:

9. Բանկերը պարտավոր են XML ֆայլերը Կենտրոնական բանկ ներկայացնել վեբ-սերվիսների (web-service) միջոցով: Վեբ-սերվիսների տեխնիկական նկարագիրը ներկայացված է սույն կարգի հավելված 9-ում:

10. XML Ֆայլերը պետք է ունենան էլեկտրոնային ստորագրություն: Էլեկտրոնային ստորագրությունները բանկերին տրամադրվում են Կենտրոնական բանկի կողմից:

11. XML ֆայլերի անվանումը պետք է պարունակի միայն թվեր և չգերազանցի 16 նիշը, որից առաջին հինգը նիշը պետք է լինի բանկի կոդը, իսկ հաջորդ 6 նիշը հաշվետվության ամսաթիվը՝ օօաատտ (օր, ամիս, տարի):

12. Նույն ամսաթվով ներկայացված ամեն նոր հաշվետվություն պետք է ունենա ավելի բարձր տարբերակի (վեր-վեր (<ver></ver>)) համար, և ակտուալ է համարվում այդ պահին առկա ամենաբարձր տարբերակ ունեցող հաշվետվությունը:

13. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների նույնականացումը կատարվում է հրապարակված XSD ֆայլերի գործելու ժամանակահատվածի և համարի հիման վրա: Եթե ներկայացված են միևնույն հաշվետվության երկու XSD տարբերակներ, որոնց գործելու ժամանակահատվածը համընկնում է, ապա Կենտրոնական բանկն այդ ժամանակահատվածի սահմաններում ստեղծված մուտքային հաշվետվությունների համար նույնականացումը իրականացնում է տարբերակի ավելի բարձր համար ունեցող XSD սխեմայով:

14. Հաշվետվությունների սխալների տրամադրումն իրականացվում է web-service-ի միջոցով, այսինքն՝ հաշվետու սուբյեկտը հարցում է անում և ստանում հաշվետվության գծով տվյալ պահին բացահայտված սխալները:

15. Հաշվետվությունը 6-րդ կետում սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում գեներացվում է հիշեցում, որը բանկը կստանա հերթական հարցում կատարելիս՝ web-service-ի միջոցով:

16. Ներկայացվող XML-ները անցնում են ստուգման հետևյալ փուլերը՝

1) ֆայլի տեխնիկական հատկանիշների ստուգում,
2) ֆայլի էլեկտրոնային ստորագրության ստուգում,
3) նույնականացում հաշվետվության մեջ նշված ամսաթվին համապատասխանող XSD ֆայլի նկատմամբ,

4) կոշտ ստուգումներ. սրանք այն ստուգումներն են, որոնց արդյունքները միանշանակ են, սակայն հնարավոր չէ ներառել դրանք XSD-ի մեջ: Կոշտ ստուգումների ցանկը ներկայացված է սույն կարգի Հավելված 8-ում:

Սույն կետում նշված փուլերն իրականացվում են տեղում: Ստուգման արդյունքում սխալների հայտնաբերման դեպքում հաշվետվությունը կհամարվի ***չներկայացված,*** և հաշվետու բանկը պարտավոր է համապատասխան ճշգրտումներ կատարելուց հետո կրկին ներկայացնել հաշվետվությունը: Հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե դրանում սխալներ չեն հայտնաբերվում:

17. Մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող 20-րդ օրացուցային օրը Կենտրոնական բանկը իրականացնում է խաչաձև և այլ ստուգումներ, որոնց արդյունքում հայտնաբերված սխալները բանկը ստանում է web-service-ի միջոցով հարցում կատարելով: Այս սխալների վերաբերյալ հարցեր առաջանալու դեպքում Կենտրոնական բանկը կարող է web-service-ի միջոցով հաղորդագրություն ուղարկել, և բանկը պարտավոր է առնվազն երեք աշխատանքային օրվա ընթացքում արձագանքել դրանց:

18. Բանկի կողմից հաշվետվությունը սխալ ամսաթվով ներկայացնելու դեպքում այն մերժվում է համակարգի կողմից և համարվում է ***չներկայացված:***

19. Հաշվետվություններում մեկ տարին ընդունվում է տվյալ տարվա օրացուցային օրերի քանակով՝ 365 կամ 366 օր:

20. Հաշվետվություններում սահմանված միջակայքերի վերին սահմանները չեն ընդգրկվում տվյալ միջակայքերում (օրինակ՝ «1-ից 2 տարի» միջակայքում 2-րդ տարին չի ընդգրկվում), եթե հաջորդող միջակայքերի վերին և ստորին սահմանները համընկնում են:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. Սույն կարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***«Հաշվային պլան»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը»,
2) ***«Դասակարգման կարգ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ» և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը»,
3) ***«Լրացուցիչ պահուստավորման կարգ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մայիսի 29-ի թիվ 143Ա որոշմամբ հաստատված «Առանց ակտիվների դասակարգման լրացուցիչ պահուստավորում իրականացնելու կարգ»,
4) ***«Բանկի աշխատակից»***՝ հաշվետու բանկի հետ որոշակի կամ անորոշ ժամկետով կնքած պայմանագրով աշխատող անձ,
5) ***«Վարկանշային գործակալություն»***՝ Moody's Investors Service (Մուդիզ Ինվեստորս Սերվիս), Standard & Poor's (Ստանդարտ և Փուրզ), Fitch Ratings (Ֆիտչ Ռեյտինգս), A.M. Best (Ա.Մ. Բեստ) վարկանշային գործակալություններ,
6) ***«Առևտրային կազմակերպություն»***՝ շահույթ հետապնդող կազմակերպություն, որը գործում է սույն կարգի հավելված 2-ի 2-րդ կետի 1-10-րդ և 12-17-րդ ենթակետերում սահմանված բնագավառներում,
7) ***«Ենթահաշվետվություն»***՝ ակտիվների կամ պարտավորությունների որոշ տեսակները բնութագրող տվյալների համախումբ,
8) ***«Ակտիվ»***՝ հաշվային պլանի «Ակտիվներ» կարգում հաշվառվող ու *պահանջ հանդիսացող* ակտիվները (բացառությամբ՝ հաշվետու բանկի՝ իր մասնաճյուղերի նկատմամբ հաշվարկների), անհուսալի դասակարգված ակտիվները, բլանկային ակտիվները, ածանցյալ գործիքների գծով ապագայում ստացվելիք գումարները, հետհաշվեկշռային պայմանական ակտիվները և տրված ակտիվների գծերի չօգտագործված մասերը,

9) ***«Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք)»***՝ ակտիվի գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը, ներառյալ՝ տոկոսները, շահութաբաժինները, տույժերը և տուգանքները (առկայության դեպքում)՝ նվազեցրած չկրած ֆինանսական եկամուտները (առկայության դեպքում) և չնվազեցրած պահուստները,
10) ***«Պարտավորություն»***՝ հաշվային պլանի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող պարտավորությունները, ածանցյալ գործիքների գծով ապագայում վճարվելիք գումարները և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները (բացառությամբ՝ վարկային և միջոցների այլ գծերի),
11) ***«Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք)»***՝ պարտավորության գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը, ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները (առկայության դեպքում) ու նվազեցրած չկրած ֆինանսական ծախսերը (առկայության դեպքում),
12) ***«Երկարաժամկետ ստորադաս փոխառություն»***՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 2) հավելված 10-ով սահմանված նշանակության,
13) ***«Կրեդիտորական պարտք»***՝ հաշվեկշռային պարտավորությունների բոլոր տեսակները, որոնք սահմանված չեն «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում,
14) ***«Դեբիտորական պարտք»***՝ պահանջ հանդիսացող հաշվեկշռային ակտիվների բոլոր տեսակները, որոնք չեն ներկայացվում «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվության շրջանակներում,
15) ***«Վերականգնվող վարկային գիծ և օվերդրաֆտ»***՝ վարկային գիծ և օվերդրաֆտ, որի օգտագործված մասը մարվելու դեպքում պայմանագրով նախատեսվում է նույն չափով չօգտագործված մասի աճ,
16) ***«Չվերականգնվող վարկային գիծ և օվերդրաֆտ»***՝ վարկային գիծ և օվերդրաֆտ, որի օգտագործված մասը մարվելու դեպքում պայմանագրով չի նախատեսվում նույն չափով չօգտագործված մասի աճ,
17) ***«Այլ վարկային գիծ և օվերդրաֆտ»***՝ վարկային գիծ և օվերդրաֆտ, որին բնորոշ են սույն կետի ինչպես 15-րդ, այնպես էլ 16-րդ ենթակետերում նշված հատկանիշները:

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

22. «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվությունում՝ հաշվետու բանկի համար ակտիվ առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց (այսուհետ՝ գործընկեր), իսկ «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվությունում՝ հաշվետու բանկի համար պարտավորություն առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց (այսուհետ՝ գործընկեր) վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է համաձայն սույն կարգի 23-32-րդ կետերով սահմանված տարբերակների:

23. ***«Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»*** սյունակում լրացվում է գործընկերոջ տեսակը՝ սույն կարգի հավելված 1-ով սահմանված սկզբունքների հիման վրա: Սյունակում լրացվում է սույն կետի 1-22-րդ ենթակետերում նշված տարբերակներից մեկը, մասնավորապես.

1) «Կենտրոնական (հանրապետական) կառավարման մարմիններ»,
2) «Տեղական ինքնակառավարման մարմին»,
3) «Սոցիալական ապահովության պետական հիմնադրամ»,
4) «Կենտրոնական բանկ»,
5) «Բանկ»,
6) «Վարկային կազմակերպություն»,
7) «Ապահովագրական ընկերություն»,
8) «Կենսաթոշակային հիմնադրամ»,
9) «Ներդրումային ընկերություն»,
10) «Ներդրումային ֆոնդ»,
11) «Ներդրումային ֆոնդի կառավարիչ»,
12) «Վճարահաշվարկային կազմակերպություն»,
13) «Գրավատուն»,
14) «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ»,

15) «Կարգավորվող շուկա» (լրացվում է այն դեպքում, երբ կարգավորվող շուկայի տվյալ հարթակում գործում են տարբեր հատվածային պատկանելիություն ունեցող անձինք, և հնարավոր չէ որոշել գործընկերոջ հատվածային պատկանելիությունը),
16) «Այլ ֆինանսական կազմակերպություն»,
17) «Օժանդակ այլ ֆինանսական կազմակերպություն»,
18) «Ոչ ֆինանսական հատվածի կազմակերպություն»,
19) «Անհատ ձեռնարկատեր»,
20) «Այլ տնային տնտեսություն»,
21) «Տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններ»:

24. ***«Գործընկերոջ երկիրը»*** սյունակում լրացվում է՝
1) այն երկրի կոդը (համաձայն ԻՍՕ 3166-1 ալֆա-3 (ISO 3166-1 alpha-3) կոդերի), որի ռեզիդենտ է համարվում գործընկերը՝ համաձայն սույն կարգի հավելված 3-ով սահմանված չափանիշների,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը սույն կարգի հավելված 4-ով սահմանված չափանիշների համաձայն հանդիսանում է միջազգային կազմակերպություն,
3) եթե գործընկերը ֆինանսական կազմակերպություն է, որը գործարքը կատարել է իր մասնաճյուղի միջոցով, ապա սյունակում լրացվում է այն երկրի կոդը, որի ռեզիդենտ է համարվում տվյալ մասնաճյուղը:

25. ***«Գործընկերոջ իրավական կարգավիճակը»*** սյունակում լրացվում է՝
1) գործընկերոջ իրավական կարգավիճակը՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «իրավաբանական անձ», «ֆիզիկական անձ» կամ «անհատ ձեռնարկատեր»,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը սույն կետում նշված իրավական կարգավիճակներից որևէ մեկին չի համապատասխանում:

26. ***«Գործընկերոջ կողը»*** սյունակում լրացվում է՝
1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կոդը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերոջը Կենտրոնական բանկը չի տրամադրել կոդ կամ գործընկերը հանդիսանում է փոխանակման կետ, գրավատուն, արտարժույթի դիլեր-բրոքեր կամ արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձ:

27. ***«Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը»*** սյունակում լրացվում է՝
1) ֆինանսական կազմակերպության ՍՎԻՖԹ կոդը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը ՍՎԻՖԹ կոդ չունի կամ գործընկերը չի հանդիսանում ֆինանսական կազմակերպություն:

28. ***«Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»*** սյունակում լրացվում է՝
1) «կապված» տարբերակը, եթե գործընկերը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն հանդիսանում է բանկի հետ կապված անձ,
2) «կապված չէ» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում բանկի հետ կապված անձ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն:

29. ***«Գործընկերոջ մոտ պետական մասնակցությունը»*** սյունակում լրացվում է՝
1) «պետական» տարբերակը, եթե.
   ա. պետության բաժնեմասը տվյալ կազմակերպությունում գերազանցում է 50%-ը, կամ
   բ. պետությունն օրենսդրորեն օժտված է այդ կազմակերպությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ,
2) «ոչ պետական» տարբերակը, եթե ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործընկերը սույն կետի առաջին ենթակետում սահմանված պայմաններին չի համապատասխանում,
3) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը հանդիսանում է ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

30. ***«Գործընկերոջ մոտ օտարերկրյա մասնակցություն»*** սյունակում լրացվում է՝

1) «օտարերկրյա» տարբերակը, եթե.
   ա. ոչ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձի (իրավաբանական, ֆիզիկական կամ այլ անձ) բաժնեմասը գործընկեր կազմակերպությունում գերազանցում է 50%-ը, և (կամ)
   բ. ոչ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող անձը օրենսդրորեն օժտված է գործընկեր կազմակերպությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե սույն կետի 1)-ին ենթակետում սահմանված պայմանները չեն բավարարվում:

31. ***«Գործընկերոջ գործունեության նպատակը»*** սյունակում լրացվում է՝

1) «առևտրային» տարբերակը, եթե իրավաբանական անձի գործունեության նպատակը շահույթ ստանալն է,
2) «ոչ առևտրային» տարբերակը, եթե իրավաբանական անձը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում,
3) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը իրավաբանական անձ չի հանդիսանում:

32. ***«Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը»*** սյունակում լրացվում է «Moody's» («Մուդիզ»), «Standard and Poor's» («Ստանդարտ և Փուրզ»), «Fitch Ratings» («Ֆիտչ Ռեյտինգս»), «A.M. Best» («Ա.Մ. Բեստ»), «ԿԲ» կամ «չի կիրառվում» տարբերակը: Սյունակում լրացվում է՝

1) այն կազմակերպության համար սույն կետով սահմանված տարբերակը, որի կողմից տրված վարկանիշը լրացվել է «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը» կամ «Գործընկերոջ վարկանիշը» սյունակում,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը» կամ «Գործընկերոջ վարկանիշը» սյունակում լրացվել է «չի կիրառվում» տարբերակը:

33. Ի լրումն սույն կարգի 23-32-րդ կետերով սահմանված սյունակների՝ «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվությունում լրացվում են նաև 34-37-րդ կետերով սահմանված սյունակները:

34. ***«Գործընկերոջ՝ բանկի աշխատակից հանդիսանալը»*** սյունակում լրացվում է՝

1) «աշխատակից է» տարբերակը, եթե գործընկերը հանդիսանում է տվյալ բանկի աշխատակից,
2) «աշխատակից չէ» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում տվյալ բանկի աշխատակից
3) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ:

35. ***«Գործընկերոջ չափը»*** սյունակում լրացման համար ձեռնարկությունների դասակարգումը իրականացվում է սույն կարգի հավելված 5-ով սահմանված սկզբունքներին համապատասխան: Սյունակի լրացման տարբերակներն են՝

1) «գերփոքր»,
2) «փոքր»,
3) «միջին»,
4) «խոշոր»,
5) «չի կիրառվում» տարբերակը, եթե.
   ա. գործընկերը հանդիսանում է խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող անձ,
   բ. գործընկերը հանդիսանում է ոչ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և (կամ)
   գ. գործընկերը չի հանդիսանում առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

36. ***«Գործընկերոջ գործունեության մարզը»*** սյունակում լրացվում է՝

1) Հայաստանի Հանրապետության այն մարզի անվանումը, որտեղից ֆիզիկական անձ հանդիսացող գործընկերը ստանում է Հայաստանի Հանրապետությունում ձևավորվող իր եկամտի հիմնական մասը, իսկ անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն հանդիսացող գործընկերը՝ իր շահույթի հիմնական մասը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե
   ա. գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն, և (կամ)
   բ. գործընկերոջ եկամուտը (շահույթը) չի ձևավորվում Հայաստանի Հանրապետությունում:

37. ***«Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը»*** սյունակում լրացվում է՝

1) Վարկանշային գործակալության կամ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկանիշը՝ Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 4-րդ գլխով սահմանված սկզբունքներին համապատասխան, կամ
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը վարկանիշ է ստացել Վարկանշային գործակալությունից կամ Կենտրոնական բանկից տարբերվող կազմակերպության կողմից, կամ գործընկերը չի վարկանշվել:

38. Ի լրումն 23-32-րդ կետերով սահմանված սյունակների՝ «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվությունում լրացվում են նաև սույն կարգի 39-43-րդ կետերով սահմանված սյունակները:

39. ***«Արտասահմանյան ֆինանսական կազմակերպություն հանդիսացող գործընկերը»*** սյունակում լրացվում է՝

1) սույն կարգի հավելված 4-ով սահմանված չափանիշների համաձայն միջազգային կազմակերպություն և արտասահմանյան այլ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող գործընկերոջ անվանումը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն կամ արտասահմանյան այլ ֆինանսական կազմակերպություն:

40. ***«Գործընկերոջ գործունեության մարզը»*** սյունակում լրացվում է՝

1) Հայաստանի Հանրապետության այն մարզի անվանումը, որտեղ գրանցված է ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն հանդիսացող գործընկերը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն, կամ նշված անձինք գրանցված չեն Հայաստանի Հանրապետության տարածքում:

41. ***«Գործընկերոջ վարկանիշը»*** սյունակում լրացվում է՝

1) վարկանշային գործակալության կողմից տրամադրված թողարկողի երկարաժամկետ վարկանիշից (բացակայության դեպքում միայն՝ թողարկողի կարճաժամկետ վարկանիշից) և (կամ) Կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկանիշից ամենացածր վարկանիշը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը վարկանիշ է ստացել վարկանշային գործակալությունից և Կենտրոնական բանկից տարբերվող կազմակերպության կողմից կամ գործընկերը չի վարկանշվել:

42. ***«Խոշոր պարտատիրոջ անվանումը»*** սյունակում լրացվում է՝

1) այն պարտատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), որի անհատական պահանջները բանկի նկատմամբ հավասար են կամ գերազանցում են բանկի հաշվետու ամսվա միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը, կամ
2) փոխկապակցված անձանցից ամենամեծ պարտատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), եթե բանկն ունի իրար հետ փոխկապակցված մի քանի պարտատերեր, որոնց հանդեպ բանկի ունեցած պարտավորությունների ընդհանուր գումարը հավասար է կամ գերազանցում է բանկի հաշվետու ամսվա միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը,
3) «չի կիրառվում» տարբերակը, եթե անձի անվանումը, համաձայն սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, ենթակա չէ լրացման տվյալ սյունակում:

43. ***«Խոշոր պարտատիրոջ նույնականացման տվյալները»*** սյունակում լրացվում է՝

1) սույն կարգի 42-րդ կետի համաձայն ներկայացված անձի հարկային հաշվառման համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, ոչ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը, իսկ բացակայության դեպքում՝ տվյալ երկրում իրավաբանական անձանց նույնականացնող այլ տվյալ,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե սույն կարգի 26-րդ և 27-րդ կետերի պահանջների համաձայն նույնականացուցիչ տվյալները լրացվում են այդ կետերով սահմանված սյունակներում, կամ եթե սույն կարգի 42-րդ կետում լրացվել է «չի կիրառվում» տարբերակը:

44. Հաշվետվություններում կարգավորվող շուկաներում կնքված գործարքների ներկայացման դեպքում գործընկերների ներկայացման համար նախատեսված սյունակներում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը, եթե սյունակներում պահանջվող տեղեկատվությունը հաշվետու բանկին հասանելի չէ:

45. Հաշվետվություններում ռեպո համաձայնագրով վաճառված (փոխառությամբ տրամադրված) արժեթղթերի և ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի ներկայացման դեպքում «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը» սյունակում լրացվում է այն անձի վերաբերյալ տվյալը, որին վաճառվել (տրվել) կամ որից գնվել է արժեթուղթը, իսկ հաշվետվությունների այլ սյունակներում լրացվում են արժեթղթի թողարկողի վերաբերյալ տվյալները:

ԲԱԺԻՆ 2. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

46. ***«Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ»*** հաշվետվությունում (սույն գլխում այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է հաշվետու բանկի ակտիվների ու հաշվետու բանկի համար ակտիվ առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց (սույն բաժնում այսուհետ՝ գործընկեր) վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվությունը բաղկացած է հետևյալ ենթահաշվետվություններից՝

1) «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ,
2) «Դեբիտորական պարտքերի վերաբերյալ»,
3) «Ածանցյալ գործիքների վերաբերյալ»,
4) «Պայմանական ակտիվների և ստացված ֆինանսական գրավի վերաբերյալ»:

Հաշվետվությունում գործընկերների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է համաձայն սույն կարգի Գլուխ 3-ի:

ԳԼՈՒԽ 5. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

47. «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության սյունակները լրացվում են սույն կարգի 48-82-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

48. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է հաշվային պլանում ակտիվի հիմնական (մայր գումարի) գումարի հաշվառման համար նախատեսված հաշվի համարը (օրինակ՝ 15000, 15002): Այն դեպքում, երբ ակտիվի գծով միաժամանակ առկա են հիմնական (մայր) գումարի հաշվեկշռային և հետհաշվեկշռային մնացորդներ, ապա լրացվում է հաշվեկշռային հոդվածի հաշվառման համարը:

49. ***«Ակտիվի տեսակը»*** սյունակում սույն ենթահաշվետվության շրջանակներում ակտիվի տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) «թղթակցային հաշիվ»,
2) «թանկարժեք մետաղով թղթակցային հաշիվ»,
3) «վարկ»,
4) «փոխառություն»,
5) «վերականգնվող վարկային գիծ»,
6) «չվերականգնվող վարկային գիծ»,
7) «այլ վարկային գիծ»,
8) «վերականգնվող օվերդրաֆտ»,
9) «չվերականգնվող օվերդրաֆտ»,
10) «այլ օվերդրաֆտ»,
11) «օվերնայթ»,
12) «վարկային քարտերով տրամադրված վարկեր»,
13) «ավանդ»,
14) «ֆինանսական վարձակալություն»,
15) «ռեպո համաձայնագիր»,
16) «ֆակտորինգ»,
17) «երաշխիք»,
18) «երաշխավորություն»,
19) «ակրեդիտիվ»,

20) «երկարաժամկետ ստորադաս փոխառություն»,
21) «սովորական բաժնետոմս»,
22) «արտոնյալ բաժնետոմս»,
23) «այլ փայամասնակցություն»,
24) «տոկոսային պարտատոմս»,
25) «ոչ տոկոսային պարտատոմս»,
26) «ռեպո համաձայնագրով վաճառված արժեթուղթ»,
27) «փոխառությամբ տրամադրված արժեթուղթ»,
28) «այլ արժեթուղթ»,
29) այլ:

Սույն հաշվետվության համար նախատեսված լրացման կարգի համաձայն՝ դեպոնացված և սառեցված միջոցները հաշվետվությունում ներկայացվում են այն ակտիվի համար, որի մաս են կազմում այդ միջոցները, մասնավորապես՝ թղթակցային հաշվի մաս հանդիսացող, բայց հաշվեկշռում առանձին բացահայտվող դեպոնացված միջոցները ներկայացվում են թղթակցային հաշիվների համար նախատեսված տողերում՝ համաձայն սույն հաշվետվության լրացման կարգի (Օրինակ՝ հաշվի վրա առկա է 1000 միավոր, որից 200 միավորը սառեցված է):

50. ***«Միջազգային (զարգացման) վարկային ծրագրեր»*** սյունակում լրացվում է՝
1) սույն կարգի հավելված 6-ով սահմանված այն վարկային ծրագրի անվանումը, որի շրջանակում տրամադրվել է ակտիվը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվը որևէ միջազգային (զարգացման) ծրագրի շրջանակում չի տրամադրվել:

Այն դեպքում, երբ ակտիվը տրամադրվել է մի քանի վարկային ծրագրերի համաֆինանսավորմամբ, յուրաքանչյուր ծրագրի շրջանակում տրամադրված գումարը պետք է դիտել որպես առանձին ակտիվ:

51. ***«Վարկավորման բնագավառը»*** սյունակում լրացվում է՝
1) այն ճյուղը, որում օգտագործելու նպատակով տրամադրվել է ակտիվը՝ համաձայն սույն կարգի հավելված 2-ով սահմանված սկզբունքների: Բաժնային գործիքի համար՝ այն ճյուղը, որում գործունեություն է ծավալում բաժնային գործիք թողարկող կազմակերպությունը՝ համաձայն սույն կարգի հավելված 2-ով սահմանված սկզբունքների: Կենտրոնական բանկի հետ գործառնությունները ներկայացնելիս այս սյունակում լրացվում է «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» բաժնի «այլ ֆինանսական կազմակերպություններ» տարբերակը:
2) «չի կիրառվում» տարբերակը՝ Ֆիզիկական անձանց տրամադրված սպառողական և հիփոթեքային վարկերի դեպքում:

52. ***«Ակտիվի օգտագործման նպատակը»*** սյունակում նշվում է ակտիվի օգտագործման նպատակը: Մեկից ավելի նպատակների պարագայում նշվում է այն տարբերակը, որին ուղղված գումարը գերակշռում է: Սույն ենթահաշվետվության շրջանակներում ակտիվի օգտագործման ուղղությունը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝
1) անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեք,
2) անշարժ գույքի կապիտալ վերանորոգման հիփոթեք,
3) անշարժ գույքի շինարարության/կառուցապատման հիփոթեք,
4) անշարժ գույքի ձեռքբերում, վերանորոգում, շինարարություն (այն վարկերի համար, ներառյալ՝ ֆիզիկական անձանց՝ նշված նպատակներով, գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնելու համար տրամադրված), որոնք չեն որակվում որպես հիփոթեքային և չեն ընդգրկվում 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում),
5) ապառիկով ապրանքների (կահույքի, կենցաղային և համակարգչային տեխնիկայի, ջեռուցման կամ նմանատիպ այլ համակարգերի, այլ ապրանքներ) և ծառայությունների ձեռքբերման համար սպառողական (կարող է լրացվել միայն ֆիզիկական անձանց պարագայում),
6) ավտոմեքենայի և այլ փոխադրամիջոցների ձեռքբերում,
7) այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում, վերանորոգում և շինարարություն,
8) ընթացիկ սպառման նպատակով (կարող է լրացվել միայն ֆիզիկական անձանց պարագայում),
9) կրթության ֆինանսավորում (ուսման վարձերը մարելու, դասընթացների մասնակցության, քննությունների գրանցման և հանձնման նպատակով տրամադրված վարկերը՝ կարող է լրացվել միայն ֆիզիկական անձանց պարագայում),

10) ընթացիկ ակտիվների ձեռքբերում և վերաորոգում (կարող է լրացվել միայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պարագայում. ֆիզիկական անձանց պարագայում լրացվում է միայն այն դեպքում, երբ վերջիններս գործունեություն են իրականացնում գյուղատնտեսական ոլորտում),
11) պարտավորության մարում,
12) ներմուծման ֆինանսավորում (կարող է լրացվել միայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պարագայում),
13) արտահանման ֆինանսավորում (կարող է լրացվել միայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պարագայում),
14) ֆինանսական ներդրումների (բաժնային և պարտքային արժեթղթերի, բաժնեմասերի ձեռքբերման և ֆինանսական շուկայում այլ գործունեության իրականացման) ֆինանսավորում,
15) այլ նպատակ:

«Ակտիվի օգտագործման նպատակ» դաշտը չի լրացվում այն դեպքերում, երբ «Վարկավորման բնագավառը» սյունակում լրացվել է «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» կամ իրականացվել են ներդրումներ արժեթղթերում (օրինակ՝ պետական պարտատոմսերում, առևտրային կազմակերպության բաժնետոմսերում և այլն):

53. ***«Ակտիվի օգտագործման մարզը»*** սյունակում լրացվում է՝
1) Հայաստանի Հանրապետության այն մարզը, որում օգտագործվելու նպատակով ակտիվը (բացառությամբ՝ բաժնային գործիքի) տրամադրվել է ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ առևտրային կազմակերպությանը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե.
   ա. ակտիվը բաժնային գործիք է,
   բ. ակտիվը Հայաստանի Հանրապետությունում չի օգտագործվելու,
   գ. գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն,
3) «չի բացահայտվել» տարբերակը, եթե հաշվետու բանկը չի բացահայտել միջոցների օգտագործման մարզը,
4) Այն դեպքում, երբ միջոցը օգտագործվելու է մի քանի մարզերում, ապա բանկը լրացնում է այն մարզը, որում օգտագործվելու է ակտիվի մեծ մասը:

54. ***«Ակտիվի ապահովվածությունը»*** սյունակում՝ կախված ապահովվածության առկայության հանգամանքից, լրացվում է.
1) «ապահովված է»,
2) «ապահովված չէ»:

55. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է ակտիվի մայր գումարի արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի, իսկ առարկայազուրկ մետաղական հաշիվների ու արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածների ներկայացման համար սյունակում լրացվում են համապատասխանաբար «XMA» («ԷՔՍԷՄԷՅ») և «XAM» («ԷՔՍԷՅԷՄ») կոդերը:

56. ***«Տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի արժույթը»*** սյունակում լրացվում է՝
1) ակտիվի գծով հաշվեգրված տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի կամ «XMA» կոդը,
2) «չի կիրառվում», եթե ակտիվի գծով չի նախատեսվում տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի ստացում:

57. ***«Դասակարգումը»*** սյունակում լրացվում է.
1) «ստանդարտ»,
2) «հսկվող»,
3) «ոչ ստանդարտ»,
4) «կասկածելի»,
5) «ոչ ռիսկային»,
6) «ռիսկային»,
7) «միջին ռիսկային»,
8) «բարձր ռիսկային»,
9) «անհուսալի», եթե ակտիվը դուրս է գրվել հաշվեկշռից (բացառությամբ՝ բլանկային ակտիվի),

10) «չդասակարգվող» դասակարգման կարգի համաձայն՝ չի դասակարգվում (բացառությամբ՝ բլանկային ակտիվի),
11) «չդասակարգվող (բլանկային)»:

Տարբերակների ընտրության համար հիմք է հանդիսանում ակտիվների դասակարգման կարգը, բացառությամբ սույն կետի 10-րդ և 11-րդ ենթակետերի:

58. ***«Ռիսկի կշիռը»*** սյունակում լրացվում է «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի հավելված 3-ի համաձայն ակտիվի ստացած ռիսկի կշիռը (առանց ՎՌՁՄ ազդեցության):

59. ***«Ակտիվի պայմանագրային գումարը»*** սյունակում լրացվում է ակտիվի՝ պայմանագրով սահմանված սկզբնական գումարի մեծությունը՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «մինչև 500.000 դրամ»,
2) «500.000 - 3.000.000 դրամ»,
3) «3.000.001 - 5.000.000 դրամ»,
4) «5.000.001 - 7.000.000 դրամ»,
5) «7.000.001 - 10.000.000 դրամ»,
6) «10.000.001 - 15.000.000 դրամ»,
7) «15.000.001 դրամ և ավելի»:

Վարկային գծերի և ակտիվների այլ գծերի համար սյունակում լրացվում է բանկի կողմից սահմանված առավելագույն սահմանաչափը: Փուլային տրամադրված վարկերի ներկայացման համար սյունակում լրացվում է յուրաքանչյուր փուլի համար նախատեսված սկզբնական գումարի մեծությունը:

60. ***«Ակտիվի պայմանագրային ժամկետը»*** սյունակում լրացվում են ակտիվի պայմանագրային ժամկետները՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «ցպահանջ»,
2) «մինչև 30 օր»,
3) «31-ից 60 օր»,
4) «61-ից 90 օր»,
5) «91-ից 120 օր»,
6) «121-ից 150 օր»,
7) «151-ից 180 օր»,
8) «181 օրից 1 տարի»,
9) «1-ից 2 տարի»,
10) «2-ից 3 տարի»,
11) «3-ից 4 տարի»,
12) «4-ից 5 տարի»,
13) «5-ից 7 տարի»,
14) «7-ից 10 տարի»,
15) «10-ից 12 տարի»,
16) «12-ից 15 տարի»,
17) «15 տարուց ավելի»,
18) «անժամկետ»՝ եթե ակտիվը ցպահանջ չէ և չունի հստակ սահմանված մարման ժամկետ:

Տարբերակները ընտրվում են համաձայն ակտիվի սկզբնական պայմանագրի (ենթապայմանագրի) գործողության ժամկետի, իսկ պայմանագրային ժամկետի կրճատման դեպքում՝ համաձայն սահմանված նոր ժամկետի: Եթե ակտիվը տրամադրված է փոփոխվող կամ լողացող տոկոսադրույքով, համաձայն սույն կարգի 63-րդ կետի, այն լրացվում է ըստ տոկոսադրույքների վերանայմանը մնացած ժամկետների, այլ ոչ թե ակտիվի կամ պարտավորության մարմանը մնացած ժամկետների:

61. ***«Ակտիվի երկարաձգման ժամկետը»*** սյունակում լրացվում է ակտիվի պայմանագրային վերջնաժամկետի փաստացի երկարաձգման ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,

6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,
14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»,
17) «չի կիրառվում», եթե ակտիվը երկարաձգված չէ:

Մի քանի անգամ ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգելու դեպքում սյունակում լրացվում է ընդհանուր երկարաձգման ժամկետը: Օրինակ՝ եթե ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է 5 անգամ 40-ական օրերով, ապա սյունակում ընտրվում է «181 օրից 1 տարի» տարբերակը:

Եթե ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է նախքան մարման սկզբնական ժամկետի ավարտը, ապա երկարաձգման փաստացի ժամկետը հաշվարկվում է երկարաձգման պայմանագրին նախորդող պայմանագրի ժամկետի ավարտից սկսած:

62. ***«Ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո»*** սյունակում լրացվում է ակտիվի պայմանագրային վերջնաժամկետի և երկարաձգման ժամկետների հանրագումարի հիման վրա ձևավորված նոր պայմանագրային ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝
1) «մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,
6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,
14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»,
17) «չի կիրառվում», եթե ակտիվի պայմանագրային ժամկետը չի երկարաձգվել:

63. ***«Տոկոսադրույքի տեսակը»*** սյունակում լրացվում է՝
1) «անտոկոս» տարբերակը, եթե ակտիվը տեղաբաշխվել է առանց տոկոսների ստացման պայմանի,
2) «ֆիքսված» տարբերակը, եթե ակտիվը տեղաբաշխվել է ֆիքսված տոկոսադրույքով,
3) «փոփոխվող» տարբերակը, եթե.
   ա. ակտիվը տեղաբաշխվել է այնպիսի ֆիքսված տոկոսադրույքով, որը պայմանագրի համաձայն վերանայվելու է կամ կարող է վերանայվել, կամ
   բ. ակտիվի գծով տոկոսադրույքը սահմանվել է որպես փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում՝ փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա հաշվետու բանկը ուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ (օրինակ՝ բանկի հաշվարկային տոկոսադրույք՝ +2.5%),
4) «լողացող» տարբերակը, եթե տոկոսադրույքը սահմանվել է որպես շուկայական փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում՝ փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա հաշվետու բանկը ուղղակիորեն չի կարող ազդեցություն ունենալ (օրինակ՝ ԼԻԲՈՐ՝ +2.5%),
5) «լողացող-փոփոխվող» տարբերակը, եթե կիրառվող տոկոսադրույքը միաժամանակ բավարարում է սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված պայմաններին,
6) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվը բաժնային գործիք է:

64. ***«Տոկոսադրույքի փոփոխմանը մնացած ժամկետը»*** սյունակում լրացվում են ակտիվի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի վերանայմանը մնացած ժամկետները՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,
6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,
14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»,
18) «անորոշ ժամկետ»,
19) «չի կիրառվում», եթե ակտիվի գծով կիրառվող տոկոսադրույքի փոփոխության հնարավորություն պայմանագրով նախատեսված չէ:

65. ***«Լողացող/փոփոխվող տոկոսադրույքի ինդեքսը (դրույքը)»*** սյունակում լրացվում է՝

1) տոկոսադրույքի այն ինդեքսը (դրույքը), որը ընդգրկվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքի հիմքում (օրինակ՝ 1-ամսյա «ԼԻԲՈՐ», 3-ամսյա «ԼԻԲՈՐ», 3-ամսյա «ԼԻԲՈՐ»/բանկի հաշվարկային դրույք),
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվի գծով չի սահմանվել ինդեքս (դրույք):

66. ***«Անվանական տոկոսադրույքը/մասնաբաժինը»*** սյունակում լրացվում է՝

1) ակտիվի՝ պայմանագրով սահմանված անվանական տոկոսադրույքը կամ կազմակերպությունում բանկի մասնակցության չափը: Այն դեպքում, երբ միջոցը տեղաբաշխվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:
2) սյունակը չի լրացվում, եթե ակտիվը տեղաբաշխվել է առանց տոկոսների (բացառությամբ՝ զրոյական տոկոսադրույքի) ստացման պայմանի:

67. ***«Հետհաշվեկշռային հոդվածի տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում են՝

1) տրված ակտիվների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները,
2) սյունակը չի լրացվում, եթե տրված ակտիվների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ չի կիրառվում տոկոսադրույք կամ գործիքը չի հանդիսանում ակտիվի գիծ:

68. ***«Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը», «Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ գործընկերոջ տեսանկյունից (APRC)» և «Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ բանկի տեսանկյունից»*** սյունակներում լրացվում են ակտիվների համապատասխանաբար տարեկան արդյունավետ տոկոսադրույքը և գործընկերոջ տեսանկյունից բոլոր դրամական հոսքերը ներառող տարեկան փաստացի տոկոսադրույքը ***(APRC)***՝ հաշվարկված սույն կարգի հավելված 7-ով սահմանված կարգին համապատասխան, ու բանկի տեսանկյունից բոլոր դրամական հոսքերը ներառող տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

1) «Տարեկան արդյունավետ տոկոսադրույք» սյունակը չի լրացվում ցպահանջ և անժամկետ ակտիվների համար:
2) «Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ բանկի տեսանկյունից» սյունակը չի լրացվում ցպահանջ, անժամկետ և կանխատեսելի դրամական հոսքեր չունեցող ակտիվների համար:
3) «Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ գործընկերոջ տեսանկյունից (APRC)» սյունակը չի լրացվում հետևյալ դեպքերի համար.
   ա. բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ իրականացված գործարքների համար,
   բ. ցպահանջ և անժամկետ միջոցների համար:

4) Այն դեպքում, երբ միջոցը տեղաբաշխվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

69. ***«Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է ակտիվի մայր գումարի, հաշվեգրված անվանական տոկոսագումարների և ակտիվի գծով հաշվեգրված այլ գումարների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ մարմանը մնացած ժամկետների (աշխատող ակտիվների համար):

1) «Ժամկետային» չաշխատող ակտիվի գծով սույն կետով պահանջվող գումարների ակտիվի ժամկետում գտնվող մասը,
2) «Ժամկետանց» չաշխատող ակտիվի գծով սույն կետով պահանջվող գումարների ժամկետանց մասը
3) «մինչև 30 օր»,
4) «31-ից 60 օր»,
5) «61-ից 90 օր»,
6) «91-ից 120 օր»,
7) «121-ից 150 օր»,
8) «151-ից 180 օր»,
9) «181 օրից 1 տարի»,
10) «1-ից 2 տարի»,
11) «2-ից 3 տարի»,
12) «3-ից 4 տարի»,
13) «4-ից 5 տարի»,
14) «5-ից 7 տարի»,
15) «7-ից 10 տարի»,
16) «10-ից 12 տարի»,
17) «12-ից 15 տարի»,
18) «15 տարուց ավելի»:

Երկարաձգված ակտիվը ենթասյունակներում ներկայացվում է երկարաձգման պայմանագրով սահմանված մարման նոր ժամկետայնությամբ: Այն դեպքում, երբ ցպահանջ ակտիվը սառեցվել (դեպոնացվել, գրավադրվել) է որոշակի ժամկետով, ապա սառեցված (դեպոնացված, գրավադրված) մասը համարվում է ժամկետային միջոց և արտացոլվում է համապատասխան (պայմանագրով սահմանված սառեցման (դեպոնացման, գրավադրման) ժամկետով) ժամկետային ենթասյունակներում:

Ցպահանջ և անժամկետ գումարները ենթասյունակներում (բացառությամբ՝ «Ժամկետանց» ենթասյունակի) չեն արտացոլվում:

Անհուսալի դասակարգված ակտիվները ենթասյունակներում չեն արտացոլվում:

Բլանկային ակտիվները ենթասյունակներում լրացվում են համաձայն սույն կետով սահմանված սկզբունքների, եթե ըստ դասակարգման կարգի ակտիվը չի բավարարում անհուսալի ճանաչման չափանիշներին՝ վերջին դասակարգման օրվա դրությամբ կամ չեն լրացվում, եթե ըստ դասակարգման կարգի ակտիվը բավարարում է անհուսալի ճանաչման չափանիշներին՝ վերջին դասակարգման օրվա դրությամբ:

70. ***«Հնարավոր կորուստների պահուստը»*** սյունակում ներկայացվում է դասակարգման կարգի համաձայն ակտիվի (բացառությամբ՝ հետհաշվեկշռային հոդվածի) գծով ձևավորված հնարավոր կորուստների ընդհանուր կամ հատուկ պահուստի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

71. ***«Հնարավոր կորուստների պահուստը՝ հետհաշվեկշռային հոդվածի գծով»*** սյունակում լրացվում է ակտիվի գծի չօգտագործված մասի համար ձևավորված հնարավոր կորուստների ընդհանուր կամ հատուկ պահուստի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

72. ***«Լրացուցիչ պահուստը»*** սյունակում լրացվում է լրացուցիչ պահուստավորման կարգի համաձայն ակտիվների գծով ձևավորված լրացուցիչ պահուստը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

73. ***«Դեպոնացված և սառեցված միջոցների արժեքը»*** սյունակում լրացվում է ակտիվի այն մասի արժեքը, որը դեպոնացվել կամ սառեցվել է:

74. ***«Տոկոսագումարի/զեղչի/շահաբաժնի մնացորդը»*** սյունակում լրացվում է ակտիվի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի գծով հաշվեգրված և չվճարված մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

75. ***«Տույժի/տուգանքի մնացորդը»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվի գծով հաշվեգրված և չվճարված տույժերի ու տուգանքների մնացորդը:

76. ***«Ակտիվի մայր գումարի մնացորդը»*** սյունակում լրացվում է.

1) ակտիվի (այդ թվում՝ անհուսալի դասակարգված և բլանկային ակտիվների) մայր գումարի (հիմնական գումարի) մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ,
2) սյունակը չի լրացվում իրական արժեքով հաշվառվող հոդվածների համար:

77. ***«Կշռվող գումար»*** սյունակում լրացվում է.

1) ակտիվի մնացորդային գումարի այն մասը, որը կշարունակի կշռվել ակտիվի ռիսկի կշռով զսպման մեխանիզմների կիրառումից հետո (Օրինակ՝ 1000 միավոր մնացորդային արժեք և 100% ռիսկի կշիռ ունեցող ակտիվի դեպքում, որի 300 միավորը ապահովված է դրամական միջոցներով (0% ռիսկի կշիռ), իսկ 500 միավորը՝ երաշխիքով (50% ռիսկի կշիռ), տվյալ ակտիվի տողի սույն սյունակում կլրացվի միայն 200 միավոր (1000-300-500=200), այն գումարը, որը ծածկված չէ ապահովվածությամբ և կշարունակի կշռվել ակտիվի ռիսկի կշռով),
2) 0, եթե ակտիվը ամբողջովին ենթակա է ՎՌՁՄ ազդեցության (Օրինակ 1՝ 1000 միավոր մնացորդային արժեք և 100% ռիսկի կշիռ ունեցող ակտիվի դեպքում, որը ապահովված է դրամական միջոցներով 1200 միավորի չափով, տվյալ ակտիվի տողի սույն սյունակում կլրացվի 0: Օրինակ 2՝ 700 և 300 միավոր մնացորդային արժեքներ և համապատասխանաբար 100% և 50% ռիսկի կշիռ ունեցող ակտիվները ապահովված են մեկ ավանդով 1000 միավորի չափով: Յուրաքանչյուր ակտիվի տողի սույն սյունակում կլրացվի 0):

78. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը»*** սյունակում լրացվում են վարկային գծերի կամ ակտիվների այլ գծերի չօգտագործված մասերի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Այլ պայմանական պարտավորությունների գծով հաշվեգրված տոկոսագումարները լրացվում են «Դեբիտորական պարտքերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում՝ որպես «դեբիտորական այլ պարտք»՝ համաձայն տվյալ ենթահաշվետվության լրացման կարգի:

79. ***«Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը»*** սյունակում լրացվում է՝

1) ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ,
2) «0», եթե ակտիվը հանդիսանում է թղթակցային հաշիվ, որի համախառն հաշվեկշռային մնացորդը 0 է:

80. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում է անհուսալի դասակարգված ակտիվների, բլանկային ակտիվների, վարկային գծերի և այլ տրված ակտիվների գծերի՝ հետհաշվեկշռում գրանցված մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

81. ***«Անշարժ գույք հանդիսացող ապահովվածության արժեքը», «Ոսկյա իրեր հանդիսացող ապահովվածության արժեքը», «Ավտոմեքենա հանդիսացող ապահովվածության արժեքը», «Այլ շարժական գույք հանդիսացող ապահովվածության արժեքը», «Այլ ապահովվածության արժեքը»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում են որպես ակտիվի ապահովվածություն հանդիսացող անշարժ գույքի, շարժական գույքի և (կամ) այլ ապահովածության միջոցի արժեքը կամ միջոցների արժեքների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: ***«Այլ ապահովվածության արժեք»*** սյունակում լրացվում է ակտիվի ապահովածություն հանդիսացող երաշխիքների, արժեթղթերի և նմանատիպ այլ գործիքների գումարը, այդ թվում՝ ռեպո համաձայնագրի և ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի գծով ապահովվածության արժեքը:

1) Այն դեպքում, երբ միջոցը հանդիսանում է չհամախմբվող մի քանի ակտիվների ապահովվածություն, և ապահովվածության միջոցի հստակ տարանջատում ըստ ակտիվների առկա չէ, յուրաքանչյուր ակտիվի համար սյունակում լրացվում է ապահովվածության միջոցի՝ բանկի կողմից գնահատված տվյալ ակտիվին բաժին ընկնող արժեքը:
2) Այն դեպքում, երբ միջոցը ապահովված է դրամական հոսքերով կամ ապահովվածությունը բացակայում է, սյունակը չի լրացվում:

82. ***«Ակտիվների քանակը»*** սյունակում լրացվում է ակտիվների քանակը:

1) Սույն սյունակը արժեթղթերի համար չի լրացվում:
2) Համաֆինանսավորմամբ տրամադրված միջոցների դեպքում, որոնք հաշվետվությունում ներկայացվում են որպես առանձին ակտիվներ, սույն սյունակը լրացվում է միայն մեկ ակտիվի համար, իսկ մյուսների համար լրացվում է «0»:

83. Այն դեպքում, երբ գործընկերոջ վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև 48-67-րդ (նաև 68-րդ կետով սահմանված սյունակները չլրացնելու դեպքում) կետերում ներկայացված սյունակներում ակտիվների տվյալները համընկնում են, սույն հաշվետվության 69-82-րդ կետերում ներկայացված սյունակներում լրացվում են այդ ակտիվների՝ սյունակներում պահանջվող մասերի հանրագումարները: Սույն կարգի 66-68-րդ կետերով սահմանված սյունակներում տոկոսադրույքները լրացվում են հետևյալ բանաձևով.

$$Մտ = (Ա1*Տ1+Ա2*Տ2+ ... + Ամ*Տm) / (Ա1+Ա2+...+Ամ),$$

որտեղ՝

Ա-ն տրված միջոցների/ կազմակերպությունում բանկի մասնաբաժինների անվանական (մայր) գումարի մնացորդն է,

Տ-ը՝ տրված միջոցների տարեկան արդյունավետ տոկոսադրույքները/ կազմակերպությունում բանկի մասնաբաժնի չափը,

m-ը՝ տրված միջոցների քանակը:

ԳԼՈՒԽ 6. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

84. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները.

1) «Հաշվառման հաշվի համարը»,
2) «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»,
3) «Գործընկերոջ երկիրը»,
4) «Արտասահմանյան կազմակերպություն հանդիսացող գործընկերը»,
5) «Գործընկերոջ իրավական կարգավիճակը»,
6) «Գործընկերոջ կոդը»,
7) «Գործընկերոջ SWIFT կոդը»,
8) «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»,
9) «Ակտիվների տեսակը»,
10) «Ակտիվի պայմանագրային ժամկետը»,
11) «Մայր գումարի արժույթ»,
12) «Դասակարգում»,
13) «Հնարավոր կորուստների պահուստ»,
14) «Լրացուցիչ պահուստ»,
15) «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»,
16) «Սառեցված և դեպոնացված միջոցներ»,
17) «Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը»,
18) «Ռիսկի կշիռ»,
19) «Կշռվող գումար»,
20) «Ակտիվների քանակը»:

85. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Դասակարգում», «Հնարավոր կորուստների պահուստ», «Լրացուցիչ պահուստ», «Սառեցված և դեպոնացված միջոցներ», «Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը», «Ռիսկի կշիռ», «Կշռվող գումար», «Ակտիվների քանակը» սյունակները լրացվում են՝ համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում ներկայացված սկզբունքների:

86. Սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերների ներկայացման համար նախատեսված սյունակները (դրանց մի մասը) լրացվում են համաձայն սույն կարգի 3-րդ գլխով սահմանված պահանջների, եթե գործընկերը հանդիսանում է բանկի հաճախորդ կամ բանկը տիրապետում է գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին): Այն դեպքում, երբ գործընկերը չի հանդիսանում բանկի հաճախորդ և բանկը չի տիրապետում գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին), ապա սույն կետում նշված սյունակներում (դրանց մի մասում) լրացվում է «հաճախորդ չէ» տարբերակը:

87. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Ակտիվների տեսակը» և «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը» սյունակները լրացվում են սույն կարգի 88-89-րդ կետերի համաձայն:

88. ***«Ակտիվների տեսակը»*** սյունակում լրացվում է ակտիվի տեսակը՝ ըստ հետևյալ տարբերակների

1) «կանխավճար»,
2) «գերավճար»,
3) «ածանցյալ գործիքի իրական արժեք»,
4) «դեբիտորական այլ պարտք»:

89. ***«Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակը լրացվում է համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ ենթահաշվետվությունում սահմանված սկզբունքների, ընդ որում՝ սյունակում ծախսերով ձևակերպման ենթակա կանխավճարները չեն լրացվում:

90. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերոջ վերաբերյալ տվյալները, ինչպես նաև «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվների տեսակը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Դասակարգում» սյունակներում պահանջվող տվյալները համընկնում են, ապա «Հնարավոր կորուստների պահուստ», «Լրացուցիչ պահուստ», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը», «Ակտիվների քանակը» սյունակներում լրացվում են ակտիվների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 7. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

91. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները.

1) «Հաշվառման հաշվի համարը»,
2) «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»,
3) «Գործընկերոջ երկիրը»,
4) «Արտասահմանյան կազմակերպություն հանդիսացող գործընկերը»,
5) «Գործընկերոջ իրավական կարգավիճակը»,
6) «Գործընկերոջ կոդը»,
7) «Գործընկերոջ SWIFT կոդը»,
8) «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»,
9) «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը»,
10) «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը»,
11) «Ակտիվի տեսակը»,
12) «Մայր գումարի արժույթը»,
13) «Տոկոսադրույքի տեսակը»,
14) «Տոկոսագումարի արժույթը»,
15) «Անվանական տոկոսադրույքը,,
16) «Ակտիվի պայմանագրային ժամկետը»,
17) «Ակտիվի երկարաձգման ժամկետը»,
18) «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո»,
19) «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»,
20) «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը»,
21) «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»,
22) «Ռիսկի կշիռ»,
23) «Կշռվող գումար»,
24) «Ակտիվի քանակը»:

92. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Ակտիվի քանակը» սյունակները լրացվում են համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում ներկայացված սկզբունքների:

93. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Անվանական տոկոսադրույքը», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը» սյունակները լրացվում են սույն կարգի 94-102-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

94. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի գծով ապագայում ստացվելիք գումարների հաշվառման համար նախատեսված հաշվի համարը:

95. ***«Ակտիվի տեսակը»*** սյունակում ակտիվի տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) Ֆորվարդ
2) Ֆյուչերս
3) Օպցիոն
4) Արժութային սվոպ
5) Փոխարժեքային սվոպ
6) Այլ սվոպ:

96. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում ստացվելիք գումարների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:

97. ***«Տոկոսագումարի արժույթը»*** սյունակում լրացվում է՝

1) ածանցյալ գործիքների գծով ստացվելիք տոկոսների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե տվյալ ածանցյալ գործիքի գծով չի նախատեսվում տոկոսագումարի ստացում:

98. ***«Անվանական տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է՝

1) ածանցյալ գործիքի շրջանակներում տրված գումարների գծով կիրառվող տոկոսադրույքը,
2) սյունակը չի լրացվում, եթե ածանցյալ գործիքի գծով տոկոսադրույք սահմանված չէ:

99. ***«Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի գծով ստացվելիք գումարների գծով հետհաշվեկշռում գրանցված գումարը՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

100. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում ստացվելիք գումարները հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ առանց հաշվարկված տոկոսագումարների:

101. ***«Կշռվող գումար»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների (հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների) գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում ստացվելիք գումարի այն մասը, որը կշարունակի կշռվել ածանցյալ գործիքների ռիսկի կշռով, ճշտված ՎՈՓԳ-ով, զսպման մեխանիզմների կիրառումից հետո՝ նույն սկզբունքով, ինչպես ներկայացված է սույն կանոնակարգի 77-րդ կետում:

Այն դեպքերում, երբ գործիքը ենթակա է ՎՈՓԳ ազդեցության, այն ներկայացվում է տարբեր տողերով (ըստ ՎՈՓԳ-ների քանակի)՝ ՎՈՓԳ-ների ազդեցության համամասնությամբ: Նշված դեպքերում «Ակտիվների քանակը» սյունակում հավելյալ տողերի դիմաց լրացվում է «0»:

102. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը»*** սյունակում առանց զուտացման լրացվում են ածանցյալ գործիքի գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսագումարները՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ:

103. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերոջ վերաբերյալ տվյալները, ինչպես նաև «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսադրույքի տեսակը», «Տոկոսագումարի արժույթը», «Անվանական տոկոսադրույքը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո» սյունակներում ակտիվների տվյալները համընկնում են, ապա «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Ակտիվների քանակը» սյունակներում լրացվում են այդ սյունակներում պահանջվող տվյալների մնացորդների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 8. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

104. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները.

1) «Հաշվառման հաշվի համարը»,
2) «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»,

3) «Գործընկերոջ երկիրը»,
4) «Արտասահմանյան կազմակերպություն հանդիսացող գործընկերը»,
5) «Գործընկերոջ իրավական կարգավիճակը»,
6) «Գործընկերոջ կոդը»
7) «Գործընկերոջ SWIFT կոդը»,
8) «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»,
9) «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը»,
10) «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը»,
11) «Ակտիվի տեսակը»,
12) «Ակտիվի պայմանագրային ժամկետը»,
13) «Ակտիվի երկարաձգման ժամկետը»,
14) «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո»,
15) «Մայր գումարի արժույթը»,
16) «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»,
17) «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ»,
18) «Ռիսկի կշիռ»,
19) «Կշռվող գումար»,
20) «Ակտիվի քանակը»:

105. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Ակտիվի քանակը» սյունակները լրացվում են համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում ներկայացված սկզբունքների:

106. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը» սյունակները լրացվում են սույն կարգի 107-109-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

107. ***«Ակտիվի տեսակը»*** սյունակում լրացվում են պայմանական ակտիվները՝ ըստ հետևյալ տարբերակների՝
1) «ստացված երաշխիք»,
2) «ստացված երաշխավորություն»,
3) «ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթուղթ»,
4) «այլ պայմանական ակտիվ»,
5) «ստացված ֆինանսական գրավ»:

108. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային հոդվածի արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:

109. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ»*** սյունակում լրացվում է ստացված երաշխիքի, երաշխավորության, ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի կամ այլ պայմանական ակտիվի հետհաշվեկշռային մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

110. ***«Կշռվող գումար»*** սյունակում լրացվում է պայմանական ակտիվների և ստացված ֆինանսական գրավի (Կանոնակարգ 2-ով նախատեսված ՎՌՁՄ առարկա հանդիսացող հոդվածների գծով ռիսկերի զսպման համար օգտագործվող ֆինանսական գրավի) գծով հետհաշվեկշռում գրանցված գումարի այն մասը, որը մասնակցություն ունի ռիսկի զսպման մեխանիզմների կիրառման գործընթացին՝ ապահովվածության ռիսկի կշռով (Օրինակ 1՝ եթե ապահովվածության գումարը կազմում է 1500 միավոր, սակայն ՎՌՁՄ առարկա հոդվածը կազմում է 1000 միավոր, ապա համապատասխան տողի սույն սյունակում կլրացվի միայն 1000: Օրինակ 2՝ եթե ապահովվածության գումարը կազմում է 1500 միավոր, սակայն ՎՌՁՄ առարկա հոդվածը կազմում է 1500 միավորից ավելի գումար կամ այն ծածկում է մեկից ավելի ՎՌՁՄ առարկա հոդվածներ, որոնց ընդհանուր գումարը գերազանցում է 1500 միավորը, ապա համապատասխան տողի սույն սյունակում կլրացվի միայն 1500):

111. Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերը «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը» սյունակում լրացվում են ըստ արժեթղթերի մարմանը մնացած ժամկետների:

112. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերոջ վերաբերյալ տվյալները, ինչպես նաև «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի տեսակը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Մայր գու-

մարի արժույթը» սյունակներում ներկայացված տվյալները համընկնում են, ապա «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Ակտիվի քանակը» սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային մնացորդների հանրագումարները:

ԲԱԺԻՆ 3. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

113. ***«Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ»*** հաշվետվությունում (սույն գլխում այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է հաշվետու բանկի պարտավորությունների և հաշվետու բանկի համար պարտավորություն առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվություն: Այս հաշվետվությունում չեն ներկայացվում այն պարտավորությունները, որոնք ենթակա են եկամտագրման՝ համաձայն ՖՀՄՍ-ների (օրինակ՝ ակտիվներին վերաբերող շնորհները): Հաշվետվությունը բաղկացած է հետևյալ ենթահաշվետվություններից՝

1) «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ»,
2) «Կրեդիտորական պարտավորությունների վերաբերյալ»,
3) «Պայմանական պարտավորությունների վերաբերյալ»,
4) «Ածանցյալ գործիքների վերաբերյալ»:

Հաշվետվությունում գործընկերների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է համաձայն սույն կարգի Գլուխ 3-ով սահմանված սկզբունքների:

ԳԼՈՒԽ 10. ՎԱՐԿԱՅԻՆ (ԱՎԱՆԴԱՅԻՆ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

114. ***«Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ»*** ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության սյունակները լրացվում են սույն կարգի 115-142-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

115. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է հաշվային պլանում պարտավորության հիմնական գումարի հաշվառման համար նախատեսված հաշվի համարը (օրինակ՝ 32200, 32202): Այն դեպքում, երբ միաժամանակ առկա են հիմնական (մայր) գումարի հաշվեկշռային և հետհաշվեկշռային մնացորդներ, լրացվում է հաշվեկշռային հոդվածի հաշվառման համարը:

116. ***«Պարտավորության տեսակը»*** սյունակում լրացվում է պարտավորության տեսակը՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «թղթակցային հաշիվ»,
2) «թանկարժեք մետաղով հաշիվ»,
3) «թանկարժեք մետաղով թղթակցային հաշիվ»,
4) «բանկային հաշիվ»,
5) «վարկ»,
6) «վերականգնվող վարկային գիծ»,
7) «չվերականգնվող վարկային գիծ»,
8) «այլ վարկային գիծ»,
9) «օվերնայթ»,
10) «ավանդ»,
11) «ռեպո համաձայնագիր»,
12) «երկարաժամկետ ստորադաս փոխառություն»,
13) «փոխառություն»,
14) «ֆինանսական վարձակալություն»,
15) «արտոնյալ բաժնետոմս»,
16) «տոկոսային պարտատոմս»,
17) «ոչ տոկոսային պարտատոմս»,
18) «այլ արժեթուղթ»,
19) «այլ»:

117. ***«Միջազգային (զարգացման) վարկային ծրագրեր»*** սյունակում լրացվում է՝

1) սույն կարգի հավելված 6-ով սահմանված այն վարկային ծրագրի անվանումը, որի շրջանակում ներգրավվել է միջոցը,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե միջոցը որևէ միջազգային (զարգացման) վարկային ծրագրի շրջանակում չի ներգրավվել,
3) այն դեպքում, երբ միջոցը ներգրավվել է մի քանի վարկային ծրագրերի համաֆինանսավորմամբ, յուրաքանչյուր ծրագրի շրջանակում ներգրավված գումարը պետք է դիտել որպես առանձին պարտավորություն:

118. ***«Ֆինանսական միջոցների ներգրավման բնագավառը»*** սյունակում լրացվում է՝
1) այն բնագավառը, որում գործունեություն է ծավալում ֆիզիկական անձ չհանդիսացող գործընկերը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը հանդիսանում է ֆիզիկական անձ,
3) ֆիզիկական անձ չհանդիսացող գործընկերոջ գործունեության բնագավառի նկարագիրը ներկայացված է սույն կարգի հավելված 2-ի 2-րդ կետի 1-17-րդ ենթակետերում:
4) եթե գործընկերն ընդգրկված է գործունեության մի քանի բնագավառներում, ապա սյունակում ընտրվում է այն բնագավառը, որից հաշվետու բանկը ներգրավել է միջոցների ավելի մեծ ծավալ, քան գործընկերոջ գործունեության այլ բնագավառներից:

119. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է պարտավորության մայր գումարի արժույթը՝ համաձայն ISO 4217 կոդերի, իսկ առարկայազուրկ մետաղական հաշիվների ու արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածների ներկայացման համար սյունակում լրացվում են համապատասխանաբար «XMA» («ԷՔՍԷՄԷՅ») և «XAM»(«ԷՔՍԷՅԷՄ») կոդերը:

120. ***«Տոկոսագումարի արժույթը»*** սյունակում լրացվում է՝
1) պարտավորության գծով հաշվեգրված տոկոսագումարների արժույթը՝ համաձայն ISO 4217 կոդերի կամ «XMA» կոդը
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության գծով չի նախատեսվում տոկոսագումարների վճարում:

121. ***«Փոխարկվող պարտավորություն»*** սյունակում լրացվում է՝
1) «փոխարկվող» տարբերակը, եթե պարտավորության պայմանագրի համաձայն՝ հաշվետու բանկի պարտավորության արժույթը կարող է փոփոխվել,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության արժույթը ենթակա չէ փոփոխման:

122. ***«Պարտավորության պայմանագրային գումարը»*** սյունակում լրացվում է պարտավորության՝ պայմանագրով սահմանված սկզբնական գումարի մեծությունը՝ ըստ հետևյալ տարբերակների՝
1) «մինչև 500.000 դրամ»,
2) «500.000 - 3.000.000 դրամ»,
3) «3.000.001 - 5.000.000 դրամ»,
4) «5.000.001 - 7.000.000 դրամ»,
5) «7.000.001 - 10.000.000 դրամ»,
6) «10.000.001 - 15.000.000 դրամ»,
7) «15.000.001 դրամ և ավելի»:

Վարկային և այլ գծերի համար սյունակում լրացվում է տվյալ գործիքների համար սահմանված առավելագույն սահմանաչափը: Փուլային ստացված վարկերի ներկայացման համար սյունակում լրացվում է յուրաքանչյուր փուլի համար նախատեսված սկզբնական գումարի մեծությունը:

123. ***«Պարտավորության պայմանագրային ժամկետը»*** սյունակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝
1) «ցպահանջ»
2) «մինչև 30 օր»,
3) «31-ից 60 օր»,
4) «61-ից 90 օր»,
5) «91-ից 120 օր»,
6) «121-ից 150 օր»,
7) «151-ից 180 օր»,
8) «181 օրից 1 տարի»,
9) «1-ից 2 տարի»,
10) «2-ից 3 տարի»,
11) «3-ից 4 տարի»,

12) «4-ից 5 տարի»,
13) «5-ից 7 տարի»,
14) «7-ից 10 տարի»,
15) «10-ից 12 տարի»,
16) «12-ից 15 տարի»,
17) «15 տարուց ավելի»,
18) «անժամկետ»,
19) «XX/XX/XXXX» (օր/ամիս/տարի՝ միայն երկարաժամկետ ստորադաս փոխառությունների համար):

Տարբերակները ընտրվում են համաձայն պարտավորության սկզբնական պայմանագրի (ենթապայմանագրի) գործողության ժամկետի, իսկ պայմանագրի գործողության ժամկետի կրճատման դեպքում՝ համաձայն սահմանված նոր ժամկետի, բացառությամբ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների, որոնց համար սյունակում լրացվում է փոխառության փաստացի ստացման ամսաթիվը: Այն դեպքում, երբ պարտավորությունների գծով գործերը գտնվում են դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում, այդ պարտավորությունները համարվում են ցպահանջ: Այն դեպքում, երբ պարտավորությունը ցպահանջ չէ և չունի հստակ սահմանված մարման ժամկետ, այդ պարտավորությունը համարվում է անժամկետ:

124. ***«Պարտավորության երկարաձգման ժամկետը»*** սյունակում լրացվում է պարտավորության մարման վերջնաժամկետի փաստացի երկարաձգման ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,
6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,
14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»,
17) «չի կիրառվում»տարբերակը, եթե պարտավորությունը չի երկարաձգվել:

Մի քանի անգամ պարտավորության մարման ժամկետը երկարաձգելու դեպքում սյունակում լրացվում է ընդհանուր երկարաձգման ժամկետը:

125. ***«Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո»*** սյունակում լրացվում է պարտավորության պայմանագրային վերջնաժամկետի և երկարաձգման ժամկետների հանրագումարի հիման վրա ձևավորված նոր պայմանագրային ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,
6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,

14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»,
17) «XX/XX/XXXX» (օր/ամիս/տարի՝ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների համար՝ փոխառության մարման ամսաթիվը (ներառյալ՝ երկարաձգման ժամկետը (առկայության դեպքում)),
18) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության (բացառությամբ՝ երկարաժամկետ ստորադաս փոխառության) պայմանագրային ժամկետը չի երկարաձգվել:

126. ***«Տոկոսադրույքի տեսակը»*** սյունակում լրացվում է.
1) «անտոկոս» տարբերակը, եթե պարտավորությունը ձևավորվել է առանց տոկոսների վճարման պայմանի,
2) «ֆիքսված» տարբերակը, եթե ներգրավված միջոցների դիմաց իրականացվում է ֆիքսված տոկոսադրույքով վճարում,
3) «փոփոխվող» տարբերակը, եթե.
   ա. ներգրավված միջոցների դիմաց իրականացվում է վճարում ֆիքսված տոկոսադրույքով, որը պայմանագրի համաձայն վերանայվելու է կամ կարող է վերանայվել, կամ
   բ. ներգրավված միջոցների դիմաց սահմանվել է տոկոսադրույք՝ որպես փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում, փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա գործընկերը ուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ (օրինակ՝ բանկի հաշվարկային տոկոսադրույք՝ +2.5%),
4) «լողացող» տարբերակը, եթե ներգրավված միջոցների համար տոկոսադրույքը սահմանվել է որպես շուկայական փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում, փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա գործընկերը ուղղակիորեն չի կարող ազդեցություն ունենալ (օրինակ՝ ԼԻԲՈՐ՝ +2.5%),
5) «լողացող-փոփոխվող» տարբերակը, եթե կիրառվող տոկոսադրույքը միաժամանակ բավարարում է սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետով սահմանված պայմաններին:

127. ***«Տոկոսադրույքի փոփոխմանը մնացած ժամկետը»*** սյունակում լրացվում են պարտավորության գծով կիրառվող տոկոսադրույքի վերանայմանը մնացած ժամկետները՝ ըստ հետևյալ տարբերակների՝
1) «մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,
6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,
14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»,
17) «անորոշ ժամկետ»,
18) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության գծով կիրառվող տոկոսադրույքի փոփոխության հնարավորություն պայմանագրով նախատեսված չէ:

128. ***«Լողացող/փոփոխվող տոկոսադրույքի ինդեքսը (դրույքը)»*** սյունակում լրացվում է՝
1) տոկոսադրույքի այն ինդեքսը (դրույքը), որը ընդգրկվել է լողացող և (կամ) փոփոխվող տոկոսադրույքի հիմքում (օրինակ՝ 1-ամսյա «ԼԻԲՈՐ», 3-ամսյա «ԼԻԲՈՐ», հաշվարկային դրույք),
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության գծով չի սահմանվել ինդեքս (դրույք):

129. ***«Անվանական տոկոսադրույք»*** սյունակում լրացվում է՝
1) պարտավորության՝ պայմանագրով սահմանված անվանական տոկոսադրույքը,

2) սյունակը չի լրացվում, եթե միջոցը ներգրավվել է առանց տոկոսագումարների (բացառությամբ՝ զրոյական տոկոսադրույքի) տրման պայմանի:

Այն դեպքում, երբ միջոցը ներգրավվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

130. ***«Հետհաշվեկշռային հոդվածի տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում են՝

1) ստացված միջոցների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները,
2) չի լրացվում, եթե ստացված միջոցների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ տոկոսադրույք սահմանված չէ, կամ գործիքը չի հանդիսանում ստացված միջոցների գիծ:

131. ***«Տարեկան արդյունավետ տոկոսադրույք» և «Տարեկան արդյունավետ տոկոսադրույք՝ բանկի տեսանկյունից»*** սյունակներում լրացվում է՝

1) պարտավորության գծով հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը, որի հաշվարկման կարգը սահմանված է սույն կարգի հավելված 7-ում, և պարտավորության գծով բանկի տեսանկյունից բոլոր դրամական հոսքերը ներառող տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան,
2) սյունակը չի լրացվում ցպահանջ և անժամկետ միջոցների համար:

Այն դեպքում, երբ միջոցը ներգրավվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

132. ***«Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է պարտավորության մայր գումարի, հաշվեգրված տոկոսագումարների և պարտավորության գծով վճարվելիք այլ գումարների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

1) «Ժամկետային», պայմանագրով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունների այն մասով, որոնք գտնվում են ժամկետում,
2) «Ժամկետանց», պայմանագրով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունների այն մասով, որոնք ժամկետանց են,
3) «մինչև 30 օր»,
4) «31-ից 60 օր»,
5) «61-ից 90 օր»,
6) «91-ից 120 օր»,
7) «121-ից 150 օր»,
8) «151-ից 180 օր»,
9) «181 օրից 1 տարի»,
10) «1-ից 2 տարի»,
11) «2-ից 3 տարի»,
12) «3-ից 4 տարի»,
13) «4-ից 5 տարի»,
14) «5-ից 7 տարի»,
15) «7-ից 10 տարի»,
16) «10-ից 12 տարի»,
17) «12-ից 15 տարի»,
18) «15 տարուց ավելի»:

Երկարաձգված պարտավորությունը ենթասյունակներում ներկայացվում է երկարաձգման պայմանագրով սահմանված մարման նոր ժամկետայնությամբ:

Ենթասյունակներում ցպահանջ և անժամկետ գումարները չեն լրացվում (բացառությամբ՝ «Ժամկետանց» ենթասյունակի):

133. ***«Տոկոսագումարի մնացորդը»*** սյունակում լրացվում է պարտավորության գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ**:**

134. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը»*** սյունակում ներկայացվում են վարկային գծերի կամ միջոցների այլ գծերի չօգտագործված մասերի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարների մնացորդները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

135. ***«Տույժի/տուգանքի մնացորդը»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորության գծով հաշվեգրված և չվճարված տույժերի ու տուգանքների մնացորդը:

136. ***«Պարտավորության մայր գումարի մնացորդը»*** սյունակում լրացվում է պարտավորության մայր գումարի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ**:**

137. ***«Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ,
2) «0», եթե պարտավորությունը հանդիսանում է թղթակցային հաշիվ, որի համախառն հաշվեկշռային մնացորդը 0 է:

138. ***«Ընդհանուր կապիտալի հաշվարկում մասնակցող գումարը»*** սյունակում լրացվում է ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվող երկարաժամկետ ստորադաս փոխառության գումարը՝ համաձայն Կանոնակարգ 2-ի պահանջների:

139. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում վարկային գծերի և այլ ստացված միջոցների գծերի՝ հետհաշվեկշռում գրանցված մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

140. ***«Պարտավորությունների քանակը»*** սյունակում լրացվում է պարտավորությունների քանակը: Սյունակը չի լրացվում արժեթղթերի համար: Համաֆինանսավորման և/կամ համատեղ մասնակցությամբ ստացված միջոցների դեպքում, որոնք հաշվետվությունում ներկայացվում են որպես առանձին պարտավորություններ, սույն սյունակը լրացվում է միայն մեկ պարտավորության համար, իսկ մյուսների համար լրացվում է «0»:

141. ***«Խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պարտավորությունների մնացորդը»*** սյունակում լրացվում է սույն կարգի 42-րդ կետով սահմանված պարտատեր հանդիսացող անձանց հետ փոխկապակցված անձանց հանդեպ բանկի ունեցած պարտքի ընդհանուր գումարը: Այն դեպքում, երբ խոշոր պարտատիրոջ վերաբերյալ տեղեկատվությունը հաշվետվությունում ներկայացվում է մեկից ավելի անգամ, ապա սույն սյունակը լրացվում է միայն մեկ անգամ: Սույն կետում նշված փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը և նրանց նկատմամբ պարտավորությունները ներկայացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության համապատասխան սյունակներում՝ անկախ սույն սյունակում ներկայացվելու հանգամանքից:

142. Այն դեպքում, երբ գործընկերոջ վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը՝ սույն կարգի 115-130-րդ կետերում (նաև 131-րդ կետով սահմանված սյունակները չլրացնելու դեպքում) ներկայացված սյունակներում պարտավորությունների տվյալները համընկնում են, սույն հաշվետվության 132-140-րդ կետերում ներկայացված սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող մասերի հանրագումարները: 131-րդ կետով սահմանված սյունակներում արդյունավետ տոկոսադրույքները լրացվում են հետևյալ բանաձևով.

$$Մտ = (П1*S1+П2*S2+ ... + Пm*Sm) / (П1+П2+...+Пm),$$

որտեղ՝
П-ն ներգրավված միջոցների անվանական (մայր գումարի) մնացորդն է,
S-ը՝ ներգրավված միջոցների տարեկան արդյունավետ տոկոսադրույքները,
m-ը՝ ներգրավված միջոցների քանակը:

ԳԼՈՒԽ 11. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

143. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները.

1) «Հաշվառման հաշվի համարը»,
2) «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»,
3) «Գործընկերոջ երկիրը»,
4) «Արտասահմանյան կազմակերպություն հանդիսացող գործընկերը»,
5) «Խոշոր պարտատիրոջ անվանումը»,
6) «Խոշոր պարտատիրոջ նույնականացման տվյալները»,
7) «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»,
8) «Գործընկերոջ իրավական կարգավիճակը»,
9) «Պարտավորության տեսակը»,
10) «Պարտավորության պայմանագրային ժամկետը»,
11) «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»,
12) «Մայր գումարի արժույթ»,

13) «Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը»,
14) «Պարտավորության քանակը»,
15) «Խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պարտավորությունների մնացորդը»:

144. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Մայր գումարի արժույթ», «Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը», «Պարտավորության քանակը», «Խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պարտավորությունների մնացորդը» սյունակները լրացվում են համաձայն «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» հաշվետվությամբ սահմանված սկզբունքների:

145. Սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերների ներկայացման համար նախատեսված սյունակները (դրանց մի մասը) լրացվում են համաձայն սույն կարգում սահմանված պահանջների, եթե գործընկերը հանդիսանում է բանկի հաճախորդ, կամ բանկը տիրապետում է գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին): Այն դեպքում, երբ գործընկերը չի հանդիսանում բանկի հաճախորդ և բանկը չի տիրապետում գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին), սույն կետում նշված սյունակներում (դրանց մի մասում) լրացվում է «հաճախորդ չէ» տարբերակը:

146. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Պարտավորության տեսակը» սյունակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝
1) «Կրեդիտորական պարտք շահութահարկի գծով»,
2) «Կրեդիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով»,
3) «Կրեդիտորական պարտք այլ հարկերի և տուրքերի գծով»,
4) «Ածանցյալ գործիքի իրական արժեք»,
5) «Կրեդիտորական այլ պարտք»:

147. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվությունում ներկայացվող գործընկերոջ վերաբերյալ տվյալները, «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Պարտավորության տեսակը» սյունակներում պարտավորությունների տվյալները համընկնում են, «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը», «Պարտավորության քանակը» սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 12. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

148. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները՝
1) «Հաշվառման հաշվի համարը»,
2) «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»,
3) «Գործընկերոջ երկիրը»,
4) «Արտասահմանյան կազմակերպություն հանդիսացող գործընկերը»,
5) «Գործընկերոջ իրավական կարգավիճակը»,
6) «Գործընկերոջ կոդը»,
7) «Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը»,
8) «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»,
9) «Գործընկերոջ վարկանիշը»,
10) «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը»,
11) «Պարտավորության պայմանագրային ժամկետը»,
12) «Պարտավորության երկարաձգման ժամկետը»,
13) «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո»,
14) «Պարտավորության տեսակը»,
15) «Տոկոսադրույքի տեսակը»,
16) «Մայր գումարի արժույթը»,
17) «Տոկոսագումարի արժույթը»,
18) «Անվանական տոկոսադրույք»,

19) «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»,
20) «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»,
21) «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը»,
22) «Պարտավորության քանակը»:

149. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Պարտավորության քանակը» սյունակները լրացվում են համաձայն սույն կարգի «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում սահմանված սկզբունքների:

150. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը» սյունակները լրացվում են սույն կարգի 151-159-րդ կետերում սահմանված սկզբունքների համաձայն**:**

151. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով ապագայում վճարվելիք գումարների հաշվառման համար հաշվային պլանում նախատեսված հաշվի համարը*:*

152. ***«Պարտավորության տեսակը»*** սյունակում պարտավորության տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝
1) Ֆորվարդ,
2) Ֆյուչերս,
3) Օպցիոն,
4) Արժութային սվոպ,
5) Փոխարժեքային սվոպ,
6) Այլ սվոպ:

153. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում վճարվելիք գումարների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:

154. ***«Տոկոսագումարի արժույթը»*** սյունակում լրացվում է՝
1) ածանցյալ գործիքների գծով վճարվելիք տոկոսների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե տվյալ ածանցյալ գործիքի գծով տոկոսագումար չի նախատեսվում վճարել:

155. ***«Անվանական տոկոսադրույք»*** սյունակում լրացվում է՝
1) ածանցյալ գործիքի շրջանակներում ստացված գումարների գծով կիրառվող տոկոսադրույքը,
2) սյունակը չի լրացվում, եթե ածանցյալ գործիքի գծով տոկոսադրույք սահմանված չէ:

156. ***«Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի գծով վճարվելիք գումարների գծով հետհաշվեկշռում գրանցված գումարը՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

157. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը»*** սյունակում լրացվում են ածանցյալ գործիքների գծով հաշվարկված և հետհաշվեկշռում գրանցված վճարվելիք տոկոսագումարներն առանց զուտացման: Սյունակը չի լրացվում, եթե տվյալ ածանցյալ գործիքի գծով տոկոսագումար չի նախատեսվում վճարել:

158. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում են ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում վճարվելիք գումարները՝ առանց հաշվարկված տոկոսագումարների:

159. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվությունում ներկայացվող գործընկերոջ վերաբերյալ տվյալները, «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության տեսակը», «Տոկոսադրույքի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Անվանական տոկոսադրույք», «Պարտավորության մարմանը մնացած ժամկե-

տայնությունը» սյունակներում ներկայացված պարտավորությունների տվյալները համընկնում են, ապա «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը», «Պարտավորության քանակը» սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 13. ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

160. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ, հաշվետվության հետևյալ սյունակները՝

1) «Հաշվառման հաշվի համարը»,
2) «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»,
3) «Գործընկերոջ երկիրը»,
4) «Արտասահմանյան կազմակերպություն հանդիսացող գործընկերը»,
5) «Գործընկերոջ իրավական կարգավիճակը»,
6) «Գործընկերոջ կոդը»,
7) «Գործընկերոջ SWIFT կոդը»,
8) «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»,
9) «Գործընկերոջ վարկանիշը»,
10) «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը»,
11) «Պարտավորության տեսակը»,
12) «Պարտավորության պայմանագրային ժամկետը»,
13) «Պարտավորության երկարաձգման ժամկետը»,
14) «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո»,
15) «Տոկոսադրույքի տեսակը»,
16) «Անվանական տոկոսադրույք»,
17) «Մայր գումարի արժույթը»,
18) «Դասակարգումը»,
19) «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»,
20) «Հնարավոր կորուստների պահուստ»,
21) «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ»,
22) «Ռիսկի կշիռը»,
23) «Կշռվող գումարը»,
24) «Պարտավորության քանակը»:

161. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Անվանական տոկոսադրույք», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը» և «Պարտավորության քանակը» սյունակները լրացվում են համաձայն սույն կարգի «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում սահմանված սկզբունքների:

162. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Պարտավորության տեսակը», «Դասակարգումը», «Մայր գումարի արժույթը», «Հնարավոր կորուստների պահուստ» և «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ» սյունակները լրացվում են համաձայն սույն կարգի 163-170-րդ կետերով սահմանված սկզբունքների:

163. ***«Պարտավորության տեսակը»*** սյունակում պարտավորության տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) «տրված երաշխիք»,
2) «տրված երաշխավորություն»,
3) «տրված ակրեդիտիվ»
4) «Այլ պայմանական պարտավորություն»:

164. ***«Դասակարգումը»*** սյունակում լրացվում է վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածի դասը՝ համաձայն դասակարգման կարգի:

165. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային հոդվածի արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:

166. ***«Հնարավոր կորուստների պահուստ»*** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային հոդվածի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մնացորդը հաշվետու ժամանակահատվածի դրությամբ:

167. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում է տրված երաշխիքի, երաշխավորության, ակրեդիտիվի կամ այլ պայմանական պարտավորության հետհաշվեկշռային մնացորդը:

168. ***«Ռիսկի կշիռը»*** սյունակում լրացվում է «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի հավելված 3-ի համաձայն ակտիվի ստացած ռիսկի կշիռը: Այն դեպքերում, երբ հոդվածի նկատմամբ կիրառվում են վարկային ռիսկի փոխարկման գործոններ (ՎՌՓԳ), ռիսկի կշիռը ներկայացվում է ՎՌՓԳ ճշտմամբ:

169. ***«Կշռվող գումար»*** սյունակում լրացվում է պայմանական պարտավորության գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում վճարվելիք գումարի այն մասը, որը կշարունակի կշռվել պայմանական պարտավորության ռիսկի կշռով, ճշտված ՎՌՓԳ-ով, զսպման մեխանիզմների կիրառումից հետո՝ նույն սկզբունքով, ինչպես ներկայացված է սույն կանոնակարգի 77-րդ կետում:

Այն դեպքերում, երբ գործիքը ենթակա է ՎՌՓԳ ազդեցության, այն ներկայացվում է տարբեր տողերով (ըստ ՎՌՓԳ-ների քանակի)՝ ՎՌՓԳ-ների ազդեցության համամասնությամբ: Նշված դեպքերում «Ակտիվների քանակը» սյունակում հավելյալ տողերի դիմաց լրացվում է «0»:

170. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվությունում ներկայացվող գործընկերոջ վերաբերյալ տվյալները, «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության տեսակը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Անվանական տոկոսադրույք», «Մայր գումարի արժույթը», «Դասակարգումը» սյունակներում ներկայացված պարտավորությունների տվյալները համընկնում են, ապա «Հնարավոր կորուստների պահուստ», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Պարտավորության քանակը» սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԲԱԺԻՆ 4. ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

171. ***«Ճանոթագրություն ֆինանսական վիճակի վերաբերյալ»*** հաշվետվությունում (սույն գլխում այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է հաշվետու բանկի ակտիվները, պարտավորությունների, ինչպես նաև հետհաշվեկշռային հոդվածների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Ակտիվների և պարտավորությունների որոշ հոդվածներին կից ներկայացվում են էն-Վի (NV) կամ էն-Այ (NI) հապավումներով տողեր: «NV» հապավումով տողում ներկայացվում են տվյալ տողի հիմնական հոդվածում ընդգրկված տվյալ ակտիվի կամ պարտավորության մայր գումարը, իսկ «NI» հապավումով տողում՝ անվանական տոկոսադրույքով հաշվեգրված և դեռ չվճարված կամ չստացված տոկոսագումարը, ինչպես նաև տոկոսային արժեթղթերի զեղչով տրամադրման դեպքում՝ արժեթղթի պայմանների համաձայն հաշվեգրված և չվճարված կամ չստացված զեղչի գումարը:

Հնարավոր կորուստների պահուստներին վերաբերող հոդվածները ներկայացվում են կից Պի-Սի (PC), Պի-էս (PS), Պի-էյ (PA) տողերով հանդերձ: «PC» հապավումով տողում նշվում է հնարավոր կորուստների պահուստների՝ տվյալ տողում ներկայացված գումարի ընդհանուր պահուստի մասը, «PS» հապավումով տողում՝ հատուկ պահուստի մասը, «PA» հապավումով տողում՝ լրացուցիչ պահուստի մասը:

172. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է հաշվային պլանում հաշվառման համար նախատեսված հաշվի համարը (օրինակ՝ 12200, 32202):

Այն դեպքերում, երբ «Հաշվառման հաշվի համարը» սյունակում նշված հաշվի համարի ներքո ներառված են, սույն կարգի 173-րդ կետով սահմանված, տարբեր ռեզիդենտություն ունեցող անձինք (հոդվածներ) կամ դրանք արտահայտված են, սույն կարգի 173-րդ կետով սահմանված, մեկից ավելի արժույթներով, ապա լրացվում է մի քանի նույն հաշվառման հաշվի համարի տող՝ նույն համարի ներքո հաշվառվող անձանց (հոդվածների) ռեզիդենտության և արժույթների քանակին համապատասխան:

173. ***«Ռեզիդենտություն»*** սյունակում լրացվում է տվյալ տողում ընդգրկված անձանց (միավորների) ռեզիդենտությունը՝ համաձայն սույն կարգի հավելված 3-ով սահմանված չափանիշների՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «ռեզիդենտ»,
2) «ոչ ռեզիդենտ»:

174. ***«Արժույթը»*** սյունակում լրացվում է տվյալ տողում ընդգրկված միավորների արժույթը՝ համաձայն ISO 4217 կոդերի, իսկ առարկայազուրկ մետաղական հաշիվների ու արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածների ներկայացման համար սյունակում լրացվում են համապատասխանաբար «XMA» («ԷՔՍԷՄԷՅ») և «XAM» («ԷՔՍԷՅԷՄ») կոդերը:

175. ***«Արժեք/Մնացորդ»*** սյունակում լրացվում է տվյալ տողում ընդգրկված միավորների հաշվեկշռային արժեքը:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սույն հավելվածում ներկայացվում են պետական կառավարման միավորների (պետական հատված) և տնտեսվարող սուբյեկտների (մասնավոր հատված) տեսակները և բացահայտման սկզբունքները:

1. Պետական կառավարման միավորների մեջ ընդգրկվում են.
   - Կենտրոնական (հանրապետական) կառավարման մարմինները,
   - Տեղական ինքնակառավարման մարմինները,
   - Սոցիալական ապահովության պետական հիմնադրամը:
2. Տնտեսվարող սուբյեկտների մեջ ընդգրկվում են՝
   - ֆինանսական կազմակերպությունները,
   - ոչ ֆինանսական կազմակերպությունները,
   - տնային տնտեսությունները,
   - տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

1.1. Պետական կառավարման միավորներ

Պետական կառավարման միավորները յուրահատուկ իրավական միավորներ են, որոնց առաջնային խնդիրը պետական գործառույթների իրականացումն է: Այս միավորները իրականացնում են հետևյալ հիմնական գործառույթները. արտադրում և հասարակությանը կամ առանձին տնային տնտեսություններին տրամադրում են որոշակի ապրանքներ և ընդհանրական ծառայություններ, վերաբաշխում են հասարակության եկամուտները կամ հարստությունը, արտադրում են կամ մատուցում են ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ: Պետական կառավարման միավորները իրենց գործունեությունը ֆինանսավորում են տնտեսության այլ հատվածների ինստիտուցիոնալ միավորներից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված հարկերի կամ այլ վճարումների հաշվին:

- ***Կենտրոնական կառավարությունը*** բաղկացած է պետական կառավարման այն մարմիններից, որոնց իշխանությունը տարածվում է Հայաստանի ամբողջ տարածքի վրա, ինչպես նաև այդ մարմինների կողմից կառավարվող և ֆինանսավորվող շահույթ չհետապնդող կազմակերպություններից՝ ՊՈԱԿ-ներից: Ընդ որում, այստեղ ներառվում են այն շահույթ չհետապնդող ընկերությունները, որոնց գործառնական ծախսերի 50 և ավելի տոկոսը ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին:
  Օրինակ՝
  - «Նախագահի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
  - Հանրային գրադարան ՊՈԱԿ

- Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ (ՏԻԳ)
- Ավագ դպրոցներ

- ***Տեղական ինքնակառավարման մարմինների հատվածում*** ընդգրկվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սուբյեկտները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող և ֆինանսավորվող՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունները: Ընդ որում, այստեղ ներառվում են այն շահույթ չհետապնդող ընկերությունները, որոնց գործառնական ծախսերի 50 և ավելի տոկոսը ֆինանսավորվում է համայնքային բյուջեների հաշիվներից:
  Օրինակ՝
  - Համայնքների իշխանությունները
  - Երևանի թիվ 21 նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈՒՀ) ՊՈԱԿ
  - Երևանի թիվ 195 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Ֆինանսական հատված

Ֆինանսական հատվածն ընդգրկում է այն կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեությունը ֆինանսական միջնորդությունն է կամ ֆինանսական միջնորդությանը նպաստող ծառայությունների մատուցումը (օժանդակ ֆինանսական ծառայություններ): Ֆինանսական միջնորդությունը այնպիսի գործունեություն է, որի դեպքում սուբյեկտն իր անունից պարտավորություններ է ներգրավում՝ ֆինանսական շուկայում գործառնությունների միջոցով ֆինանսական ակտիվներ ձեռք բերելու նպատակով:

Այսպիսով՝ ֆինանսական հատվածը կարելի է բաժանել 2 խոշոր հատվածների.

- ֆինանսական միջնորդ կազմակերպություններ,
- օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

Միջնորդ ֆինանսական կազմակերպություններ են հանդիսանում, օրինակ՝

1. բանկերը
2. վարկային կազմակերպությունները
3. ներդրումային ծառայություններ մատուցող անձինք (ներդրումային ընկերությունները)
4. ապահովագրական ընկերությունները (այդ թվում նաև «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն»)
5. կենսաթոշակային հիմնադրամները
6. գրավատները
7. զարգացման բանկը (Համահայկական բանկ)

Օժանդակ ֆինանսական ծառայություն մատուցող կազմակերպություններ են հանդիսանում, օրինակ՝

1. բրոքերները, այդ թվում նաև ապահովագրական բրոքերները,
2. բորսան, օրինակ՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
3. դեպոզիտարիան, օրինակ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ
4. փոխանակման կետերը
5. վճարահաշվարկային կազմակերպությունները, այդ թվում՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ
6. «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեյթինգ» ՓԲԸ-ն
7. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը
8. ՀՀ Ավանդների երաշխավորման հիմնադրամը
9. Բանկերի միությունը, Ապահովագրական ընկերությունների միությունը:

1.2. Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատված

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են բոլոր այն ռեզիդենտ սուբյեկտները, որոնց հիմնական գործունեությունը շուկայական ապրանքների արտադրությունը և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումն է: Ոչ ֆինանսական հատվածում կազմակերպության ներառվելը կախված չէ տվյալ սուբյեկտի սեփականատերերի հատվածային պատկանելությունից: Ըստ սահմանման, այս հատվածում են ընդգրկվում նաև շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածը, ըստ սեփականատերերի բնույթի, տարանջատվում է երկու ենթահատվածների՝ պետական և մասնավոր: Ընդ որում, ձեռնարկությունը համարվում է պետական, եթե կառավարվում է պետության կողմից, հետևյալ երկու դեպքերում. պետության բաժնեմասը

տվյալ ձեռնարկությունում գերազանցում է 50%-ը կամ պետությունն օրենսդրորեն օժտված է այդ ձեռնարկությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ:

Ստորև ներկայացնում ենք մի շարք պետական ձեռնարկությունների օրինակներ:

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ
2. «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ
3. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
4. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
5. «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ
6. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ

1.3. Տնային տնտեսություններ

Տնային տնտեսությունների հատվածը ներառում է բոլոր տնային տնտեսությունները: Տնային տնտեսությունները ֆիզիկական անձինք կամ անձանց խմբեր են, որոնք.

- ապրում են համատեղ,
- ունեն ընդհանուր ռեսուրսներ, եկամուտներ և հարստություն,
- համատեղ սպառում են ապրանքներ և ծառայություններ,
- կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Այսպիսով՝ տնային տնտեսությունների շարքին են դասվում նաև այն ֆիզիկական անձինք, որոնք զբաղվում են ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ՝ սեփական սպառման կամ շուկայում իրացման նպատակով:

1.4. Տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններ

Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են ոչ առևտրային այն կազմակերպությունները, որոնք արտադրում են ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ, տրամադրում դրանք առանձին տնային տնտեսություններին կամ ամբողջ հասարակությանը՝ անհատույց կամ որոշակի ոչ շուկայական գներով: Այն կազմակերպությունները, որոնք ղեկավարվում և 50% և ավելին ֆինանսավորվում են պետական կառավարման մարմինների կողմից, այս հատվածում չեն ընդգրկվում, այլ ներառվում են պետական կառավարման հատվածում:

Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններից են՝ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական հիմնադրամները, եկեղեցիները և հավատքային կազմակերպությունները, պրոֆեսիոնալ և այլ տիպի միությունները (բացառությամբ ֆինանսական հատվածի), մշակութային կազմակերպությունները, որոշ կրթական և գիտահետազոտական կազմակերպություններ և այլն:

Օրինակ՝

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամ»
2. «Հայ առաքելական եկեղեցի»
3. «ԱԲԳ» հասարակական կազմակերպություն

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Սույն հավելվածում ներկայացվում է տնտեսական գործունեության ճյուղային դասակարգումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի թիվ

372-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» (այսուհետ՝ Դասակարգիչ) երկրորդ խմբագրության (NACE rev.2):

2. Տնտեսական գործունեության տեսակները հաշվետվություններում ներկայացվում են ըստ հետևյալ խմբերի.

1) ***Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն.*** Այս խումբն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը: Բաժինը ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքումը և կենդանիների որսը բնական միջավայրում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
   ա. բուսաբուծություն
   բ. անասնապահություն
   գ. անտառային տնտեսություն և փայտամթերումներ
   դ. ձկնորսություն և ձկնաբուծություն
   ե. A-00 այլ:
2) ***Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում.*** Այս խումբը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների և հանքանյութերի արդյունահանումը բոլոր եղանակներով: Այս խումբը տարանջատված է երկու ենթախմբերի՝ «մետաղական հանքաքարի արդյունահանում», որը համապատասխանում է Դասակարգչի երկրորդ խմբագրության 05 խմբում ներառվող գործունեության տեսակներին և «շինանյութերի արդյունահանում», որում ներառվում են դասակարգչի 08 խմբում նկարագրված գործունեության տեսակները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
   ա. մետաղական հանքաքարի արդյունահանում
   բ. շինանյութի արդյունահանում:
3) ***Մշակող արդյունաբերություն.*** Մշակող արդյունաբերության խմբում դասվող տնտեսական միավորներն իրականացնում են տնտեսության այլ ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքագործական արդյունաբերություն և այլն) կողմից արտադրվող արտադրանքի, նյութերի բաղադրիչների ձևափոխում, նորոգում, վերականգնում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
   ա. սննդի արդյունաբերություն
   բ. մսի մշակում և պահածոյացում
   գ. մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում
   դ. կաթնամթերքի արտադրություն
   ե. հացի և ալյուրե հրուշակեղենի արտադրություն
   զ. խմիչքների արդյունաբերություն
   է. ծխախոտի արդյունաբերություն
   ը. մանածագործական արտադրատեսակների և հագուստի արտադրություն
   թ. կաշվե արտադրատեսակների արտադրություն
   ժ. փայտանյութի, թղթի, փայտե և թղթե արտադրատեսակների արտադրություն (բացի կահույքից)
   ժա. պոլիգրաֆիական գործունեություն
   ժբ. քիմիական նյութերի արտադրություն
   ժգ. դեղագործական արտադրատեսակների արտադրություն
   ժդ. ռետինե և պլաստմասե արտադրատեսակների արտադրություն
   ժե. ոչ մետաղական արտադրատեսակների արտադրություն
   ժզ. հիմնային մետաղների արտադրություն
   ժէ. մետաղե պատրաստի արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորումներից
   ժը. համակարգիչների, էլեկտրոնային, օպտիկական և էլեկտրական սարքավորումների արտադրություն
   ժթ. կահույքի արտադրություն
   ի. մեքենաների և սարքավորումների նորոգում և տեղակայում
   իա. C-00 այլ:
4) ***Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում.*** Տվյալ խմբում ներառվում է էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը արդյունաբերական կազմակերպություններին և բնակելի զանգվածներին: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. էլեկտրաէներգիայի արտադրություն, փոխանցում և բաշխում,
բ. D-00 այլ:

5) ***Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում.*** Այս խումբը ներառում է ջրամատակարարումը, կոյուղու, ջրահեռացման պինդ և ոչ պինդ թափոնների հավաքման և վերամշակման հետ կապված գործունեությունը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակը՝
ա. ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում:

6) ***Շինարարություն.*** Այս խմբում ներառվում են նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման հետ կապված աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի և ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինհրապարակներում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
ա. բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն
բ. ճանապարհների և երկաթուղիների շինարարություն
գ. F-00 այլ:

7) ***Առևտուր.*** Այս խմբում ներառվում են ցանկացած ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուրը (ապրանքի վաճառք՝ առանց ձևափոխման) և ապրանքների վաճառքին բնորոշ ծառայությունների մատուցումը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
ա. ավտոմեքենաների, մոտոցիկլների և դրանց պահեստամասերի առևտուր և նորոգում
բ. մեծածախ առևտուր
գ. մանրածախ առևտուր

8) ***Փոխադրումներ և պահեստային տնտեսություն.*** Այս խումբը ներառում է մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցների գործունեությունը, խողովակաշարերով փոխադրումները, ուղևորների և բեռների տերմինալների շահագործումը, բեռների մշակումը, պահպանումը, ինչպես նաև փոստային ծառայությունները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
ա. տաքսի ծառայություններ
բ. ավտոճանապարհային բեռնափոխադրումներ և փոխադրման ծառայություններ
գ. օդային տրանսպորտի գործունեություն
դ. պահեստավորում և պահպանում
ե. H-00 այլ:

9) ***Կացության և հանրային սննդի կազմակերպում.*** Այս խումբը ներառում է կարճաժամկետ բնակության համար հաճախորդներին բնակատեղերի տրամադրման և/կամ տեղում սպառման նպատակով սննդամթերքի և խմիչքների պատրաստումը և վաճառքը (օրինակ՝ ռեստորաններ, սրճարաններ, հյուրանոցներ և այլն): Խմբում չեն ներառվում ամսական կամ տարեկան ժամկետներով բնակարանների վարձակալության տրամադրումը և կերակրատեսակների և խմիչքների պատրաստումը և վաճառքը, որոնք նախատեսված չեն տեղում սպառման համար: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
ա. հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ
բ. հանրային սննդի կազմակերպում
գ. I-00 այլ:

10) ***Տեղեկատվություն և կապ.*** Այս խումբը ներառում է տեղեկատվության փոխանցման հաղորդակցման ուղիների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի գործունեությունը, տվյալների կամ այլ տեղեկատվության մշակման ծառայությունները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝
ա. հրատարակչական գործ
բ. հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում
գ. հեռահաղորդակցություն
դ. համակարգչային ծրագրավորում և հարակից գործունեություն
ե. J-00 այլ:

11) ***Ֆինանսական և ապահովագրական գործունեություն.*** Այս խմբում ներառվում են առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը (վճարա-

հաշվարկային կազմակերպություններ, գրավատներ, արտարժույթի դիլերային-բրոքերային գործունեություն իրականացնողներ, այլ բրոքերային ու դիլերային գործունեություն իրականացնողներ, ապահովագրական միջնորդներ և այլն): Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. առևտրային բանկեր

բ. վարկային կազմակերպություններ

գ. ապահովագրական ընկերություններ

դ. ներդրումային ընկերություններ

ե. այլ ֆինանսական կազմակերպություններ:

12) ***Անշարժ գույքի հետ կապված գործունեություն.*** Այս խումբը ներառում է անշարժ գույքի առք ու վաճառքը, վարձակալության տրամադրումը, գնահատումը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. սեփականություն հանդիսացող անշարժ գույքի առք ու վաճառք

բ. L-00 այլ:

13) ***Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն.*** Այս խումբը ներառում է համապատասխան մասնագիտական որակավորման, գիտելիքների և հմտությունների օգնությամբ սպառողներին ծառայությունների մատուցումը, վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացումը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. իրավաբանական և հաշվապահական գործունեություն

բ. ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն

գ. գիտական հետազոտություններ և մշակումներ

դ. գովազդային գործունեություն

ե. M-00 այլ:

14) ***Կրթություն.*** Այս խումբը ներառում է տարբեր մակարդակների կրթություն և ցանկացած մասնագիտական ուսուցում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. բարձրագույն կրթություն

բ. P-00 այլ:

15) ***Առողջապահություն.*** Այս խումբը ներառում է առողջապահական բնագավառում գործունեությունը և ծառայությունների մատուցումը:

16) ***Մշակույթ, զվարճություն, հանգիստ.*** Այս խումբը ներառում է մշակույթի, սպորտի, հանգստի և զվարճությունների բնագավառում հասարակությանը մատուցվող ծառայությունները:

17) ***Տնտեսության այլ ճյուղեր.*** Այս խմբում արտացոլվում են տնտեսության այն ճյուղերը և գործունեության տեսակները, որոնք ներառված չեն սույն կետի 1-16 ենթակետերում ներկայացված խմբերում, ինչպես նաև Դասակարգչի երկրորդ խմբագրության 32.1 և 79 բաժիններում ընդգրկված գործունեության տեսակները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. ոսկերչական արտադրատեսակների և զարդերի արտադրություն

բ. զբոսաշրջություն

գ. S-00 այլ:

3. Վարկերի դասակարգումն ըստ գործունեության տեսակների անհրաժեշտ է իրականացնել՝ ելնելով վարկի օգտագործման նպատակից՝ հաշվի առնելով հետևյալը.

1) եթե վարկը վերցվում է հիմնական գործունեությունից տարբեր *համատեղվող* գործունեության ուղղությամբ ծախսվելու նպատակով, վարկի գումարն անհրաժեշտ է ներառել համատեղվող գործունեության տեսակի տողում,

2) եթե վարկը վերցվում է վարկառուի կողմից իրականացվող *օժանդակ* գործունեության ուղղությամբ ծախսվելու նպատակով, վարկի գումարն անհրաժեշտ է ներառել վարկառուի հիմնական գործունեության տեսակի տողում,

3) եթե վարկի ծախսման ուղղությունները մեկից ավելի են, և հնարավոր չէ գումարը բաշխել ըստ առանձին գործունեության տեսակների, վարկի գումարն անհրաժեշտ է ներառել վարկառուի հիմնական գործունեության տեսակի տողում,

4) *Հիմնական գործունեության տեսակ* է համարվում կազմակերպության կողմից իրականացվող գործունեության այն տեսակը, որի ավելացված արժեքը գերազանցում է կազմակերպության

շրջանակներում իրականացվող յուրաքանչյուր այլ գործունեության տեսակների ավելացված արժեքին և յուրացվում է կազմակերպությունից դուրս,

5) *Համատեղվող գործունեության տեսակ* է համարվում մեկ կազմակերպության շրջանակներում հիմնականից տարբեր իրականացվող գործունեությունը, որի արդյունքները նույնպես յուրացվում են կազմակերպությունից դուրս,
6) *Օժանդակ գործունեության տեսակ* է համարվում հիմնական գործունեությանը նպաստող կամ օժանդակող գործունեությունը, որի արդյունքները կազմակերպության շրջանակներից դուրս յուրացման ենթակա չեն:
7) ***Ավելացված արժեքը*** հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: ***Ընդ որում, թողարկումն*** իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը, իսկ ***միջանկյալ սպառումը*** կազմված է այն ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի ներառվում հիմնական կապիտալի սպառումը:
8) ***Ավելացված արժեքի միջոցով*** գործունեության տեսակները որոշելու անհնարինության դեպքում կարող է կիրառվել երկու մոտեցում՝
   ա. ստեղծված արդյունքի՝ թողարկման կամ հասույթի,
   բ. ծախսերի՝ աշխատավարձի, աշխատողների թվաքանակի և ծախսված աշխատաժամանակի հիման վրա:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1.	Հայաստանի Հանրապետությունում ունի մշտական բնակություն կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվում է 1 տարուց ավելի	☐
2.	Հայաստանի Հանրապետությունում բնակվում է 1 տարուց պակաս	☐
3.	Ունի սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունից դուրս, սակայն ծախսերի հիմնական մասը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում	☐
4.	Ունի սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունում, սակայն ծախսերի հիմնական մասն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունից դուրս	☐
5.	Ուսանում է կամ ***բուժման*** նպատակով գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, սակայն հանդիսանում է այլ երկրի քաղաքացի	☐
6.	Ուսանում է կամ ***բուժման*** նպատակով գտնվում է այլ երկրում, սակայն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:	☐

1. Գործընկերը ՀՀ ***ռեզիդենտ է*** համարվում, եթե համապատասխանում է սույն հավելվածի աղյուսակում սահմանված 1-ին, 3-րդ կամ 6-րդ չափանիշին, ընդ որում, այն դեպքերում, երբ 6-րդ չափանիշին համապատասխանող անձը համապատասխանում է նաև 2-րդ կամ 4-րդ չափանիշներին, անձի ռեզիդենտությունը որոշվում է 6-րդ չափանիշի հիման վրա:
2. Գործընկերը ***ոչ*** ՀՀ ***ռեզիդենտ է*** համարվում, եթե համապատասխանում է սույն հավելվածի աղյուսակում սահմանված 2-րդ, 4-րդ կամ 5-րդ չափանիշին, ընդ որում, այն դեպքերում, երբ 5-րդ չափանիշին

համապատասխանող անձը համապատասխանում է նաև 1-ին կամ 3-րդ չափանիշներին, անձի ռեզիդենտությունը որոշվում է 5-րդ չափանիշի հիման վրա:

3. Սույն հավելվածի աղյուսակում սահմանված չափանիշների հիման վրա որոշվում է միայն ֆիզիկական անձ հանդիսացող գործընկերոջ ռեզիդենտությունը: Ընդ որում, աղյուսակում սահմանված չափանիշները կիրառվում են նաև այլ երկրների ռեզիդենտների բացահայտման համար:
4. Ֆիզիկական անձ չհանդիսացող գործընկերների համար ռեզիդենտությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2007 թվականի հունվարի 11-ի թիվ 1/12Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկով» (2-րդ բաժին «Տնտեսության հատվածների նկարագիրը») սահմանված չափանիշների համաձայն:

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Սույն հավելվածի իմաստով՝ ***միջազգային կազմակերպություն է*** համարվում անդամ երկրների իշխանությունների և/կամ այլ միջազգային կազմակերպությունների ղեկավար անձանց միջև կնքված պաշտոնական համաձայնագրի հիման վրա գործող կազմակերպությունը, որի գոյությունը ճանաչվում է անդամ երկրների օրենսդրությամբ, և նշված պաշտոնական համաձայնագիրը հանդիսանում է միջազգային կազմակերպության կանոնադրությունը: ***Միջազգային կազմակերպությունը*** հանդիսանում է միջազգային իրավաբանական անձ և ենթակա է կարգավորման միջազգային օրենսդրությամբ:

2. Միջազգային կազմակերպությունները բաժանվում են երկու խմբի.
   1) ***Միջազգային ֆինանսական կազմակերպություններ,*** որոնք իրականացնում են ֆինանսական միջնորդություն միջազգային մակարդակով, այսինքն՝ իրականացնում են միջոցների վերաբաշխում տարբեր տնտեսությունների վարկատուների և վարկառուների միջև (օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկի խմբի անդամ կազմակերպությունները, Ասիական զարգացման բանկը և այլն),
   2) ***Այլ միջազգային կազմակերպություններ,*** որոնք տրամադրում են ոչ շուկայական բնույթի հասարակական ծառայություններ անդամ երկրներին, օրինակ՝ խաղաղապահության, կրթության, գիտության, տարատեսակ հետազոտությունների ոլորտներում (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն):

3. Միջազգային ֆինանսական կազմակերպությունները կարող են լինել տարածաշրջանային (օրինակ՝ Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ) կամ համաշխարհային (օրինակ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան):

4. Ի հակադրություն միջազգային կազմակերպության՝ երկու և ավելի երկրների կառավարությունների սեփականության տակ գտնվող առևտրային ընկերությունը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն: Միջազգային կազմակերպություն չի համարվում նաև միջազգային ֆինանսական ծառայություններ կամ օժանդակություն մատուցող կազմակերպությունը, որի միակ կամ հիմնական բաժնետեր է հանդիսանում մեկ երկրի կառավարությունը (օրինակ՝ kfW):

5. Ստորև ներկայացվում է նաև առավել հայտնի միջազգային ֆինանսական կազմակերպությունների ոչ ամբողջական ցանկը, իսկ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը պետք է իրականացվի վերը նշված չափանիշների հիման վրա:

Սույն կարգի իմաստով միջազգային ֆինանսական կազմակերպություններ են հանդիսանում ստորև նշվածները.

1) African Development Bank
2) Asian Development Bank
3) Bank of International Settlements (BIS)
4) Black Sea Trade and Development Bank (BSTDB)
5) Caribbean Development Bank (CDB)

6) Central American Bank of Economic Integration (CABEI)
7) Corporation Andina de Fomento (CAF)
8) East African Development Bank (EADB)
9) European Bank for Reconstruction and Development (EBRD)
10) European Commission (EC)
11) European Investment Bank (EIB)
12) Inter-American Development Bank
13) International Fund for Agricultural Development (IFAD)
14) International Monetary Fund (IMF)
15) Islamic Development Bank (IDB)
16) Nordic Development Fund (NDF)
17) Nordic Investment Bank (NIB)
18) OPEC Fund for International Development (OPEC Fund)
19) Organization for Economic Co-operation and Development (OECD)
20) Organization of Petroleum-Exporting Countries (OPEC)
21) West African Development Bank (BOAD)
22) World Bank Group
23) International Bank for Reconstruction and Development (IBRD)
24) International Development Association (IDA)
25) International Finance Corporation (IFC)
26) Multinational Investment Guarantee Agency (MIGA)
27) International Centre for Settlement of Investment Disputes (ICSID)

Արտասահմանյան ֆինանսական կազմակերպություն են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնք, չհանդիսանալով միջազգային ֆինանսական կազմակերպություն, իրականացնում են որոշակի զարգացման ծրագրերի ֆինանսավորում:

Սույն կարգի իմաստով արտասահմանյան այլ ֆինանսական կազմակերպություններ են հանդիսանում ստորև նշվածները.

1) Blueorchard microfinance fund
2) CommerzBank
3) Deutsche Investitions und Entwicklungsgesellschaft
4) European fund for southeast euroupe
5) Nederlandse financierings-maatschappij voor ontwikkelingslanden n.v.
6) Green for Growth Fund
7) Millenium Challenge Coproration
8) Oesterreichische Entwicklungsbank

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

Ձեռնարկությունների դասակարգումը՝ ըստ չափերի

1. Սույն կարգի շրջանակներում ձեռնարկությունները ըստ չափի բաժանվում են հետևյալ խմբերի.
   1) Գերփոքր
   2) Փոքր
   3) Միջին
   4) Խոշոր
2. ***Գերփոքր ձեռնարկություն*** է համարվում այն ՀՀ ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է *մինչև 10 մարդ* ներառյալ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված

հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը:

3. ***Փոքր ձեռնարկություն*** է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է *մինչև 50 մարդ* ներառյալ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը:

4. ***Միջին ձեռնարկություն*** է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է *մինչև 250 մարդ ներառյալ*, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

5. ***Խոշոր ձեռնարկություն*** է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը գերազանցում է 250 մարդը և (կամ) նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

6. Ձեռնարկությունները ըստ չափի դասակարգման ժամանակ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար հիմք է ընդունվում նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը, իսկ արդյունաբերական և այլ արտադրական ոլորտում գործող կազմակերպությունների համար՝ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

7. Աշխատողների միջին ցուցակային թվաքանակի որոշման համար հիմք է ընդունվում նախորդ տարեվերջի դրությամբ աշխատողների թվաքանակը:

8. Այն դեպքում, երբ կազմակերպությունն իր գործունեությունը սկսել է տվյալ տարում, ապա ըստ չափի դասակարգման համար բանկը հիմք է ընդունում վարկի տրամադրման պահի դրությամբ առկա տեղեկատվությունը:

9. Դասակարգման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվում է հաճախորդից բանկի կողմից սահմանված՝ տեղեկատվության հավաքագրման և պահպանման սկզբունքների համաձայն:

10. Այն դեպքում, երբ կազմակերպությունը մատուցում է ծառայություններ և միաժամանակ գործում է արդյունաբերական և/կամ այլ արտադրական ոլորտում, բանկը գնահատում է ծառայությունների ոլորտի և արտադրական ոլորտների կշիռները՝ ըստ շրջանառության ծավալների և դասակարգում ըստ չափի՝ հաշվի առնելով ամենամեծ կշիռ ունեցող ոլորտը:

Ձեռնարկության չափը	Աշխատողների քանակը	Ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ արտադրական կամ արդյունաբերական ձեռնարկությունների համար	Հասույթը՝ ծառայությունների ոլորտի ձեռնարկությունների համար
Գերփոքր	≤ 10	≤ 100 մլն	≤ 100 մլն
Փոքր	≤ 50	≤ 500 մլն	≤ 500 մլն
Միջին	≤ 250	≤ 1000 մլն	≤ 1500 մլն
Խոշոր	> 250	> 1000 մլն	> 1500 մլն

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

Միջազգային վարկային ծրագրերի ցանկ

Ծրագրի անվանումը	
ADB/TFP/RCA	Ասիական զարգացման բանկի Առևտրի խթանման ծրագրի վերականգնվող վարկային համաձայնագիր
ADB/TFP/IBA	Ասիական զարգացման բանկի Առևտրի խթանման ծրագիր Issuing bank Agreement
ADB/WESSD	Ասիական զարգացման բանկի Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման ծրագիր
AtlanticAG/EXPIMP	Ատլանտիկ Ֆորֆեյտինգ էյՋի ներմուծման/արտահանման վարկավորման ծրագիր
BS/SME1	Սևծովյան առևտրի և զարգացման բանկի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման առաջին ծրագիր
BS/SME2	Սևծովյան առևտրի և զարգացման բանկի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման երկրորդ ծրագիր
BlueOrchard/MSE	ԲլուՕրչարդ Գլոբալ միկրոֆինանսավորման հիմնադրամի Միկրո և փոքր ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
BlueOrchard/SME	ԲլուՕրչարդ Գլոբալ միկրոֆինանսավորման հիմնադրամի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
COM/SME	Կոմերց բանկի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
DEG/SME	Գերմանական զարգացման բանկի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
EBRD/ MORTGAGE	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Հիփոթեքային վարկավորման ծրագիր
EBRD/CEEP	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ) - Կովկասյան էներգաարդյունավետության ծրագիր
EBRD/COF	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Համաֆինանսավորման ծրագիր
EBRD/MC	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Միկրովարկավորման ծրագիր
EBRD/MSME	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
EBRD/SL1	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Սինդիկացված վարկի առաջին ծրագիր
EBRD/SL2	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Սինդիկացված վարկի երկրորդ ծրագիր
EBRD/TFP/RCA	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Առևտրի խթանման ծրագիր Revolving Credit Agreement
EBRD/TFP/IBA	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Առևտրի խթանման ծրագիր Issuing Bank Agreement
EDB/SME	Եվրասիական զարգացման բանկի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
EFSE/SME	Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
EIB/APEX	Եվրոպական ներդրումային բանկ
FMO/SME	Հոլանդական զարգացման բանկի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
GAF/ ADB/ AGRO	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Կանանց ՓՄՁ ոլորտի զարգացման ծրագիր
GAF/ GOV/ ECSTAB	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ ՀՀ Կառավարության կողմից Տնտեսության կայունացման վարկավորման ծրագիր
GAF/ KfW /ENERGY	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող Վերականգնվող էներգիայի աջակցման ծրագիր
GAF/ KfW/ AGRO	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող Գյուղատնտեսության ոլորտի աջակցման ծրագիր
GAF/GOV/SME	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ ՀՀ Կառավարության կողմից ֆինանսավորվող ՓՄՁ ոլորտի աջակցման ծրագիր
GAF/KfW/ MORTGAGE	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման ծրագիր
GAF/KfW/SME	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող ՓՄՁ ոլորտի աջակցման ծրագիր

GAF/WB/SME	Գերմանա-հայկական հիմնադրամի՝ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՓՄՁ համար ֆինանսական միջոցների հասանելիության ծրագիր
GGF/EE	«Կանաչ աճ» հիմնադրամի էներգաարդյունավետության ծրագիր
IFAD	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
IFC/SME1	Միջազգային ֆինանսական կորպորացիայի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման առաջին ծրագիր
IFC/TFP	Միջազգային ֆինանսական կորպորացիայի Առևտրի խթանման ծրագիր
IFC/CCCP	Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Կանադայի կլիմայական փոփոխությունների ծրագիր
IOM	Միգրացիայի միջազգային կազմակերպության ծրագիր
MCC/WM	Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի «Ջրից դեպի շուկա» վարկային ծրագիր
OeEB	Ավստրիական զարգացման բանկ
OFID/TFP	ՆԱԵԿ Առևտրի խթանման ծրագիր
OFID/SME	ՆԱԵԿ Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
Responsability/SME	Ռեսպոնսիբիլիթի Գլոբալ միկրոֆինանսավորման հիմնադրամի Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
MSMEBondsSA/MSME	Միկրո, փոքր և միջին Բոնդզ էսէյ ընկերության միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
INCOFINCVBA/MSE	Ինկոֆին Սի Վի Բի էյ Միկրո և փոքր ձեռնարկությունների վարկավորման ծրագիր

Սույն հավելվածում որոշ ծրագրերի բացակայության դեպքում բանկը այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ ուղարկելով ծրագրի անվանումը (ներառյալ՝ անգլերեն տարբերակը)՝ աղյուսակում ներկայացված սկզբունքների համաձայն:

Հավելված 7
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգի «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ« և «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվություններում ***«Տարեկան արդյունավետ տոկոսադրույք»*** սյունակներում լրացվող տեղաբաշխված և ներգրավված գումարների արդյունավետ տոկոսադրույքները հաշվարկվում են համաձայն հետևյալ սկզբունքների.

1) Օվերդրաֆտների, վարկային գծերի և կանխատեսելի դրամական հոսքեր չունեցող գործիքների (բացառությամբ՝ ցպահանջ և անժամկետ միջոցների) արդյունավետ տոկոսադրույքների հաշվարկման համար կիրառվում է համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի (annualized agreed rate, AAR) բանաձևը՝

$$X = \left(1 + \frac{r_{ag}}{n}\right)^{n} - 1 \text{ (բանաձև 1)}$$

որտեղ՝
X - համաձայնեցված տարեկան տոկոսադրույքն է (ՀՏՏ),
r_{ag} - բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված պարզ տոկոսադրույքն է,
n - հաշվեգրված տոկոսների վճարումների կապիտալիզացիաների քանակն է մեկ տարվա ընթացքում,

2) Կանխատեսելի դրամական հոսքեր ունեցող ակտիվների և պարտավորությունների արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքի (narrowly defined effective rate, NDER) բանաձևը

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}} \quad \text{(բանաձև թիվ 2)}$$

որտեղ՝
i - մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքն է (ՄՄԷՏ),
Kn - դրամական միջոցների n հոսքերը՝ բանկի տեսանկյունից,
N - դրամական միջոցների հոսքերի քանակը՝ կապված տվյալ ֆինանսական գործիքի հետ,
A - ներգրավված կամ տրամադրված միջոցի սկզբնական գումարը,
Dn - n-րդ դրամական հոսքի ստացման ժամանակահատվածը՝ արտահայտված առաջին հոսքից հետո անցած օրերի թվով (առաջին հոսք՝ միջոցի ներգրավման կամ տրամադրման ամսաթիվն է),

3) Ինչպես ՀՏՏ-ն, այնպես էլ ՄՄԷՏ-ը ներառում են տեղաբաշխված և ներգրավված միջոցների գծով բոլոր տոկոսային վճարները և չեն ներառում այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն): Դրանց տարբերությունը վերջիններիս հաշվարկման հիմքում ընկած տոկոսադրույքների տարեկանացման մեթոդի մեջ է: ՀՏՏ-ն կիրառելի է միայն այն դեպքերում, երբ տեղաբաշխված/ներգրավված միջոցների գծով տոկոսների կապիտալիզացիան կատարվում է կանոնավոր (հավասար) ժամանակահատվածներում: ՄՄԷՏ-ը հանդիսանում է արդյունավետ մոտարկում և կարող է կիրառվել ցանկացած տեսակի տեղաբաշխված/ներգրավված միջոցի պարագայում:
4) Եթե պայմանագրում առկա են դրույթներ, որոնք թույլ են տալիս տոկոսների փոփոխություններ, ապա տարեկան արդյունավետ տոկոսադրույքը պետք է հաշվարկվի պայմանագրի կնքման պահին գործող չափանիշների հիման վրա՝ ենթադրելով, որ տոկոսները և/կամ հաճախորդի կողմից կատարվող կամ կատարվելիք ծախսերը մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

2. «Ծանոթագրություններ ակտիվների վերաբերյալ» հաշվետվությունում ***«Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ գործընկերոջ տեսանկյունից (APRC)»*** սյունակում լրացվող տեղաբաշխված գումարների արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է թիվ 2 բանաձևով և նույն մեթոդաբանությամբ, ինչ ՄՄԷՏ-ը, սակայն ներառում է ինչպես բոլոր տոկոսները, այնպես էլ այլ վճարումները, որոնք միջոց ստացողը պարտավոր է վճարել տվյալ միջոցը ստանալու համար: Թիվ 2 բանաձևի տարրերը տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս ունեն հետևյալ նշանակությունները.

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է,
A - միջոց ստացողին տրամադրվող միջոցի սկզբնական գումարն է,
n - միջոցի մարմանն ուղղված վճարի հերթական համարն է,
Kn - միջոց ստացողի կողմից միջոցի ստացման պահին և(կամ) միջոցի գործողության ընթացքում կատարված հերթական n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ): Այն դեպքում, երբ միջոց տրամադրելու մասին պայմանագրով թույլատրվում են տոկոսների և (կամ) միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և (կամ) միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև միջոց ստանալու պայմանագրի գործողության ավարտը,
Dn - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել միջոցի ստացման օրից մինչև միջոցի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ:

Օրինակ՝ վարկը տրամադրվել է սեպտեմբերի 15-ին, վարկի տրամադրման համար վարկի ստացման պահին նախատեսված են այլ վճարումներ, և վարկի առաջին մասնակի մարումը տեղի է ունենալու նույն տարվա հոկտեմբերի 15-ին: Այս դեպքում $D_1 = 0$, քանի որ այլ վճարումները կատարվելու են վարկի ստացման օրը, $D_2 = 30$, քանի որ վարկի տրամադրումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը 30 է, իսկ D_3 - ից մինչև D_n ընկած օրերի թիվը հաշվարկվում է նույն սկզբունքով:

3. Միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները.
1) օրենքով և միջոց ստանալու պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները,

2) այն վճարները, որոնք միջոց ստացողի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումը տրամադրված միջոցով կամ առանց տրամադրված միջոցի կատարելու հանգամանքից,
3) կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե միջոցի ստացման պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից: Բացառություն են կազմում կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե միջոց տրամադրողը այդ կազմակերպությունների, միությունների կամ այլ խմբերի հիմնադիրն է կամ մասնակիցը, և տրամադրվող միջոցի պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից: Օրինակ՝ բանկը հայտարարում է վարկային պայմանագրի կնքման արտոնյալ պայմաններ այն անձանց համար, ովքեր կհանդիսանան իր կողմից հիմնադրած միության անդամ: Անդամակցության համար պահանջվում է տարեկան անդամավճար: Տրամադրված միջոցի ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից վճարվելիք անդամավճարի (անդամավճարների) գումարը պետք է ներառվի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ,
4) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, ***բացառությամբ այն դեպքերի, երբ*** այդ ծառայություններից օգտվելը հանդիսանում է միջոց տրամադրելու պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման և
   ա. այդ ծառայությունների շահառուն հանդիսանում է միջոց տրամադրողը, կամ
   բ. միջոց տրամադրողը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ միջոց ստացողն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Օրինակ՝ ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվում են, երբ.
      բ1. Բանկը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն,
      բ2. Բանկը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
      բ3. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն,
      բ4. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
      բ5. Բանկը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
      բ6. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,
5) միջոց ստանալու հետ կապված այլ վճարները, որոնք միջոց ստացողը պարտավոր չէ կատարել միջոց ստանալու համար (օրինակ՝ բիզնես պլանի մշակման, միջոց ստացողի կողմից միջոց ստանալու համար բանկ այցելության տրանսպորտային ծախսերը):

4. Այն դեպքում, երբ միջոց տրամադրելու պայմանագիրը պարունակում է դրույթներ, որոնք թույլատրում են տոկոսների և ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ կամ տատանումներ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտու-

թյուն, տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և/կամ ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ավարտը:

5. Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում ծախսերը ընդգրկելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով. արդյո՞ք հաճախորդը պարտավոր է կատարել նշված ծախսերը վարկավորման համար, մասնավորապես.

1) քարտային հաշվի բացման և սպասարկման համար գանձվող վճարները մասնակցում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե դրանք կատարվել են վարկային գիծ ստանալու նպատակով: Այն դեպքում, երբ պլաստիկ քարտը եղել է հաճախորդի տրամադրության տակ մինչև վարկային գծի տրամադրումը, ապա արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են միայն սպասարկման համար գանձվող վճարները:
2) վարկի գումարի կանխիկացման համար գանձվող միջնորդավճարը չի մասնակցում արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե վարկային գծի տրամադրման պայմանների համաձայն՝ հաճախորդը հարկադրված չէ ստացած միջոցները կանխիկացնել:
3) առևտրային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են բոլոր այն վճարները, որոնք կատարվել են տվյալ հաճախորդի կողմից տվյալ վարկը ստանալու նպատակով, այդ թվում՝ բանկում ընթացիկ հաշվի բացման համար գանձվող կոմիսիոն վճարը, եթե դա բացվել է անմիջապես վարկի տրամադրման համար:

6. Տոկոսադրույքները հաշվարկելիս, անհրաժեշտության դեպքում, գործում են հետևյալ սկզբունքները.

1) պայմանագրով տրամադրված միջոցի առավելագույն սահմանաչափ սահմանված չլինելու դեպքում տրամադրված միջոցի առավելագույն չափը մեկ միլիոն դրամն է,
2) եթե պայմանագրով նախատեսված է, որ հաճախորդը կարող է տրամադրված միջոցի գումարը ստանալ մաս առ մաս կամ կարող է ընտրել տրամադրված միջոցի գումարը ստանալու պահը, ապա համարվում է, որ տրամադրված միջոցի գումարը հաճախորդին փոխանցվել է ամբողջությամբ՝ պայմանագիրը կնքելու պահին,
3) պայմանագրով տրամադրված միջոցի վերադարձման ժամանակացույց կամ պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ սահմանված չլինելու դեպքում տրամադրված միջոցի վերադարձման ժամկետը մեկ տարի է,
4) այն դեպքում, երբ պայմանագիրը սահմանում է տրամադրված միջոցի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, տրամադրված միջոցի վերադարձը կատարվում է պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

7. Արտարժութային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ ՀՀ դրամով գանձվող կոմիսիոն բոլոր վճարները հաշվարկում ներառվում են պայմանագրի կնքման օրվա համար բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքով:

Հավելված 8
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ԿՈՇՏ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Սույն կարգի «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» և «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության ճշգրտության և համապատասխանության ստուգման նպատակով ստորև ներկայացված են որոշակի կոշտ ստուգումներ:

H_Ass_Ass_1	If	ASSBAL_ASSET_TYPE	In	"CorrAccUMA","CorrAcc"	Բանկը կարող է ունենալ թղթակցային հաշիվներ միայն այլ բանկերում
	Then	ASSBAL_SUBJECT_TYPE	in	"CB","Bank"	
H_Ass_Ass_2	If	ASSBAL_SUBJECT_TYPE ASSBAL_COUNTRY_CODE ASSBAL_ASSET_TYPE	= = =	"CentGov" "ARM "IntBond"	ՀՀ պետական արժեթղթերը չեն կարող դասակարգվել
	Then	ASSBAL_ASS_CLASSIFICATION	=	"Nonclass"	
H_Ass_Ass_3	If	ASSBAL_SUBJECT_TYPE	=	"OthHousehold"	Իրավաբանական անձանց հատվածային պատկանելիությունը չի համապատասխանում իրավական կարգավիճակին
	Then	ASSBAL_LEGAL_STATUS	=	"Nat"	
H_Ass_Ass_4	If	ASSBAL_BALANCECODE	=	"16220"	16220 հաշվառման հաշվի համար ունեցող տողերի համար պետք է ճիշտ լինի հետևյալ պայմանը՝ "Գործընկերոջ իրավական կարգավիճակը"="Nat", "Գործընկերոջ՝ բանկի աշխատակից հանդիսանալը"="Employee", "Ակտիվի տեսակը"="Loan"
	Then	ASSBAL_LEGAL_STATUS ASSBAL_EMPLOYEE_STATUS ASSBAL_ASSET_TYPE	= = =	"Nat" "Employee" "Loan"	
H_Liab_Liab_1	If	LIABBAL_LIABILITY_TYPE	=	"CorrAcc"	Բանկում թղթակցային հաշիվ կարող է ունենալ միայն այլ բանկ
	Then	LIABBAL_SUBJECT_TYPE	=	"Bank"	
H_Liab_Liab_2	If	LIABBAL_LEGAL_STATUS	=	"Nat"	Ֆիզիկական անձը չի կարող ունենալ օտարերկրյա մասնակցություն
	Then	LIABBAL_FOREIGN_STATUS	<>	"Foreign"	
H_01_01_1	If	F01_BALANCECODE	in	"10202","10203","10212","10213","10302","10303","10312","10313","10450","10451","10452","10453","10460","10461","10462","10463","30004","30005","30020","30021","30022","30023","30024","30025","30026","30027","30102","30103","30120","30121","30122","30123","30124","30125","30126","30127","30230","30231","30232","30233","30240","30241","30242","30243","30244","30245","30250","30251","30252","30253","30254","30255","30330","30331","30332","30333","30340","30341","30342","30343","30344","30345","30350","30351","30352","30353","30354","30355","32020","32021","32022","32023","32120","32121","32122","32123","33060","33061","33062","33063","33160","33161","33162","33163","33420","33421","33422","33423"	Առարկայազուրկ մետաղական հաշիվների համար լրացվում է "XMA" կոդ
	Then	F01_CURRENCY	=	"XMA"	
H_01_01_2	If	F01_BALANCECODE	in	"11000,"11001","81010","81030"	Ոսկով պահվող ակտիվների համար լրացվում է "XAU" արտարժույթի կոդ
	Then	F01_CURRENCY	<>	"XAU"	
H_01_01_3	F01_VAL	Sum F01_BALANCECODE len(F01_BALANCECODE)	 like =	 "1%" or"2%" 5	Ակտիվներ = Պարտավորություններ + Կապիտալ
	= F01_VAL	**Ident. Formula Code** F01_BALANCECODE len(F01_BALANCECODE)	 like =	 "3%" or"4%" or "5%" 5	

Հավելված 9
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշման Հավելվածի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԸ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ

Տարբերակ 7.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 51
1. ՖԻՆԱ արտաքին ծառայության տվյալների փոխանակման տեխնոլոգիաների նկարագրություն 51
2. ՖԻՆԱ արտաքին ծառայության կլիենտ համակարգի կարգաբերման ֆայլի նկարագրություն 52
3. ՖԻՆԱ արտաքին ծառայության WSDL նկարագրություն 52
4. ՖԻՆԱ արտաքին ծառայության էլեկտրոնային ստորագրության նկարագրություն 53
5. ՖԻՆԱ համակարգում կիրառվող տեղեկատվական XSD սխեմաները 54
5.1. Հաշվետվությունների xsd սխեմաներ 54
5.2. Անդորրագրերի xsd սխեմաներ 54
5.2.1. Ստացման անդորրագիր 54
5.2.2. Կարգավիճակի անդորրագիր 55
5.2.3. Հաղորդագրության անդորրագիր 56
5.2.4. Հարցման անդորրագիր 57
5.2.5. Անդորրագրերի սխեմաների նկարագրություն 58
6. ՖԻՆԱ արտաքին ծառայությանը միանալու գործընթացի իրականացման քայլերի հերթականություն 59
Հավելվածներ 61
1. Անվտանգության հավաստագրի տեղակայման օրինակ Windows Certificate Store–ում 61
2. ՀՀ ԿԲ Ֆինա արտաքին ծառայության միջոցով հաշվետվություն ուղարկելու օրինակ 62

Ներածություն

Ֆինա արտաքին ծառայության հետ կապ հաստատելու և հաշվետվություններ ուղարկելու համար անհրաժեշտ է՝

- Ֆինա արտաքին ծառայության հասցեն
- Անհրաժեշտ անվտանգության հավաստագրերը
- Հաշվետվությունները ստորագրելու համար նախատեսված գրադարանը (XMLSignerDLL.dll)
- Հաշվետվությունների XSD սխեմաները
- Անդորրագրերի XSD սխեմաները

1. ՖԻՆԱ արտաքին ծառայության տվյալների փոխանակման տեխնոլոգիաների նկարագրություն

Name	Value
Object serialization protocol	Soap 1.2
Transport protocol	HTTPS (wsHttp)
Transport security	TLS 1.2

WCF service

Name	Value
binding	wsHttpBinding
security mode	Transport
serviceCertificate	Service certificatge described above

2. ՖԻՆԱ արտաքին ծառայության կլիենտ համակարգի կարգաբերման ֆայլի նկարագրություն

Ֆինա արտաքին ծառայությանը միանալու համար անհրաժեշտ է կարգաբերել տվյալ համակարգի կարգաբերման ֆայլը:

```
<?xml version="1.0" encoding="utf-8" ?>
<configuration>
  <system.serviceModel>
    <bindings>
      <wsHttpBinding>
       <binding name="CBFinaOuterHostEndpoint" closeTimeout="00:01:00"
          openTimeout="00:01:00" receiveTimeout="00:30:00" sendTimeout="00:30:00"
         hostNameComparisonMode="StrongWildcard" maxBufferPoolSize="2147483647"
         maxReceivedMessageSize="2147483647">
        <readerQuotas maxDepth="2147483647" maxStringContentLength="2147483647"
        maxArrayLength="2147483647" maxBytesPerRead="2147483647"
        maxNameTableCharCount="2147483647" />
          <security mode="Transport">
        <transport realm="" clientCredentialType="None"/>
      </security>       </binding>
        </wsHttpBinding>
    </bindings>
   <client>
    <endpoint address="https://100.100.100.27:9003/CBFinaOuterHost" binding="wsHttpBinding"
     bindingConfiguration="CBFinaOuterHostEndpoint" contract="CBFinaOuterHost.ICBFinaOuterHost"
     name="CBFinaOuterHostEndpoint" />
   </client>
  </system.serviceModel>
</configuration>
```

3. ՖԻՆԱ արտաքին ծառայության WSDL նկարագրություն

ՀՀ ԿԲ-ն տրամադրում է տվյալ ծառայության միանալու հասցեն, որտեղ տեղակայված է ծառայության WSDL ֆայլի նկարագրությունը: ՀՀ ԿԲ-ն տրամադրում է նաև տվյալ ծառայության անվտանգության հավաստագրի բաց բանալին (տեղակայման օրինակ տե՛ս *1. Անվտանգության հավաստագրի տեղակայման օրինակ Windows Certificate Store* – ու):

Տվյալ ծառայության մեջ նկարագրված են հետևյալ ֆունկցիաները՝

Անվանումը	Վերադարձվող արժեք	Փոխանցվող պարամետրեր	Նկարագրություն
SetReport	OperationInfoOut	string xml (հաշվետվությունը xml ֆորմատով) string filename (թվային, չկրկնվող անվանում հաշվետվությունների սահմանում)	Հաշվետվությունների փոխանցման ֆունկցիա
GetReportInfoByCode	OperationInfoOut	string FileCode (ՀՀ ԿԲ կողմից տրամադրված հաշվետվության կոդ, որը տրվում է SetReport մեթոդի արդյունքի ստացականով)	Հաշվետվության մերժման կամ գրանցման կարգավիճակի մասին տեղեկություն վերադարձնող ֆունկցիա
GetReportsInfoByBanksDate	ReferenceInfoOut	string xml (հարցում xml ֆորմատով՝ ըստ հաստատված սխեմայի	Ըստ կազմակերպության, կարգավիճակի և ժամանակահատվածի անդորրագրերի ստացում
SetReportMsgByCode	OperationInfoOut	string xml (հաղորդագրություն xml ֆորմատով՝ ըստ հաստատված սխեմայի)	Կազմակերպության կողմից տվյալ հաշվետվությանը վերաբերող հաղորդագրության ուղարկում
GetReportMsgByCode	ReferenceInfoOut	string FileCode (ՀՀ ԿԲ կողմից տրամադրված ֆայլի ունիկալ կոդ, որը տրվում է SetReport մեթոդի արդյունքի ստացականով)	Հաշվետվության հետ կապված հաղորդագրություն վերադարձնող ֆունկցիա
GetXSDFilePath	ReferenceOut	string ORGCODE (Կազմակերպության կոդ), string REPORTCODE (Հաշվետվության կոդ), DateTime PERIODEND (Հաշվետվության ամսաթիվ)	Հաշվետվության XSD սխեմայի հասցե վերադարձնող ֆունկցիա

OperationInfoOut վերադարձվող տեսակ		
Անվանում	**Տեսակ**	**Նկարագրություն**
IsOk	bool	Եթե գործողությունը ավարտվել է առանց սխալի, ապա վերադարձնող արժեքը՝ true, հակառակ դեպքում՝ false
Error	string	Եթե գործողությունը ավարտվել է սխալով, կամ տեղի է ունեցել համակարգի սխալ, Error-ը պարունակում է սխալի հաղորդագրությունը
xml	string	Անդորրագիր xml ֆորմատով, SetReportMsgByCode մեթոդի ժամանակ դատարկ է
FileCode	string	Վերադարձվող ֆայլի ունիկալ կոդը

ReferenceInfoOut վերադարձվող տեսակ		
Անվանում	**Տեսակ**	**Նկարագրություն**
IsOk	bool	Եթե գործողությունը ավարտվել է առանց սխալի, ապա վերադարձնող արժեքը՝ true, հակառակ դեպքում՝ false
Table	DataTable DataColumn (xml string, error string)	Եթե պրոցեդուրային վերադարձնող արժեքը = 1, ապա Table-ում վերադարձվող տվյալներն են
Error	string	Եթե գործողությունը ավարտվել է սխալով, կամ տեղի է ունեցել համակարգի սխալ, Error-ը պարունակում է սխալի հաղորդագրությունը

ReferenceOut վերադարձվող տեսակ		
Անվանում	**Տեսակ**	**Նկարագրություն**
IsOk	bool	Եթե գործողությունը ավարտվել է առանց սխալի, ապա վերադարձնող արժեքը՝ true, հակառակ դեպքում՝ false
Info	string	Վերադարձնում է սպասվելիք արժեքը
Error	string	Եթե գործողությունը ավարտվել է սխալով, կամ տեղի է ունեցել համակարգի սխալ, Error-ը պարունակում է սխալի հաղորդագրությունը

4. ՖԻՆԱ արտաքին ծառայության էլեկտրոնային ստորագրության նկարագրություն

ՀՀ ԿԲ-ն հաշվետվությունները ստորագրելու համար տրամադրում է անվտանգության հավաստագրի գաղտնի բանալի: Տվյալ համակարգով ԿԲ ուղարկվող և ԿԲ-ից ուղարկվող ցանկացած ֆայլ (հաշվետվություններ, անդորրագրեր, հաղորդագրություններ) պետք է ստորագրված լինի: Տեղակայման օրինակ տես՝ *1. Անվտանգության հավաստագրի տեղակայման օրինակ Windows Certificate Store* – ու:

Ստորագրության համար նախատեսված է հատուկ գրադարան՝ XMLSignerDLL.dll, որը տրամադրում է ԿԲ-ն: Գրադարանում առկա է հետևյալ ֆունկցիան՝

SignXML		
Նկարագրություն	Նախատեսված է ՀՀ ԿԲ ուղարկվող հաշվետվությունները ստորագրելու համար	
Վերադարձվող տեսակ	**RetValue (հատուկ տեսակ)**	
Պարամետրեր		
Անվանում	**Տեսակ**	**Նկարագրություն**
_xml	String	Ստորագրվող xml ֆայլ
certificate	X509Certificate2	ՀՀ ԿԲ կողմից տրամադրված անվտանգության հավաստագիրը

RetValue վերադարձվող տեսակ		
Անվանում	**Տեսակ**	**Նկարագրություն**
IsOk	int	Վերադարձնում է 1, եթե սխալ չկա
Error	string	Եթե գործողությունը ավարտվել է սխալով, կամ տեղի է ունեցել համակարգի սխալ, Error-ը պարունակում է սխալի հաղորդագրությունը
xmlSigned	string	Ստորագրված ֆայլ

Գրադարանը գրված է C# ծրագրավորման լեզվով, NET Framework 4 (assembly Com-Visible պարամետրով):

5. ՖԻՆԱ համակարգում կիրառվող տեղեկատվական XSD սխեմաները

5.1. Հաշվետվությունների xsd սխեմաներ

Ֆինա համակարգում կիրառվող հաշվետվությունները ներկայացվում են xml ֆորմատով, համապատասխան ՀՀ ԿԲ կողմից հաստատված xsd սխեմաների հիման վրա: ՖԻՆԱ արտաքին ծառայության միջոցով ՀՀ ԿԲ ուղարկվող հաշվետվությունը պետք է նախնական համապատասխանեցնել տվյալ հաշվետվության համար ՀՀ ԿԲ կողմից հաստատված սխեմային:

5.2. Անդորրագրերի xsd սխեմաներ

Ֆինա համակարգի միջոցով ուղարկված հաշվետվությունների մասին տեղեկությունները փոխանակվելու են անդորրագրերի միջոցով:

Անդորրագրերը ըստ սխեմաների տարանջատվում են մի քանի տեսակի՝

- Ստացման անդորրագիր
- Կարգավիճակի անդորրագիր
- Հաղորդագրության անդորրագիր

5.2.1. Ստացման անդորրագիր

Ֆինա համակարգի միջոցով ուղարկված հաշվետվությունների մասին ստացման անդորրագրի սխեման հետևյալն է՝

```
<?xml version="1.0" encoding="utf-8"?>
<xs:schema xmlns:xs="http://www.w3.org/2001/XMLSchema">
  <xs:element name="RECIPT">
    <xs:complexType>
      <xs:sequence>
        <xs:element name="HEADER">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element name="FILECODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RECIPTTYPE"  type="TextCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RECIPTTYPECODE"  type="TextCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="GENDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="SENDDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1"
minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
        <xs:element name="MESSAGES">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element type="TextCategory" name="MESSAGE" maxOccurs="unbounded" minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
      </xs:sequence>
    </xs:complexType>
  </xs:element>
  <xs:simpleType name="DateCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4}"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="DateTimeCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4} \d{2}:\d{2}:\d{2}"/>
```

```
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="TextCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:minLength value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="IntegerMinExclusive0Category">
    <xs:restriction base="xs:integer">
      <xs:minExclusive value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
</xs:schema>
```

5.2.2. Կարգավիճակի անդորրագիր

Ֆինա համակարգի միջոցով ուղարկված հաշվետվությունների մասին մերժման, գրանցման, ուշացման, խաչածև ստուգումների անդորրագրերի սխեման հետևյալն է՝

```
<?xml version="1.0" encoding="utf-8"?>
<xs:schema xmlns:xs="http://www.w3.org/2001/XMLSchema">
  <xs:element name="RECIPT">
    <xs:complexType>
      <xs:sequence>
        <xs:element name="HEADER">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element name="REPORTERCODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="FILECODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="RETURNCODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="RETURNNAME" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="PERIODICITY" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="PERIODEND" type="DateCategory" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="VER" type=" IntegerMinExclusive0Category" maxOccurs="1" minOccurs="0"/>
              <xs:element name="RECIPTTYPE"  type="TextCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RECIPTTYPECODE"  type="TextCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="GENDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="SENDDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1"
minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
        <xs:element name="MESSAGES">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element type="TextCategory" name="MESSAGE" maxOccurs="unbounded" minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
      </xs:sequence>
    </xs:complexType>
  </xs:element>
  <xs:simpleType name="DateCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4}"/>
```

```
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="DateTimeCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4} \d{2}:\d{2}:\d{2}"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="TextCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:minLength value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="IntegerMinExclusive0Category">
    <xs:restriction base="xs:integer">
      <xs:minExclusive value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
</xs:schema>
```

5.2.3. Հաղորդագրության անդորրագիր

Ֆինա համակարգի միջոցով ուղարկված հաշվետվությունների մասին հաղորդագրություն ուղարկելու անդորրագրի սխեման հետևյալն է՝

```
<?xml version="1.0" encoding="utf-8"?>
<xs:schema xmlns:xs="http://www.w3.org/2001/XMLSchema">
  <xs:element name="RECIPT">
    <xs:complexType>
      <xs:sequence>
        <xs:element name="HEADER">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element name="REPORTERCODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="FILECODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RETURNCODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RETURNNAME" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RECIPTTYPE"  type="TextCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RECIPTTYPECODE"  type="TextCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="GENDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="SENDDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1"
minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
        <xs:element name="MESSAGES">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element type="TextCategory" name="MESSAGE" maxOccurs="unbounded" minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
      </xs:sequence>
    </xs:complexType>
  </xs:element>
  <xs:simpleType name="DateCategory">
```

```
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4}"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="DateTimeCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4} \d{2}:\d{2}:\d{2}"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="TextCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:minLength value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="IntegerMinExclusive0Category">
    <xs:restriction base="xs:integer">
      <xs:minExclusive value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
</xs:schema>
```

5.2.4. Հարցման անդորրագիր

Ֆինա համակարգին հաշվետվությունների կարգավիճակի հարցման անդորրագրի սխեման հետևյալն է՝

```
<?xml version="1.0" encoding="utf-8"?>
<xs:schema xmlns:xs="http://www.w3.org/2001/XMLSchema">
  <xs:element name="RECIPT">
    <xs:complexType>
      <xs:sequence>
        <xs:element name="HEADER">
          <xs:complexType>
            <xs:sequence>
              <xs:element name="REPORTERCODE" type="TextCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="PERIODSTART" type="DateCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="PERIODEND" type="DateCategory" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="RECEIPTCODEFILTER" type=" xs:integer" maxOccurs="1" minOccurs="1"/>
              <xs:element name="SENDDATETIME"  type="DateTimeCategory"  maxOccurs="1"
minOccurs="1"/>
            </xs:sequence>
          </xs:complexType>
        </xs:element>
      </xs:sequence>
    </xs:complexType>
  </xs:element>
  <xs:simpleType name="DateCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4}"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="DateTimeCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:pattern value="\d{2}/\d{2}/\d{4} \d{2}:\d{2}:\d{2}"/>
    </xs:restriction>
```

```
  </xs:simpleType>
  <xs:simpleType name="TextCategory">
    <xs:restriction base="xs:string">
      <xs:minLength value="0"/>
    </xs:restriction>
  </xs:simpleType>
</xs:schema>
```

5.2.5.. Անդորրագրերի սխեմաների նկարագրություն

Անդորրագրերը կազմված են 3 բլոկից՝ գլխագիր, հաղորդագրություններ, ստորագրություն: Ֆայլը սխեմայի հետ ստուգելու համար անհրաժեշտ է հեռացնել Signature տագը:

Գլխագրի բլոկի ատրիբուտներն են՝

HEADER				
Անվանում	**Տեսակ**	**Արժեք**	**Պարտադիր/ոչ Ս/Մ/Գ/Խ/ՈՒ/Հ/Դ***	**Նկարագրություն**
REPORTERCODE	string		ՈՉ/ՈՉ/Պ/Պ/Պ/Պ/Պ	Կազմակերպության կոդ
FILECODE	string		Պ/Պ/Պ/Պ/ՈՉ/Պ/ՈՉ	Ֆայլի կոդ, տրվում է ստացականով
RETURNCODE	string		ՈՉ/ՈՉ/Պ/ՈՉ/Պ/Պ/ՈՉ	Հաշվետվության կոդ
RETURNNAME	string		ՈՉ/ՈՉ/Պ/ՈՉ/Պ/Պ/ՈՉ	Հաշվետվության անվանումը կամ ֆայլի անվանումը
PERIODICITY	string		ՈՉ/ՈՉ/ՈՉ/Պ/ՈՉ/ՈՉ/ՈՉ	Պարբերականության անվանումը
PERIODEND	string	dd/MM/yyyy ֆորմատով	ՈՉ/ՈՉ/Պ/Պ/Պ/Պ/Պ	Հաշվետվության ամսաթիվը կամ հարցման ժամանակահատվածի վերջ
VER	int		ՈՉ/ՈՉ/Պ/ՈՉ/Պ/Պ/ՈՉ	Հաշվետվության տարբերակ
RECIPTTYPE	string	Ստացման Մերժման Գրանցման Խաչածև ստուգումների սխալ Ուշացման Հաղորդագրություն Խաչածև ստուգումների սխալ (փոփոխված)	Պ/Պ/Պ/Պ/Պ/Պ/ՈՉ	Անդորրագրի տեսակը
RECIPTTYPECODE	string	01 02 03 05 06 07 08	Պ/Պ/Պ/Պ/Պ/Պ/ՈՉ	Անդորրագրի տեսակի կոդ
GENDATETIME	string	dd/MM/yyyy HH:mm:ss ֆորմատով	Պ/Պ/Պ/Պ/Պ/Պ/ՈՉ	Անդորրագրի ձևավորման ամսաթիվը
SENDDATETIME	string	dd/MM/yyyy HH:mm:ss ֆորմատով	Պ/Պ/Պ/Պ/Պ/Պ/Պ	Անդորրագրի ուղարկման ամսաթիվը
PERIODSTART	string	dd/MM/yyyy ֆորմատով	ՈՉ/ՈՉ/ՈՉ/ՈՉ/ՈՉ/ՈՉ/Պ	Հարցման ժամանակահատվածի սկիզբ
RECEIPTCODEFILTER	int	0- բոլորը, 1-գրանցվածները, 2-մերժվածներ, 3-Խաչածև ստուգումների սխալ, 4- ուշացածներ	ՈՉ/ՈՉ/ՈՉ/ՈՉ/ՈՉ/ՈՉ/Պ	Հարցման կարգավիճակի տեսակի զտիչ

** Ս/Մ/Գ/Խ/ՈՒ/Հ/Դ- անդորրագրի տեսակ՝ Ստացման/Մերժման/Գրանցման/Խաչածև ստուգման/Ուշացման/Հաղորդագրության/Հարցման*

Հաղորդագրության բլոկը իրենից ներկայացնում է MESSAGE տագերի ցուցակը՝

MESSAGES				
Անվանում	**Տեսակ**	**Արժեք**	**Պարտադիր/ոչ**	**Նկարագրություն**
MESSAGE	string		ոչ	հաղորդագրություն

Օրինակ՝

```
<?xml version="1.0" encoding="utf-8"?>
<RECIPT>
 <HEADER>
<FILECODE>[F]000[G]12[T]2121</FILECODE>
<RECIPTTYPE>Ստացման</RECIPTTYPE>
<RECIPTTYPECODE>01</RECIPTTYPECODE>
<GENDATETIME>10/10/2010 12:12:12</GENDATETIME>
<SENDDATETIME>10/10/2010 12:12:12</SENDDATETIME>
 </HEADER>
 <MESSAGES>
<MESSAGE>MESSAGE1</MESSAGE>
<MESSAGE>MESSAGE2</MESSAGE>
 </MESSAGES>
<Signature xmlns="http://www.w3.org/2000/09/xmldsig#">
<SignedInfo>
<CanonicalizationMethod Algorithm="http://www.w3.org/TR/2001/REC-xml-c14n-20010315"/>
<SignatureMethod Algorithm="http://www.w3.org/2000/09/xmldsig#rsa-sha1"/>
<Reference URI="">
<Transforms>
<Transform Algorithm="http://www.w3.org/2000/09/xmldsig#enveloped-signature"/>
</Transforms>
<DigestMethod Algorithm="http://www.w3.org/2000/09/xmldsig#sha1"/>
<DigestValue> EXAMPLE0123456789+-==</DigestValue>
</Reference>
</SignedInfo>
<SignatureValue> EXAMPLE0123456789+-==</SignatureValue>
</Signature>
</RECIPT>
```

6. ՖԻՆԱ արտաքին ծառայության միանալու գործընթացի իրականացման քայլերի հերթականություն

Ֆինա համակարգի միջոցով ՀՀ ԿԲ հաշվետվություններ ուղարկելու համար անհրաժեշտ է՝

- Տեղադրել ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրած անվտանգության հավաստագրի բանալիները *(տե՛ս 1. Անվտանգության հավաստագրի տեղակայման օրինակ Windows Certificate Stor-ում)*
- Գեներացնել հաշվետվությունը *(տե՛ս 5.1. Հաշվետվությունների xsd սխեմաներ)*
- Ստորագրել հաշվետվությունը *(տե՛ս 4. ՖԻՆԱ արտաքին ծառայության էլեկտրոնային ստորագրության նկարագրություն)*
- Կապ հաստատել ՀՀ ԿԲ-ի Ֆինա արտաքին ծառայության հետ *(տես 2. ՖԻՆԱ արտաքին ծառայության կլիենտ համակարգի կարգաբերման ֆայլի նկարագրություն)*
- Դիմել ՀՀ ԿԲ-ի Ֆինա արտաքին ծառայությանը, որին փոխանցվում է ստորագրված և հաշվետվության սխեմայի հետ համապատասխանեցրած ֆայլը (տե՛ս <?xml version=”1.0” encoding=”utf-8” ?> <?xml version="1.0" encoding="utf-8" ?>

```
<configuration>
   <system.serviceModel>
      <bindings>
         <wsHttpBinding>
          <binding name="CBFinaOuterHostEndpoint" closeTimeout="00:01:00"
             openTimeout="00:01:00" receiveTimeout="00:30:00" sendTimeout="00:30:00"
            hostNameComparisonMode="StrongWildcard" maxBufferPoolSize="2147483647"
            maxReceivedMessageSize="2147483647">
           <readerQuotas maxDepth="2147483647" maxStringContentLength="2147483647"
```

```
                maxArrayLength="2147483647" maxBytesPerRead="2147483647"
                maxNameTableCharCount="2147483647" />
    <security mode="Transport">
          <transport realm="" clientCredentialType="None"/>
        </security>       </binding>
          </wsHttpBinding>
      </bindings>
     <client>
      <endpoint address="https://100.100.100.27:9003/CBFinaOuterHost" binding="wsHttpBinding"
       bindingConfiguration="CBFinaOuterHostEndpoint" contract="CBFinaOuterHost.ICBFinaOuterHost"
       name="CBFinaOuterHostEndpoint" />
     </client>
    </system.serviceModel>
</configuration>
```


3. ՖԻՆԱ արտաքին ծառայության WSDL նկարագրություն)

- Ստանալ ստացման անդորրագիրը xml ֆորմատով՝ համապատասխան ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված անդորրագրերի սխեմային:
- Տվյալ հաշվետվության հետագա կարգավիճակների մասին ինֆորմացիա ստանալու համար պետք է դիմել ՀՀ ԿԲ-ի Ֆինա արտաքին ծառայությանը, որը անդորրագրի միջոցով կփոխանցի կարգավիճակը:


Հավելվածներ

1. Անվտանգության հավաստագրի տեղակայման օրինակ Windows Certificate Store – ում


Windows օպերացիոն համակարգից Microsoft Managament Console (*Start -> Run (WinKey + R) -> հավաքել mmc սեղմել enter*)




Մենյուից բացել File -> Add/Remove Snap-in…



Ձախ ծառից ընտրել Certificates ճյուղը և սեղմել Add կոճակը:
Կբացվի հետևյալ պատուհանը




Ընտրել “My user account” և սեղմել “Finish”:
Բացել Certificates (Current User) -> Trusted Root Certification Authorities -> Certificates
Սեղմել All Tasks -> Import:



Բացված պատուհանում սեղմել “Browse”, ընտրել հավաստագիրը, սեղմել “Next”, մուտքագրել ծածկագիրը (եթե գաղտնի բանալին եք մուտքագրում) և ներմուծել հավաստագիրը:

2. ՀՀ ԿԲ Ֆինա արտաքին ծառայության միջոցով հաշվետվություն ուղարկելու օրինակ

Ֆինա արտաքին ծառայությանը միանալու համար անհրաժեշտ է համակարգի մեջ ավելացնել, որպես ծառայության հղում (Service Reference), տվյալ ծառայությունը՝ հասցե դաշտում նշելով Ֆինա արտաքին ծառայության հասցեն: Պարամետրերի մեջ փոփոխել գործողության տեսակը ասինխրոն, հավաքական տեսակը(Collection type) փոխել ցուցակի (System.Collections.Generic.List):
Օրինակը կատարված է MVS 2012 – ով: C# ծրագրավորման լեզվով և NET Framework 4.5:



Կարգաբերել կարգաբերման ֆայլը՝ ըստ վերը նշված նկարագրության:
Ծառայությանը դիմելու համար՝

```
CBFinaOuterHostClient client = new CBFinaOuterHostClient();


OperationInfoOut inf = client.SetReport(xml ֆայլը , ֆայլի անվանումը);

if (inf.IsOk)
   {
     //"Հաստատում";
          inf.xml;//անդորրագիր
   }
else
   {
          //"Սխալ";
     inf.Error;//սխալի մասին հաղորդագրություն
  }
Try
{
if (client != null && client.State ==
          System.ServiceModel.CommunicationState.Opened)
   {
     client.Close();
   }
        }
catch
   {
     client.Abort();
   }
finally
   {
     if (client != null)
      {
       try
        {
         ((IDisposable)client).Dispose();
        }
       catch
        {}
      }
   }
```

»:

Համատեղ որոշում

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 297-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 2436-Ն հրամանի մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել գործող կարգավորումների համապատասխանեցումը օրենսդրական պահանջներին,

հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի ութերորդ մասի 8-րդ կետը, և

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն որոշում են.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի «Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից տեղեկությունները հարկային մարմնին ներկայացնելու կարգը և բովանդակությունը հաստատելու մասին» թիվ 297-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 17-ի «Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից տեղեկությունները հարկային մարմնին ներկայացնելու կարգը և բովանդակությունը հաստատելու մասին» թիվ 2436-Ն հրամանով հաստատված Հավելվածի 2-րդ կետում «պետական գրանցման վկայականի համարները» բառերից հետո լրացնել «կամ պետական գրանցման համարները» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2017 թ., N 141-Ն

Հայաստանի Հանրապետության
Կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ Վ. Հարությունյան
19 հուլիսի 2017 թ., N 232-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.07. 2017 թ. (ՀՀԳՏ N24 (593) 15.08. 2017):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 205-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Հաշվի առնելով տեղեկատվական անվտանգության կարևորությունը և տվյալ ոլորտին բնորոշ ռիսկերը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի «ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտներին ներկայացվող անվտանգության պահանջները հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 205-Ն որոշմամբ հաստատված «ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտներին ներկայացվող պարտադիր պահանջներում» (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները.

1) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 կետով.

«4.1. ՍիԲիէյՆեթ ցանցի միջոցով ծառայողական նամակագրության ընթացքում աբոնենտին անհրաժեշտ է խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

- պատշաճ կերպով լրացնել "Subject" դաշտը՝ հայերեն լեզվով, համառոտ, բովանդակալից,
- դատարկ չթողնել հաղորդագրության մարմինը՝ կից փաստաթղթի հետ պարտադիր նշել՝ ինչ է այն պարունակում, հղում կատարել՝ որ կարգի, փաստաթղթի կամ գործընթացի ներքո է տվյալ նամակը և կից նյութը ուղարկվում,
- ֆայլը կցելուց առաջ պարտադիր ստուգել հակավիրուսային ծրագրի միջոցով,
- նամակի վերջում ստորագրության դաշտում նշել կատարողի հեռախոսահամարները (քաղաքային, բջջային)՝ անհրաժեշտության դեպքում ճշտումներ անելու նպատակով,
- վերոնշյալ պայմաններին չհամապատասխանող և գործընթացներով չնախատեսված նամակներ ստանալու դեպքում պարտադիր դիմել ուղարկող կողմին՝ ուղարկողի ինքնությունը և նամակի օրինականությունը ստուգելու համար։»,

2) Հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով.

«6) ՀՀ ԿԲ-ի կողմից կառավարվող հրապատին միացված առանձնացված համակարգիչը չպետք է ունենա համացանցին հասանելիություն։»,

3) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1 կետով.

«13.1. Աբոնենտի ներքին համակարգչային ցանցերից միացումը ՀՀ ԿԲ-ի կողմից կառավարվող ՍիԲիէյՆեթ ցանցի հրապատին պետք է իրականացվի միայն աբոնենտին պատկանող հրապատի (firewall) միջոցով։»,

4) Հավելվածի 27-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով.

«5) ՍիԲիէյՆեթ ցանցին միացված սերվերի վրա պարտադիր պետք է տեղադրված լինի հակավիրուսային համակարգ, որը կստուգի և կվնասազերծի ստացվող նամակներում և կից ֆայլերում պարունակվող վնասաբեր ծրագրերը,

6) ՍիԲիէյՆեթ ցանցին միացված սերվերը պետք է տեղակայված լինի ՍիԲիէյՆեթ ցանցի և աբոնենտի հրապատի (firewall) միջոցով ձևավորված առանձին գոտում, ընդ որում, աբոնենտի ներքին ցանցից դեպի ՍիԲիէյՆեթ ցանցին միացված աբոնենտի սերվեր՝ բացի Լոտուս Դոմինո կլիենտ-սերվեր միա-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն։*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 7-ին։
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.07.2017 թ. (ՀՀԳՏ N23 (592) 01.08.2017)։

ցումներից պետք է թույլատրվեն միայն Windows և Antivirus համակարգերի թարմացումների իրականացման, սերվերի և(կամ) աշխատակայանի հեռահար կառավարման (Remote Desktop) միացումները,

7) աբոնենտի կողմից սույն կետի 6-րդ ենթակետում սահմանված միացումներից բացի այլ միացումներ կարող են իրականացնել միայն ՀՀ ԿԲ-ի հետ համաձայնեցնելուց հետո,

8) անհրաժեշտության դեպքում աբոնենտը կարող է ներքին համակարգչային ցանցի և ՍԻԲԻԷյՆեթ ցանցի միջև տեղակայված հրապատի վրա տեղադրել համացանցից հարձակումների զսպման ապարատածրագրային միջոց՝ ներխուժման կանխարգելման համակարգ (IPS):»,

5) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 43.1 կետով.

6) «43.1. Աբոնենտի ներքին համակարգչային ցանցերից միացումը ՀՀ ԿԲ-ի կողմից կառավարվող ՍԻԲԻԷյՆեթ ցանցի հրապատին պետք է իրականացվի միայն աբոնենտին պատկանող հրապատի (firewall) միջոցով:»,

Հավելվածի 44-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) ՀՀ ԿԲ-ի կողմից կառավարվող հրապատին միացված առանձնացված համակարգիչը չպետք է ունենա համացանցին հասանելիություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2017 թ., N 142-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 294-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի «Վճարահաշվարկային համակարգ վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և անվերադարձելիության պահի սահմանման մասին» թիվ 294-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային համակարգ վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և անվերադարձելիության պահի սահմանման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների կիրառման նպատակով վճարահաշվարկային համակարգ մուտքագրված վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ է համարվում վճարահաշվարկային փաստաթղթի՝ վճարահաշվարկային համակարգ մուտքագրվելու պահը:»:

2. Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5. Վճարահաշվարկային համակարգի կանոններով վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ սահմանված լինելու դեպքում այդ կանոններին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համաձայնություն կարող է տրվել, եթե դրանցում նշվում է, որ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների կիրառման նպատակով վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ է համարվում վճարահաշվարկային փաստաթղթի՝ համակարգ մուտքագրվելու պահը:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2017 թ., N 143-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.07.2017 թ. (ՀՀԳՏ N23 (592) 01.08. 2017):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել ֆինանսական խմբերի ճանաչման և որպես ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու գործընթացները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.15-րդ, 39.16-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի ««Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» կանոնակարգ 20/01-ը հաստատելու մասին» թիվ 157-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական խմբերի ճանաչման և ֆինանսական խումբ որակումը դադարեցնելու, ֆինանսական խմբերի կազմում փոփոխությունների կատարման, ֆինանսական խմբերի պատասխանատու անձանց նշանակման կարգը, ֆինանսական խմբերի տեսակները» Կանոնակարգ 20/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 3-րդ գլխի վերնագրից հանել «,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՀԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՈՐԱԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ» բառերը,

2) Կանոնակարգի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանումները Օրենքի 39.15-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների խմբին բացահայտելուց հետո գնահատում են ֆինանսական խմբի կառուցվածքով և ֆինանսական խմբի անդամների փոխհարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված խմբային ռիսկերը և Կենտրոնական բանկի խորհրդին են ներկայացնում խմբային ռիսկերի վերաբերյալ եզրակացություն:»,

3) Կանոնակարգի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Կենտրոնական բանկի խորհուրդը, առաջնորդվելով Օրենքի 39.15-րդ հոդվածով և 39.16-րդ հոդվածի 5-րդ մասով ու հիմք ընդունելով Կենտրոնական բանկի իրավասու ստորաբաժանումների՝ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված եզրակացությունը, Օրենքի 39.16-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում կազմակերպություններին խումբ ճանաչելու վերաբերյալ, եթե առկա են խմբային ռիսկեր:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2017 թ., N 144-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.07.2017 թ. (ՀՀԳՏ N23 (592) 01.08. 2017):

*Ապահովագրական գործունեության հետ կապված այլ գործառնությունների իրականացման վերաբերյալ**

Նպատակ ունենալով թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների կողմից աջակցության գործառնության իրականացումը և կարգավորել այդ գործառնության իրականացման համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թույլտվության տրամադրման գործընթացը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերություններին իրականացնել աջակցության գործառնություն (այլ երկրների ապահովագրական ընկերությունների կողմից կնքված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրության պայմանագրերի սպասարկում (ապահովագրական պատահարի վերաբերյալ ահազանգի ստացում, հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունում, դեպքի վայր մեկնում, ապահովագրական հատուցման կարգավորում, վճարում և այլն)), եթե ապահովագրական ընկերությունը սույն որոշման համաձայն ստացել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) թույլտվությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գործառնության իրականացման համար Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանալու համար ապահովագրական ընկերությունը դիմում է Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) գործառնության մանրամասն նկարագրությունը,
2) կոնտրագենտ ապահովագրական ընկերության անվանումը, գրանցման/լիցենզավորման երկիրը,
3) աջակցության գործառնության մասով ապահովագրական ընկերության կանխատեսվող ցուցանիշները (ապահովագրված անձանց քանակ, պատահարների քանակ, վճարվելիք հատուցումների մեծություն և այլն),
4) աջակցության գործառնության իրականացման հետ կապված ապահովագրական ընկերության ռիսկերի գնահատումը, այդ ռիսկերի զսպմանն ուղղված ապահովագրական ընկերության մոտեցումները, ձեռնարկված/ձեռնարկվելիք քայլերը,
5) ապահովագրական ընկերության գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների վրա աջակցության գործառնության իրականացման ազդեցության գնահատումը:

3. Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերությունից պահանջել այլ փաստաթղթեր և տեղեկություններ՝ սույն որոշման 2-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը հաստատելու համար:

4. Կենտրոնական բանկը սույն որոշմամբ սահմանված բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները ստանալուց հետո 30-օրյա ժամկետում թույլատրում է աջակցության գործառնության իրականացումը, եթե բավարարված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

5. Աջակցության գործառնության իրականացման համար Կենտրոնական բանկի թույլտվությունը չտրամադրելու, կասեցնելու, սահմանափակելու գործընթացները կարգավորվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2017 թ., N 145-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.07. 2017 թ. (ՀՀԳՏ N23 (592) 01.08. 2017):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կանոնակարգում արտացոլել «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև լուծել կանոնակարգի կիրառման ընթացքում մինչ այժմ ի հայտ եկած խնդիրները,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, 36-րդ հոդվածի 2-րդ մասը, 68-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի ««Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ը հաստատելու մասին» թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ֆոնդի ակտիվների և պարտավորությունների արժեքը որոշվում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ Կենտրոնական բանկի կողմից ընդունելի և միջազգային պրակտիկայում նման ֆոնդերի համար ընդունված սկզբունքների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով:»,

2) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1 կետով.

«9.1. Ֆոնդի ակտիվների գնահատման օրը այն օրն է, որի համար հաշվարկվում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Ֆոնդի կանոնները սահմանում են այն պահը (այսուհետ՝ կտրման պահ), որի դրությամբ հաշվարկվում է տվյալ գնահատման օրվա ֆոնդի զուտ ակտիվների արժեքը:»,

3) Կանոնակարգի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Արտարժույթը և արտարժութային ակտիվներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատման օրվա կտրման պահի դրությամբ՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձի կողմից կազմակերպված արտարժույթի շուկայում տվյալ արտարժույթով առևտրային նստաշրջանի վերջին գործարքի գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ արտարժույթի համար գնահատման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած հաշվարկային փոխարժեքով:»,

4) Կանոնակարգի 13-րդ և 14-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Բանկային հաշիվներում, դրամական միջոցների հաշվառման հաշիվներում առկա միջոցների և բանկային ավանդների (սույն գլխում այսուհետ՝ հաշիվ) արժեքը որոշվում է ֆոնդի կանոններով սահմանված կտրման պահի դրությամբ տվյալ հաշիվներում առկա մնացորդային գումարների և հաշվեգրված ու չստացված տոկոսագումարների հանրագումարով:

14. Հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները հաշվառվում են որպես հաշվեգրված եկամուտ՝ ֆոնդի կանոններով սահմանված կտրման պահի դրությամբ:»,

5) Կանոնակարգը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1 կետով.

«14.1. Սույն կանոնակարգի 13-րդ կետում նշված դրամական միջոցների հաշվառման հաշիվը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ով նախատեսված՝ դրամական միջոցների հաշվառման նպատակով Կենտրոնական դեպոզիտարիայում բացված հաշիվն է:»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.07. 2017 թ. (ՀՀԳՏ N23 (592) 01.08. 2017):

6) Կանոնակարգի 15-րդ կետում «օրը տվյալ արժեթղթի» բառերը փոխարինել «օրվա տվյալ արժեթղթի գնահատման օրվա» բառերով,
7) Կանոնակարգի 16-րդ կետում «(առկա չէ)» բառերից հետո լրացնել «գնահատման օրվա կտրման պահի դրությամբ» բառերը,
8) Կանոնակարգի 17-րդ կետում «Կանոնակարգի 17.1 և 17.2 կետերով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «կանոնակարգի 17.2 կետով նախատեսված դեպքի» բառերով, իսկ «օրը» բառը փոխարինել «օրվա» բառով,
9) Կանոնակարգի 17.1 կետը ուժը կորցրած ճանաչել,
10) Կանոնակարգի 17.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17.2. Օտարերկրյա պարտքային արժեթուղթը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից թողարկված արտարժույթով արտահայտված արժեթուղթը կարող է գնահատվել միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից ստացված գնով, եթե տեղեկատվական աղբյուրները սահմանվում են ֆոնդի կանոններով կամ կառավարչի ներքին իրավական ակտերով:»,

11) Կանոնակարգի 19-րդ կետում «16-րդ և 18-րդ» բառերը փոխարինել «15-18-րդ» բառերով,
12) Կանոնակարգի 19-րդ կետը «որոշված գինը:» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Եթե օտարերկրյա արժեթղթերի գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար առկա է սույն կանոնակարգի 15-18-րդ կետերով սահմանված նոր գին, ապա տվյալ արժեթղթի գնահատման համար կարող է հիմք ընդունվել այդ կետերի համաձայն ստացված նոր գինը:»,

13) Կանոնակարգի 21-րդ կետում «ձևավորված գինը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի» բառերը,
14) Կանոնակարգի 22-րդ կետում հանել «՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տվյալ արժեթղթի ցածր իրացվելիության համար նվազեցումը» բառերը,
15) Կանոնակարգի 23-րդ կետը «սույն գլխով:» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Եթե օտարերկրյա ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար հրապարակվել է սույն կետով սահմանված նոր հաշվարկային արժեք, ապա տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) գնահատման համար կարող է հիմք ընդունվել նոր հրապարակված հաշվարկային արժեք:»,

16) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ գլուխ 11.1-ով.

«ԳԼՈՒԽ 11.1
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35.1. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված՝ Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված պետական արժեթղթերը գնահատվում են գնահատման օրվա կտրման պահի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հիման վրա:

35.2. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը գնահատվում է գնահատման օրվա կտրման պահի դրությամբ միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից տվյալ արժեթղթի համար ստացված գնով, եթե տեղեկատվական աղբյուրները սահմանվում են ֆոնդի կանոններով կամ կառավարչի ներքին իրավական ակտերով: Սույն կետում նշված տեղեկատվական աղբյուրները սահմանող կառավարչի ներքին իրավական ակտերը (ներառյալ դրանցում փոփոխությունները) տրամադրվում են Կենտրոնական բանկին, ինչպես նաև համապատասխան ֆոնդի պահառուին:

35.3. Եթե սույն կանոնակարգի 35.1 և 35.2 կետերով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար, ապա պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթի արժեքը որոշվում է սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված կարգով:

35.4. Պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված փակ կամ միջակայքային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) արժեքը որոշվում է գնահատման օրը կտրման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին

հրապարակված հաշվարկային արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ գնահատման օրը գնահատման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) վերջին հայտնի փակման գնով: Եթե փակ կամ միջակայքային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար հրապարակվել է սույն կետով սահմանված նոր հաշվարկային արժեք, ապա տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) գնահատման համար կարող է հիմք ընդունվել նոր հրապարակված հաշվարկային արժեք:»,

17) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ գլուխ 17-ով.

«Գ Լ ՈՒ Խ 17
ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՍԽԱԼՆԵՐԻ ԷԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԷԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

42. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում սխալ տեղի ունենալու դեպքում կառավարիչը պարտավոր է ճշգրտել այն՝ բացառելով սխալի առկայությունը ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հետագա հաշվարկում:

43. Կառավարիչը պարտավոր է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բացահայտված էական սխալի մասին անմիջապես տեղեկացնել Կենտրոնական բանկին և տվյալ ֆոնդի պահառուին: Եթե սույն կանոնակարգի 44-րդ կետի համաձայն կառավարիչը էական սխալի պատճառով պետք է հատուցի մասնակիցներին և (կամ) ֆոնդին պատճառված վնասները, ապա տեղեկացումը պետք է առնվազն ներառի հետևյալ տեղեկությունները (ներկայացվում է ըստ յուրաքանչյուր ֆոնդի, եթե սխալը վերաբերում է մեկից ավելի ֆոնդերի).

1) սկզբունքները, որոնցով կառավարիչն առաջնորդվելու է պատճառված վնասի հատուցման չափը որոշելիս,
2) պատճառված վնասի հատուցման ժամկետները,
3) վնաս կրած անձանց ցուցակը (առկայության դեպքում), բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի, որի դեպքում ներկայացվում է պահառուից ստացված տեղեկատվություն վնաս կրած անձանց քանակի վերաբերյալ,
4) տեղեկատվությունը, որը բացահայտվելու է վնաս կրած անձանց:

44. Կառավարիչը պարտավոր է հատուցել ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում տեղի ունեցած էական սխալի պատճառով մասնակիցներին և (կամ) ֆոնդին պատճառված վնասները, որոնք ներառում են.

1) ֆոնդի կրած վնասը՝ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) մարման գծով մասնակիցներին ավել վճարված կամ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերման համար մասնակիցներից պակաս ստացված գումարի չափով,
2) համապատասխան մասնակիցների կրած վնասները՝ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) մարման գծով պակաս ստացված կամ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերման համար մասնակիցների ավել վճարած գումարի չափով,
3) ֆոնդին կամ մասնակիցներին պատճառված այլ վնասներ, որոնք ներառված չեն սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում:

45. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում էական սխալ բացահայտելու կամ դրա մասին տեղեկանալու դեպքում կառավարիչը, ի լրումն սույն կանոնակարգի 42-րդ և 43-րդ կետերով սահմանված պահանջների, պետք է ողջամիտ ժամկետում որոշի յուրաքանչյուր մասնակցին (ֆոնդին) պատճառված վնասի չափը, վնաս կրած անձանց ծանուցի պատճառված վնասի, դրա չափի և հատուցումը ստանալու կարգի ու ժամկետների մասին և իրականացնի պատճառված վնասի հատուցում: Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի դեպքում կառավարիչը վնաս կրած անձանց մասին մասնակիցների ռեեստրը վարողից ստանում է միայն ամփոփ (ոչ անհատական) տեղեկատվություն, իսկ յուրաքանչյուր մասնակցին պատճառված վնասի չափի որոշումը, վնաս կրած անձանց ծանուցումը, ինչպես նաև հատուցումը իրականացնում է մասնակիցների ռեեստրը վարողը՝ կառավարչի հաշվին:

46. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է ողջամիտ ժամկետներում ձեռնարկել բոլոր այն քայլերը, որոնք անհրաժեշտ են սույն կանոնակարգի 45-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը կառավարչին տրամադրելու, ինչպես նաև նույն կետով նախատեսված հատուցումը իրականացնելու համար:

47. Սույն գլխի իմաստով սխալը համարվում է էական, եթե.

1) դրա հետևանքով ֆոնդի զուտ ակտիվների արժեքի փոփոխությունը գերազանցում է՝
   ա. ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.25 տոկոսը՝ դրամական շուկայի ֆոնդերի համար,

բ. ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.3 տոկոսը՝ կենսաթոշակային ֆոնդերի համար,

գ. ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.5 տոկոսը, եթե ֆոնդի կանոնների (կանոնադրության) համաձայն ֆոնդի ակտիվները հիմնականում ներդրվում են պարտքային արժեթղթերում և նմանատիպ այլ գործիքներում,

դ. ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 1 տոկոսը՝ այլ ֆոնդերի համար, կամ

2) այն չի գերազանցում սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված մեծությունը, սակայն Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով էական է, հաշվի առնելով.

ա. դրա պարբերական բնույթը, կամ

բ. դրա՝ կառավարչի ներքին հսկողության պատշաճ գործընթացների բացակայության (դրանց չպահպանման) հետևանքով առաջանալու հանգամանքը:

48. Սույն կանոնակարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում վնասի մասին ծանուցումը, ինչպես նաև հատուցումը իրականացվում է միայն այն մասնակիցների գծով, որոնցից յուրաքանչյուրի կրած վնասը գերազանցում է սույն կանոնակարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափը:

49. Պատճառված վնասի հատուցումը պետք է իրականացվի էական սխալի առկայության ողջ ժամանակահատվածի համար:

50. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում էական սխալ բացահայտելու կամ դրա մասին տեղեկանալու դեպքում կառավարիչը պարտավոր է ըստ անհրաժեշտության վերանայել իր ներքին ընթացակարգերը զուտ ակտիվների արժեքի հաշվարկման սխալների հետագա կրկնությունները բացառելու նպատակով:

51. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում կատարված սխալի էականությունը գնահատելիս պետք է դիտարկել միաժամանակ կամ հաջորդաբար կատարված սխալների (այդ թվում՝ ոչ էական) գումարային ազդեցությունը ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վրա:

52. Էական սխալների շտկման, ինչպես նաև հատուցման հետ կապված ծախսերը կատարվում են կառավարչի հաշվին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2017 թ., N 146-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով Վարկային ռեգիստրին և «ԱՔՌԱ» վարկային բյուրոյին բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրվող տեղեկատվության հաշվետվական ձևերի բարելավման համար ծրագրային ապահովման միջոցների ձեռնարկումը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «լ» կետերը, 35-րդ հոդվածի 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի «Վարկային տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 142-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «Վարկային տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):»:

2. Որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 2-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 հուլիսի 2017 թ., N 157-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. հուլիսի 11-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.07. 2017 թ. (ՀՀԳՏ N24 (593) 15.08. 2017):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017թ. հուլիսի 11-ի թիվ 157-Ն որոշմամբ

«Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման

ԿԱՐԳ

ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎԱՐԿԱՐԺԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Սույն կարգի և վարկային տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակն արդյունավետ վերահսկողության և վերլուծության իրականացման համար արժանահավատ տեղեկատվության հավաքագրումն է:

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է վարկային տեղեկատվական համակարգի (այսուհետև՝ Վարկային ռեգիստր) ստեղծման, վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (այսուհետ՝ սույն կարգի իմաստով՝ վարկատու) մասնակցության կարգն ու պայմանները:

2. Վարկային ռեգիստրը սույն կարգով ստեղծված համակարգ է, որտեղ կուտակվում և պահպանվում է վարկառուների և նրանց տրամադրված վարկերի վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը, որը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետև՝ Կենտրոնական բանկ)՝ վերահսկել վարկառու-վարկատու փոխհարաբերությունները, իրականացնել վերլուծություններ, ինչպես նաև օգտագործել այդ տեղեկատվությունը Կենտրոնական բանկի այլ խնդիրներն իրականացնելու համար: Վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության Վարկային ռեգիստրը:

3. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) վարկ՝ վարկատուի նկատմամբ ծագած այն պարտավորությունը, որն առաջացել է վարկի (այդ թվում՝ վարկային գծի), ֆինանսական վարձակալության (լիզինգի), ֆակտորինգի, երաշխավորության, ակրեդիտիվի պայմանագրերից, երաշխիքի կամ վարկային քարտի տրամադրումից, հաշվի վարկավորումից (օվերդրաֆտ), հետգնման պայմանով արժեթղթերի ձեռքբերումից, արժութային սվոփից, ինչպես նաև վարկային հարաբերություններից առաջացած ցանկացած այլ պարտավորություն (դեբիտորական պարտք), որը, սակայն, կապված չէ վարկատուի կողմից վարկառուին ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու կամ վարկատուի կողմից պարտապանի թողարկած արժեթղթերը առանց հետգնման պայմանի ձեռք բերելու հետ,
2) վարկառու՝ անձ, ով վարկատուի հանդեպ ստանձնել է կամ արդեն իսկ կնքված պայմանագրով կարող է ստանձնել սույն կետի 1-ին ենթակետում նշված պարտավորություններից որևէ մեկը,
3) գործող վարկ՝ վարկ, որի գծով վարկառուն չկատարած պարտավորություն ունի վարկատուի նկատմամբ,
4) ոչ ճիշտ կամ անարժանահավատ տեղեկատվություն՝ Վարկային ռեգիստր ներկայացվող տեղեկատվության սահմանված ձևաչափերին չհամապատասխանող և(կամ) իրականությանը չհամապատասխանող և(կամ) տվյալների հակասություն պարունակող տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ II. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Վարկային ռեգիստրին տեղեկատվություն է տրամադրվում իրավաբանական անձանց (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ու վարկային կազմակերպությունների միջբանկային վարկերի վերաբերյալ), ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի

վերաբերյալ, որոնք վարկատուի հանդեպ ստանձնել են սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված պարտավորություններից որևէ մեկը:

5. Վարկատուի կողմից Վարկային ռեգիստրին տեղեկատվությունը տրամադրվում է վարկային պայմանագրի կնքման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Տվյալ վարկի վերաբերյալ Վարկային ռեգիստր արդեն իսկ մուտքագրված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում վարկատուն պարտավոր է Վարկային ռեգիստր ներկայացնել այդ փոփոխությունները76 դրանք կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ոչ ճիշտ կամ անարժանահավատ տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում Վարկային ռեգիստրը տեղեկատվություն տրամադրող վարկատուին տեղեկացնում է անճշտության մասին (նույնիսկ եթե սխալը տեղի է ունեցել ոչ տվյալ վարկատուի մեղքով): Վարկատուն պարտավոր է տեղեկատվությունը ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում (եթե Վարկային ռեգիստրի գրությամբ այլ ժամկետ սահմանված չէ) ճշգրտել՝ ներկայացնելով ճիշտ տեղեկատվությունը կամ տեղեկատվության ճշտությունը հաստատել Վարկային ռեգիստրին՝ համապատասխան նամակի տեսքով, որտեղ արտացոլված կլինեն ճշգրտումների իրականացման պատճառներն ու հիմնավորումները: Այն դեպքում, երբ տեղեկատվության ճշգրտումը ենթադրում է վարկի հեռացում և ճիշտ տարբերակի մուտքագրում, Վարկային ռեգիստր ուղարկվող հեռացման նամակը պետք է ստորագրված լինի Վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ վարկատուի այլ ղեկավարի կողմից:

7. Վարկատուները Վարկային ռեգիստրին տրամադրած տեղեկատվությունը պարտավոր են իրենց մոտ պահպանել անժամկետ և առանց փոփոխությունների ենթարկելու: Վարկային ռեգիստրին ուղարկված տվյալները և վարկատուի մոտ առկա տվյալները պետք է ցանկացած պահի դրությամբ լինեն նույնական:

8. Վարկատուները Վարկային ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցման և լիցենզավորման պահից:

9. Այն դեպքերում, երբ վարկատուն գտնվում է լուծարման գործընթացում, վարկատուի վարկերի վերաբերյալ Վարկային ռեգիստր մուտքագրված տվյալների թարմացումը կատարվում է վարկառուի կամ տվյալ վարկատուի լուծարային կառավարչի կամ լուծարային հանձնաժողովի կողմից Վարկային ռեգիստր ներկայացված տեղեկանքների հիման վրա: Վարկառուն տեղեկանքները ստանում է լուծարվող բանկի լուծարային կառավարչից կամ լուծարային հանձնաժողովից:

10. Վարկատուները պարտավոր են հաշվետվությունները ներկայացնել Իքս-էմ-էլ (այսուհետ՝ XML) ֆորմատով: Կենտրոնական բանկը մշակում և վարկատուներին է տրամադրում համապատասխան XML-սխեմա (Իքս-էս-Դի (այսուհետ՝ XSD) ֆայլ), որի հիման վրա բանկերը ձևավորում են հաշվետվության XML ֆայլը:

11. XML սխեմաների ցանկացած փոփոխության դեպքում Կենտրոնական բանկը հրապարակում է դրանց նոր տարբերակները՝ ուղարկելով տեղեկացման նամակ, որում նշվում է այն ամսաթիվը (ժամկետը), որից հետո (որի ընթացքում) հաշվետվությունները ընդունվելու են համաձայն նոր տարբերակի, ինչպես նաև XSD ֆայլի տարբերակի համարը (օրինակ՝ LR3v171230.xsd, որտեղ «LR3»-ը հաշվետվության նույնականացուցիչն է, «v171230»-ը հաշվետվության տարբերակն է, որը համարակալվում է հաշվետվության ուժի մեջ մտնելու ամսաթվով, «v»-ն նիշերի բաժանարարն է, որին հաջորդում է ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ yymmdd ֆորմատով):

12. Վարկատուի կողմից ձևավորված XML ֆորմատի հաշվետվությունները պետք է Վարկային ռեգիստր ուղարկվելուց առաջ ստուգվեն համապատասխան տարբերակի XML սխեմայի (XSD)-ի միջոցով:

13. Վարկատուները XML ֆորմատով հաշվետվություններ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունը պարտավոր են Կենտրոնական բանկ ներկայացնել «Վարկային ռեգիստր» համակարգի վեբ ծառայության (web service) միջոցով:

14. Հաշվետվություն պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունը «Վարկային ռեգիստր» համակարգի կողմից համարվում է ընդունված մշակման համար, եթե «Վարկային ռեգիստր» վեբ ծառայությունը հաշվետվություն պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունը ընդունելուց հետո տրամադրել է պատասխան եզակի (unique) նույնականացուցիչ, հակառակ դեպքում՝ վարկատուի կողմից ուղարկված էլեկտրոնային հաղորդագրությունը չի համարվում ուղարկված:

15. Հաշվետվությունը համարվում է ընդունված համակարգի կողմից, եթե հաշվետվության համար ձևավորվել է դրական անդորրագիր, հակառակ դեպքում հաշվետվությունը մերժվում է, և համակարգի կողմից ձևավորվում է բացասական անդորրագիր:

16. Վեբ ծառայության միջոցով տվյալների փոխանակման տեղեկատվական անվտանգության նպատակով Կենտրոնական բանկը վարկատուներին տրամադրում է անվանական անվտանգության հավաստագիր:

17. Վարկային ռեգիստրին ուղարկվող տեղեկատվության դաշտերն ու ձևաչափերի նկատմամբ պահանջները սահմանված են սույն կարգի Հավելված 1-ում: Հավելված 1-ում սահմանված բոլոր օժանդակ դաշտերը պարտադիր են լրացման տվյալների առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ III. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

18. Վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործողներն են՝

1) Կենտրոնական բանկը,
2) վարկատուները՝ միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն ակտիվների դասակարգման նպատակով,
3) վարկառուները՝ սույն կարգով սահմանված դրույթներով:

19. Տեղեկատվության փոխանակումը կատարվում է տեղեկատվությունը տիրապետելու իրավունք ունեցող Վարկային ռեգիստրի և վարկատուի աշխատակիցների կողմից:

20. Վարկային ռեգիստրը վարկատուին տրամադրում է վարկատուի բոլոր վարկառուների վերաբերյալ պարբերական տեղեկատվություն՝ համաձայն սույն կարգի Հավելված 3-ի: Վարկային ռեգիստրը սույն կետով սահմանված տեղեկատվությունը վարկատուին տրամադրում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ՝ մինչև հաջորդ ամսվա 6-րդ աշխատանքային օրը:

21. Այն դեպքում, երբ Վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունը պարունակում է ոչ ճիշտ կամ անարժանահավատ տեղեկատվություն, վարկատուն տեղեկացնում է Վարկային ռեգիստրին՝ տվյալները ճշգրտելու և ճշգրտված տեղեկատվությունը տրամադրելու նպատակով:

22. Վարկային ռեգիստրը վարկառուներին տեղեկատվություն է տրամադրում միայն տարին մեկ անգամ, անվճար՝ սույն կարգի Հավելված 4-ով սահմանված ձևով:

23. Վարկային ռեգիստրից տեղեկատվության ստացման համար վարկառուն (կամ նրա լիազորված անձը) ներկայացնում է առձեռն գրավոր դիմում՝ սույն կարգի Հավելված 5-ով սահմանված ձևով: Վարկառուի՝ իրավաբանական անձ լինելու դեպքում դիմումը ստորագրում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը: Դիմողի՝ լիազորված անձ լինելու դեպքում դիմումին կցվում է նաև նոտարական վավերացմամբ լիազորագիր: Դիմումին կցվում է նաև անձը հաստատող գործող փաստաթղթի (անձը հաստատող փաստաթղթի տեսակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767-Ն որոշման համաձայն) պատճենը (իրավաբանական անձի դեպքում գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճենը):

24. Վարկային ռեգիստրի կողմից սույն կարգի 23-րդ կետով նախատեսված դիմումը բավարարվում է դիմումը ստանալու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում: Վարկային ռեգիստրի կողմից թղթային եղանակով տրամադրվող տեղեկատվությունը կնքվում և ստորագրվում է Վարկային ռեգիստրի ղեկավարի կողմից:

Դիմողը տեղեկատվությունը ստանում է առձեռն: Տեղեկատվությունը ստանալու համար վարկառուն (կամ նրա լիազորված անձը) պարտավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ լիազորված անձ լինելու դեպքում նաև նոտարական վավերացմամբ լիազորագիր:

25. Այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ դիմումը ներկայացրած անձն իրավունք չունի պահանջել տվյալ տեղեկատվությունը, դիմումը մերժվում է Վարկային ռեգիստրի կողմից պատասխան գրությամբ՝ դիմումը ստանալու օրվանից տասը աշխատանքային օրվա ընթացքում: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմողը կարող է լրացնել կամ փոփոխել փաստաթղթերը և կրկին դիմել Վարկային ռեգիստրին: Կրկին ներկայացված դիմումը բավարարվում է այն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ԳԼՈՒԽ IV. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

26. Վարկատուները պարտավոր են Վարկային ռեգիստր ներկայացնել ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն:

27. Տրամադրված տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության համար օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում տեղեկատվությունը տրամադրող վարկատուն:

28. Վարկային ռեգիստրից վարկառուի կարծիքով ոչ ճիշտ կամ անարժանահավատ տեղեկատվություն ստանալու դեպքում վարկառուն կարող է գրավոր կամ բանավոր տեղեկացնել Վարկային ռեգիստրին՝ մատնանշելով կասկած հարուցող տվյալները և պահանջել ճշգրտված տեղեկատվությունը: Վարկային ռեգիստրը տվյալների արժանահավատությունը ստուգելուց և հարկ եղած դեպքում ճշգրտումներ իրականացնելուց հետո պատասխանում է վարկառուին՝ տրամադրելով ճշգրտված տեղեկատվությունը՝ սույն կարգով սահմանված ժամկետներում:

ԳԼՈՒԽ V. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԵՐԻ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԵԼՔԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Սույն Կարգի Հավելված 1-ով սահմանված՝ Վարկային ռեգիստրին տրամադրվող տեղեկատվության դաշտերում լրացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) ***ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ -*** ընտրվում է «Անձի տեսակի» տեղեկագրից, եթե մասնակիցը՝ վարկառուն, համավարկառուն, երաշխավորը, սեփականատերը, փոխկապակցված անձը կամ գործադիր մարմնի ղեկավարը ֆիզիկական անձ է:

ա. ***Ֆիզիկական անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)*** - լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող «*Համախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային* նույնականացուցիչը» (BankID): Միասնական բանկային նույնականացուցիչը շնորհվում է այն դեպքում, երբ հարցման մեջ լրացված են բոլոր այն դաշտերը, որոնց համար սույն կարգի Հավելված 1-ի «այլ նշումներ» սյան մեջ նշված է «մասնակցում է վերիֆիկացիային»:

բ. ***Ֆիզիկական անձի անունը*** - լրացվում է ֆիզիկական անձի անունը:

գ. ***Ֆիզիկական անձի ազգանունը*** - լրացվում է ֆիզիկական անձի ազգանունը:

դ. ***Ֆիզիկական անձի հայրանունը*** - լրացվում է ֆիզիկական անձի հայրանունը:

ե. ***Ֆիզիկական անձի անհատ ձեռնարկատեր լինելը*** - ֆիզիկական անձի՝ անհատ ձեռնարկատեր հանդես գալու դեպքում լրացվում է «*Այո*», հակառակ դեպքում՝ «*Ոչ*»:

զ. ***Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)*** - լրացվում է անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

է. ***Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի՝ պետական ռեգիստրում հաշվառման համարը*** - լրացվում է անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի՝ պետական ռեգիստրում հաշվառման համարը:

ը. ***Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի՝ պետական ռեգիստրում հաշվառման ամսաթիվը*** - լրացվում է անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի՝ պետական ռեգիստրում հաշվառման ամսաթիվը:

թ. ***Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի գործունեության ոլորտը*** - լրացվում է անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի գործունեության ոլորտը՝ ըստ «Գործունեության/վարկի օգտագործման ոլորտի» տեղեկագրի: Եթե անհատ ձեռնարկատերը գործունեություն է ծավալում մի քանի ոլորտներում, ապա տվյալ դաշտում լրացվում է այն ոլորտը, որը ձևավորում է անհատ ձեռնարկատիրոջ հասույթի գերակշիռ մասը, իսկ եթե տարբեր ոլորտներ հավասարաչափ են ձևավորում հասույթը, ապա լրացվում է վարկառուի համար առավել նշանակալից ոլորտը:

ժ. ***Ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի տեսակը*** - լրացվում է ֆիզիկական անձը հաստատող գործող որևէ փաստաթղթի տեսակը՝ ըստ «Անձը հաստատող փաստաթղթի տեսակի» տեղեկագրի՝ կազմված Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767-Ն որոշման համաձայն:

ժա. ***Ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի համարը*** - լրացվում է «ժ» ենթակետում ընտրված ֆիզիկական անձը հաստատող գործող փաստաթղթի համարը:

ժբ. ***Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը*** - լրացվում է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը:

ժգ. ***Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը*** - լրացվում է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը:

ժդ. ***Ֆիզիկական անձի ծննդյան ամսաթիվը*** - լրացվում է ֆիզիկական անձի ծննդյան ամսաթիվը:

ժե. ***Ֆիզիկական անձի սեռը*** - լրացվում է ֆիզիկական անձի սեռը՝ ըստ «Սեռի» տեղեկագրի:

ժզ. ***Ֆիզիկական անձի ռեզիդենտության երկիր*** - լրացվում է ֆիզիկական անձի ռեզիդենտության երկիրը՝ ըստ «Երկրների» տեղեկագրի: Ռեզիդենտությունը որոշվում է համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափանիշների:

ժէ. ***Ֆիզիկական անձի գրանցման հասցեն*** - լրացվում է ֆիզիկական անձի գրանցման հասցեն՝ ըստ հասցեի ձևաչափի, որը բաղկացած է հետևյալ դաշտերից.

Երկիր	Մարզ/շրջան-համայնք-Բնակավայր/վարչական շրջան	Փողոց	Շենքի/ տան համար	Բնակարանի համար
«Երկրների» տեղեկագիր	«Մարզ/շրջան-համայնք-բնակավայր/վարչական շրջան» տեղեկագիր			

ժը. ***Ֆիզիկական անձի փաստացի բնակության վայրի հասցեն*** - լրացվում է ֆիզիկական անձի փաստացի բնակության վայրի հասցեն՝ ըստ «ժէ» ենթակետի սահմանված հասցեի ձևաչափի:

ժթ. ***Ֆիզիկական անձի զբաղվածության կարգավիճակը*** - լրացվում է ֆիզիկական անձի զբաղվածության կարգավիճակը՝ ըստ «Զբաղվածության կարգավիճակի» տեղեկագրի:

ի. ***Ֆիզիկական անձի կրթական մակարդակը*** - լրացվում է ֆիզիկական անձի կրթական մակարդակը՝ ըստ «Կրթական մակարդակի» տեղեկագրի:

իա. ***Ֆիզիկական անձի ընտանեկան կարգավիճակը*** - լրացվում է ֆիզիկական անձի ընտանեկան կարգավիճակը՝ ըստ «Ընտանեկան կարգավիճակի» տեղեկագրի:

իբ. ***Ֆիզիկական անձի ընտանիքի անդամների քանակը*** - լրացվում է ֆիզիկական անձի ընտանիքի անդամների քանակը: Տվյալ դաշտի հաշվարկման համար հիմք է հանդիսանում այն մարդկանց քանակը, ովքեր վարում են համատեղ տնտեսություն և ապրում են միևնույն հարկի տակ:

2) ***ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ -*** ընտրվում է «Անձի տեսակի» տեղեկագրից, եթե մասնակիցը՝ վարկառուն, համավարկառուն, երաշխավորը/երաշխիք տրամադրողը, սեփականատերը, փոխկապակցված անձը իրավաբանական անձ է:

ա. ***Իրավաբանական անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)*** - լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող *«Հաճախորդների միասնական շտեմարան»* տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)*:

բ. ***Իրավաբանական անձի ռեզիդենտության երկիր*** - լրացվում է իրավաբանական անձի ռեզիդենտության երկիրը՝ ըստ «Երկրների» տեղեկագրի: Ռեզիդենտությունը որոշվում է համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանված չափանիշների:

գ. ***Իրավաբանական անձի անվանումը*** - լրացվում է իրավաբանական անձի անվանումը:

դ. ***Իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը*** - լրացվում է իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը՝ ըստ «Կազմակերպական-իրավական ձևը» տեղեկագրի:

ե. ***Իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)/ Իրավաբանական անձի անհատականացման համարը*** - լրացվում է ռեզիդենտ իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), իսկ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց դեպքում՝ անհատականացման համարը (պետական գրանցման համար, հաշվառման համար կամ այլ նույնականացման համար):

զ. ***Իրավաբանական անձի՝ պետական ռեգիստրում գրանցման համարը*** - լրացվում է ռեզիդենտ իրավաբանական անձի՝ պետական ռեգիստրում գրանցման համարը:

է. ***Իրավաբանական անձի՝ պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը*** - լրացվում է ռեզիդենտ իրավաբանական անձի՝ պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը:

ը. ***Իրավաբանական անձի սեփականության/մասնակցության ձևը*** - կախված իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում 50 տոկոսից ավելի կամ մնացած սեփականատերերի նկատմամբ գերակշռող մասնակցություն ունենալուց՝ լրացվում է իրավաբանական անձի սեփականության/մասնակցության ձևը՝ ըստ «Սեփականության/մասնակցության ձևի» տեղեկագրի:

թ. ***Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)*** - լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող «*Հաճախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը*» *(BankID)*:

ժ ***Իրավաբանական անձի գործունեության ոլորտը*** - լրացվում է իրավաբանական անձի գործունեության ոլորտը՝ ըստ «Գործունեության/վարկի օգտագործման ոլորտի» տեղեկագրի: Եթե իրավաբանական անձը գործունեություն է ծավալում մի քանի ոլորտներում, ապա տվյալ դաշտում լրացվում է այն ոլորտը, որը ձևավորում է իրավաբանական անձի հասույթի գերակշիռ մասը, իսկ եթե տարբեր ոլորտներ հավասարաչափ են ձևավորում հասույթը, ապա լրացվում է վարկառուի համար առավել նշանակալից ոլորտը:

ժա. ***Իրավաբանական անձի գտնվելու վայրը*** - լրացվում է իրավաբանական անձի գտնվելու վայրը՝ ըստ հասցեի ձևաչափի:

ժբ. ***Իրավաբանական անձի փաստացի գործունեության վայրը*** - լրացվում է իրավաբանական անձի փաստացի գործունեության վայրը՝ ըստ հասցեի ձևաչափի: Փաստացի գործունեության վայրը մեկից ավելի լինելու դեպքում լրացվում են այն վայրի տվյալները, որտեղ գործունեության գերակշիռ մասն է իրականացվում:

3) ***ՀՀ/ԼՂՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ -*** ընտրվում է «Անձի տեսակի» տեղեկագրից, եթե մասնակիցը՝ վարկառուն, համավարկառուն, երաշխավորը/երաշխիք տրամադրողը, սեփականատերը, փոխկապակցված անձը ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմին է:

ա. ***ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմինը*** - լրացվում է ՀՀ կամ ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի անվանումը՝ ըստ «ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի» տեղեկագրի:

բ. ***ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)***- լրացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրվող «*Հաճախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը*» *(BankID)*:

գ. ***ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն*** - լրացվում է ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն՝ ըստ հասցեի ձևաչափի:

4) ***ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ -*** ընտրվում է «Անձի տեսակի» տեղեկագրից, եթե մասնակիցը՝ վարկառուն, համավարկառուն, երաշխավորը/երաշխիք տրամադրողը, սեփականատերը, փոխկապակցված անձը օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմին է:

ա. ***Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի «Միասնական բանկային Նույնականացուցիչը» (BankID)***- լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող «*Հաճախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը*» *(BankID)*:

բ. ***Օտարերկրյա պետության կողը*** - լրացվում է օտարերկրյա պետության կոդը՝ ըստ «Երկրների» տեղեկագրի:

գ. ***Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի տեսակը*** - լրացվում է օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի տեսակը՝ ըստ «Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի տեսակի» տեղեկագրի:

դ. ***Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը*** - լրացվում է օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը:

ե. ***Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն*** - լրացվում է օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն՝ ըստ հասցեի ձևաչափի:

5) ***ՎԱՐԿԱՌՈՒ***

ա. ***Վարկառուի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID) -*** լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող «*Հաճախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը*» *(BankID)*:

բ. ***Վարկառուի կապվածությունը վարկատուի հետ*** - վարկատուի հետ վարկառուի կապվածության առկայության դեպքում լրացվում է՝ «*այո*», հակառակ դեպքում՝ «*ոչ*»: Կապվածությունը որոշվում է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածում սահմանված չափանիշների:

գ. ***Վարկառուի վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է վարկառուի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:

6) ***ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒ***

ա. ***Համավարկառուի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID) -*** լրացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրվող «*Հաճախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը*» *(BankID)*:

բ. ***Համավարկառուի համամասնական մասնակցության չափը*** - լրացվում է համավարկառուի համամասնական մասնակցության չափը՝ արտահայտված տոկոսով՝ համաձայն վարկային պայմանագրի կամ լրացուցիչ համաձայնագրի:

գ. ***Համավարկառուի վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է համավարկառուի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:

7) ***ԵՐԱՇԽԱՎՈՐ/ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂ***

ա. ***Երաշխավորի/երաշխիք տրամադրողի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)***- լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող «*Հաճախորդների միասնական շտեմարան*» տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված «*Միասնական բանկային նույնականացուցիչը*» *(BankID)*:

բ. ***Երաշխավորության գումարի/տրամադրված երաշխիքի արժույթը*** - լրացվում է երաշխավորության գումարի/տրամադրված երաշխիքի արժույթը՝ ըստ «Արժույթի» տեղեկագրի:

գ. ***Երաշխավորության գումարը/տրամադրված երաշխիքի գումարը*** - լրացվում է երաշխավորության գումարի/տրամադրված երաշխիքի գումարը՝ ըստ տրամադրված արժույթի:

դ. ***Երաշխավորի/երաշխիք տրամադրողի վերաբերյալ այլ նշումներ***- լրացվում է երաշխավորի/երաշխիք տրամադրողի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:

8) ***ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ – փոխկապակցված լինելը սահմանվում է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի:***

ա. ***Փոխկապակցված անձի բանկային նույնականացուցիչը (BankID)*** - լրացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրվող *«Հաճախորդների միասնական շտեմարան»* տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված *«Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)*:

բ. ***Փոխկապակցված անձի վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է փոխկապակցված անձի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:

9) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ - լրացվում են իրավաբանական անձ վարկառուի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մինչև 5 ամենամեծ մասնակցություն ունեցող սեփականատերերի վերաբերյալ տվյալները:

ա. ***Սեփականատիրոջ բանկային նույնականացուցիչը (BankID)*** - լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող *«Հաճախորդների միասնական շտեմարան»* տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված *«Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)*:

բ. ***Սեփականատիրոջ մասնակցության չափը*** - լրացվում է իրավաբանական անձ վարկառուի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում տվյալ սեփականատիրոջ ունեցած մասնակցության չափը՝ արտահայտված տոկոսով, ընդ որում՝ բոլոր սեփականատերերի մասնակցության չափերի հանրագումարը պետք է փոքր կամ հավասար լինի 100 տոկոսի:

գ. ***Սեփականատիրոջ վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է սեփականատիրոջ վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:

10) **ՎԱՐԿ**

ա. ***Վարկային ռեգիստրի կոդը*** - պարունակում է վարկատուի կոդը, մասնաճյուղի կոդը, վարկի մուտքագրման ամսաթիվը, տվյալ օրվա ընթացքում ձևավորված վարկի հերթական համարը և ստուգիչ նիշը: Վարկն առաջին անգամ մուտքագրելիս վարկային ռեգիստրի կոդը շնորհվում է համակարգի կողմից, իսկ դրանից հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում հաշվետվությունը ներկայացնելիս լրացվում է արդեն իսկ ձևավորված կոդը:

բ. ***Վարկատուի կոդը*** - լրացվում է վարկատուի կոդը՝ ըստ «Վարկատուի» տեղեկագրի:

գ. ***Մասնաճյուղի կոդը*** - լրացվում է վարկատուի տարածքային ստորաբաժանման կոդը՝ ըստ «Վարկատուի» տեղեկագրի:

դ. ***Վարկատուի կարգավիճակը*** - լրացվում է վարկատուի կարգավիճակը՝ ըստ «Վարկատուի կարգավիճակի» տեղեկագրի:

ե. ***Վարկի տրամադրումը որպես անհատ ձեռնարկատիրոջ*** - եթե վարկը տրամադրվել է անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձին, ապա լրացվում է «այո», հակառակ դեպքում՝ «ոչ»:

զ. ***Վարկային պայմանագրի տեսակը*** - լրացվում է վարկային պայմանագրի տեսակը՝ ըստ «Վարկային պայմանագրի տեսակի» տեղեկագրի:

է. ***Վարկային պայմանագրի համարը*** - լրացվում է վարկային պայմանագրի համարը՝ ըստ վարկատուի կողմից ընդունված համարակալման:

ը. ***Վարկային պայմանագրի կնքման ամսաթիվը*** - լրացվում է վարկային պայմանագրի կնքման ամսաթիվը:

թ. ***Վարկի վերջնական մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)*** - լրացվում է վարկի մարման ամսաթիվն ըստ պայմանագրի: Մարման ժամկետի վերանայման դեպքում լրացվում է վերանայված ամսաթիվը: Վարկային քարտի, վարկային գծի կամ այլ դեպքերում, երբ մարման ամսաթիվ սահմանված չէ, պայմանականորեն լրացվում է 01/01/2999:

ժ. ***Վարկի փաստացի տրամադրման ամսաթիվը*** - լրացվում է վարկի փաստացի տրամադրման ամսաթիվը (չափաբաժիններով տրամադրման դեպքում՝ վերջին չափաբաժինը տրամադրելու ամսաթիվը):

ժա. ***Վարկի փաստացի (մասնակի) մարման ամսաթիվը*** - լրացվում է փաստացի կատարված վերջին մարման ամսաթիվը: Այլ դեպքերում, երբ վարկառուի պարտավորությունը դադարում է վարկատուի նկատմամբ առանց փաստացի մարում իրականացնելու, լրացվում է պարտավորության դադարման ամսաթիվը:

ժբ. ***Վարկի տեսակը*** - լրացվում է վարկի տեսակը՝ ըստ «Վարկի տեսակի» տեղեկագրի:

ժգ. ***Վարկի արժույթը*** - լրացվում է վարկի արժույթի կոդը՝ ըստ «Արժույթի» տեղեկագրի:

ժդ. ***Պայմանագրով նախատեսված վարկի գումարը (վարկի սահմանաչափը)*** - լրացվում է պայմանագրով նախատեսված վարկի գումարն այն արժույթով, որով տրամադրվում է վարկը/վարկի սահմանաչափը:

ժե. ***Պայմանագրով նախատեսված վարկի փոփոխված գումար (սահմանաչափ)*** - լրացվում է միայն այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված վարկի գումարը (սահմանաչափ) փոփոխվել է:

ժզ. ***Վարկի փաստացի տրամադրված գումարը*** - լրացվում է վարկի փաստացի տրամադրված գումարը (կուտակային): Վարկի խմբային լինելու դեպքում լրացվում է խմբի յուրաքանչյուր անդամին տրված փաստացի մասնաբաժնի չափը:

ժէ. ***Վարկի փաստացի մարված գումարը*** - լրացվում է վարկի փաստացի մարված գումարը (կուտակային):

ժը. ***Վարկի մայր գումարի մնացորդը*** - լրացվում է վարկի մայր գումարի փաստացի մնացորդը:

ի. ***Վարկի անվանական տոկոսադրույքը*** - լրացվում է պայմանագրով նախատեսված անվանական տոկոսադրույքը

իա. ***Վարկի փաստացի տոկոսադրույքը*** - լրացվում է պայմանագրով նախատեսված փաստացի տոկոսադրույքը:

իբ. ***Վարկի անվանական տոկոսադրույքի տեսակը*** - լրացվում է վարկի անվանական տոկոսադրույքի տեսակը՝ ըստ «Վարկի անվանական տոկոսադրույքի տեսակի» տեղեկագրի:

իգ. ***Վարկի անվանական տոկոսադրույքի սուբսիդավորումը*** - եթե վարկի անվանական տոկոսադրույքը սուբսիդավորված է, ապա լրացվում է «այո», հակառակ դեպքում՝ «ոչ»: Այն դեպքում, երբ սուբսիդավորումը կատարվել է վարկի որևէ ժամանակահատվածի համար, ապա վերջինիս ավարտից հետո տվյալ դաշտը ընդունում է «ոչ» արժեքը:

իդ. ***Վարկի անվանական տոկոսադրույքի սուբսիդավորված գումարը*** - լրացվում է փաստացի սուբսիդավորված գումարը:

իե. ***Վարկի գծով փաստացի վճարված տոկոսագումար*** - լրացվում են վարկային պայմանագրով փաստացի վճարված տոկոսագումարները: Փաստացի վճարված տոկոսագումարները լրացվում և թարմացվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացվում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի ամբողջական մարման (պարտավորության դադարման) դեպքում փաստացի վճարված տոկոսագումարները (փաստացի մարման օրվա դրությամբ) Վարկային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

իզ. ***Վարկի տրամադրման միջազգային կազմակերպության անվանումը*** - եթե վարկը տրամադրվել է միջազգային կազմակերպության միջոցների հաշվին, ապա լրացվում է տվյալ միջազգային կազմակերպության անվանումը՝ ըստ «Միջազգային կազմակերպության» տեղեկագրի: Միջազգային կազմակերպության սահմանումն ու տվյալ տեղեկագրի բովանդակությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» հավելված 4-ի համաձայն:

իէ. ***Վարկի տրամադրման միջազգային ծրագրի անվանումը*** - եթե վարկը տրամադրվել է միջազգային ծրագրի միջոցների հաշվին, ապա լրացվում է միջազգային ծրագրի անվանումը՝ ըստ «Միջազգային ծրագրերի» տեղեկագրի: Տվյալ տեղեկագրի բովանդակությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» հավելված 6-ի համաձայն:

իը. ***Վարկի օգտագործման ոլորտը*** - լրացվում է տնտեսության այն ճյուղը, որտեղ օգտագործվելու է վարկի գերակշռող մասը՝ ըստ «Գործունեության/վարկի օգտագործման ոլորտի» տեղեկագրի: Վարկի օգտագործման ոլորտը չի լրացվում ֆիզիկական անձ վարկառուների դեպքում՝ բացառությամբ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց: Եթե վարկը հավասարաչափ է օգտագործվում տարբեր ոլորտների համար, ապա լրացվում է վարկառուի համար առավել նշանակալից ոլորտը:

իթ. ***Վարկի օգտագործման նպատակ*** - լրացվում է վարկի օգտագործման նպատակը՝ ըստ «Վարկի օգտագործման նպատակի» տեղեկագրի: Մեկից ավելի նպատակների առկայության դեպքում լրացվում է այն տարբերակը, որին ուղղված է վարկի գումարի գերակշիռ մասը: Եթե վարկը հավասարաչափ է օգտագործվում տարբեր նպատակների համար, ապա լրացվում է նպատակներից որևէ մեկը: Տվյալ տեղեկագրի բովանդակությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգի» համաձայն:

լ. ***Վարկի օգտագործման երկիրը*** - լրացվում է այն երկիրը, որտեղ օգտագործվելու է վարկի գերակշռող մասը՝ ըստ «Երկրների» տեղեկագրի: Վարկային քարտի դեպքում լրացվում է քարտի տրամադրման երկիրը: Եթե վարկը հավասարաչափ է օգտագործվում տարբեր երկրներում, ապա լրացվում է այդ երկրներից որևէ մեկը:

լա. ***Վարկի օգտագործման մարզը*** - լրացվում է այն մարզը, որտեղ օգտագործվելու է վարկի գերակշիռ մասը՝ ըստ «Մարզերի» տեղեկագրի: Վարկային քարտի դեպքում լրացվում է քարտի տրամադրման մարզը: Եթե վարկը հավասարաչափ է օգտագործվում տարբեր մարզերում, ապա լրացվում է այդ մարզերից որևէ մեկը:

լբ. ***Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը*** - լրացվում է այն ամսաթիվը, որ օրվանից ժամկետանց են դարձել մայր գումարը, տոկոսագումարը, առկա են վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորություններ, տույժեր և տուգանքներ: Եթե մայր գումարը, տոկոսները, վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորությունները կամ տույժերը և տուգանքները ժամկետանց են դարձել տարբեր ամսաթվերի, ապա նշվում է դրանցից առաջինը:

լգ. ***Վարկի ժամկետանց մայր գումարը*** - լրացվում է վարկային պայմանագրով նախատեսված ժամկետին չմարված մայր գումարը: Ժամկետանց մայր գումարը թարմացվում է առնվազն շաբաթը մեկ անգամ՝ յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրը (նախորդ օրվա դրությամբ), ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացվում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի գծով ժամկետանց մայր գումարի մարման դեպքում այն զրոյացնում և Վարկային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ժամկետանց մայր գումարի մասնակի մարման դեպքում այն նվազեցվում և Վարկային ռեգիստր է ներկայացվում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

լդ. ***Վարկի ժամկետանց տոկոսագումարը*** - լրացվում է վարկային պայմանագրով նախատեսված ժամկետին չմարված տոկոսագումարը: Ժամկետանց տոկոսագումարը թարմացվում է առնվազն շաբաթը մեկ անգամ՝ յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրը (նախորդ օրվա դրությամբ), ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացվում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի գծով ժամկետանց տոկոսագումարի մարման դեպքում այն զրոյացնում և Վար-

կային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ժամկետանց տոկոսագումարի մասնակի մարման դեպքում այն նվազեցվում և Վարկային ռեգիստր է ներկայացվում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

լե. ***Վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորությունները*** - լրացվում են վարկային պայմանագրով նախատեսված ժամկետում չմարված վարկի գծով հաշվարկված այլ պարտավորությունները (կոմիսիոն վճարներ, գերածախսեր և այլն): Վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորությունները թարմացվում են առնվազն շաբաթը մեկ անգամ՝ յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրը (նախորդ օրվա դրությամբ), ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացվում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորությունների մարման դեպքում այն զրոյացնում և Վարկային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկի գծով ժամկետանց պարտավորությունների մասնակի մարման դեպքում այն նվազեցվում և Վարկային ռեգիստր է ներկայացվում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

լզ. ***Վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարը*** - լրացվում է վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարը: Վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարը թարմացվում է առնվազն շաբաթը մեկ անգամ՝ յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրը (նույն օրվա դրությամբ), ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացվում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարի մարման դեպքում այն զրոյացնում և Վարկային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարի մասնակի մարման դեպքում այն նվազեցվում և Վարկային ռեգիստր է ներկայացվում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

լէ. ***Վարկային ռիսկի դասը*** - լրացվում է վարկի վարկային ռիսկի դասը84 համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի: Վարկը արտահաշվեկշռից դուրս գրելու դեպքում լրացվում է «չհաշվառվող»: Նշված կարգով չդասակարգվող վարկերի համար լրացվում է «չդասակարգվող» (բացառությամբ՝ բլանկային ակտիվի):

լը. ***Վարկի ժամկետանց օրերի քանակը*** - այն դեպքում, երբ վարկը դասակարգվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգով սահմանված օբյեկտիվ չափանիշների, լրացվում է վարկի մայր գումարի, տոկոսագումարի, վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորությունների, տույժերի և տուգանքների ժամկետանց օրերի քանակը: Այն դեպքում, երբ վարկի գծով առկա ժամկետանց պարտավորությունները չեն գերազանցում 1000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթը), ապա այս դաշտը չի լրացվում: Երբ այդ վարկի գծով առկա ժամկետանց պարտավորություններն արդեն սկսում են գերազանցել 1000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթը), ապա այդ վարկի գծով ժամկետանց օրերը հաշվարկվում և Վարկային ռեգիստր են ներկայացվում սկսած 1000 ՀՀ դրամը (համարժեք արտարժույթը) գերազանցելու պահից: Եթե «Վարկային ռիսկի դասը» դաշտում լրացված է «չդասակարգվող» կամ «չհաշվառվող», ապա ժամկետանց օրերի քանակը լրացվում է «0»:

Վարկատուն գործող վարկի վերաբերյալ ժամկետանց օրերի քանակը լրացնում և թարմացնում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացնում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի գծով ժամկետանց պարտավորությունների մարման դեպքում ժամկետանց օրերի քանակը զրոյացնում և վարկային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշ-

խատանքային օրվա ընթացքում: Վարկի գծով ժամկետանց պարտավորությունների մասնակի մարման դեպքում (եթե վարկատուն կատարում է վերահաշվարկ) ժամկետանց օրերի քանակը նվազեցվում և Վարկային ռեգիստր է ներկայացվում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

լթ. ***Վարկի վերջին դասակարգման ամսաթիվը*** - լրացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի դասի փոփոխության ամսաթիվը:

խ. ***Վարկի վերջին վերանայման ամսաթիվը*** - այն դեպքում, երբ վարկը վերանայվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի 2.9 կետի, լրացվում է վարկի վերջին վերանայման ամսաթիվը:

խա. ***Վարկի վերանայումների թիվը*** - այն դեպքում, երբ վարկը վերանայվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի 2.9 կետի, լրացվում է վերանայումների քանակը:

խբ. ***Վարկի վերանայված օրերի քանակը*** - այն դեպքում, երբ վարկը վերանայվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի 2.9 կետի, լրացվում է վարկի վերանայված օրերի քանակը՝ հաշվարկված վարկի առաջին վերանայման ամսաթվից:

Վարկատուն վարկի վերանայված օրերի քանակը լրացնում և թարմացնում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և Վարկային ռեգիստր է ներկայացնում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վերանայված օրերի քանակի նվազեցման/զրոյացման դեպքում վարկատուն վերանայված օրերի քանակը նվազեցնում/զրոյացնում և Վարկային ռեգիստր է ներկայացվում նվազեցման/զրոյացման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

խգ. ***Վարկի վերանայման պատճառը*** - լրացվում է վարկի վերանայման պատճառը՝ ըստ «Վարկի վերանայման պատճառի» տեղեկագրի:

խդ. ***Վարկի կարգավիճակը*** - եթե վարկը մարված է, կամ վարկառուի պարտավորությունը դադարել է վարկատուի նկատմամբ, լրացվում է՝ «*մարված*», հակառակ դեպքում վարկը համարվում է «*գործող*»:

խե. ***Վարկի մարման աղբյուրը*** - լրացվում է վարկի մարման աղբյուրը՝ ըստ «Վարկի մարման աղբյուրի» տեղեկագրի: Եթե վարկը մարվել է մեկից ավելի մարման աղբյուրների հաշվին, լրացվում է այն մարման աղբյուրը, որի գումարն առավելագույնն է վարկի ամբողջ սպասարկման ընթացքում: Եթե վարկի սպասարկման ընթացքում առկա չէ հստակ տեղեկատվություն մարման բոլոր աղբյուրների վերաբերյալ, և հնարավոր չէ հաշվարկել մարումների գումարները ըստ յուրաքանչյուր աղբյուրի, լրացվում է վերջնական մարման աղբյուրը՝ անկախ այն հանգամանքից՝ հանդիսանում է այն առավելագույն չափը, թե՝ ոչ:

խզ. ***Վարկի ապահովվածության տեսակը*** - լրացվում է վարկի ապահովվածության տեսակը՝ ըստ «Վարկի ապահովվածության տեսակի» տեղեկագրի:

խէ. ***Փոխանցված վարկի վարկային ռեգիստրի կոդ*** - լրացվում է վարկի՝ այլ վարկատուից կամ մասնագիտացված կազմակերպությունից փոխանցված վարկի վարկային ռեգիստրի կոդը:

խը. ***Վարկի վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է վարկի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն: Այն դեպքում, երբ վարկի տեսակը լիզինգ է, տվյալ դաշտում լրացվում է մատակարարի հետ կնքած առուվաճառքի գործարքի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը (մասնավորապես՝ գործարքի գումարը, կնքման ամսաթիվը, մատակարարի՝ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, իրավաբանական անձի համար՝ անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համար կամ այլ) և, առկայության դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը):

11) **ԳՐԱՎ**

ա. ***Գրավի նույնականացուցիչ*** - լրացվում է յուրաքանչյուր գրավի համար վարկատուի կողմից տվյալ համակարգի շրջանակներում տրված ունիկալ նույնականացուցիչը:

բ. ***Գրավի առարկա*** - լրացվում է գրավի առարկան՝ ըստ «Գրավի առարկայի» տեղեկագրի:

գ. ***Գրավի գնահատման արժույթը*** - լրացվում է գրավի գնահատման արժույթը՝ ըստ «Արժույթի» տեղեկագրի:

դ. ***Գրավի գնահատված արժեքը*** - լրացվում է գրավի գնահատված շուկայական արժեքը՝ ըստ գնահատման արժույթի:

ե. ***Գրավի վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է գրավի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն (օրինակ՝ գրավի առարկայի հասցեն, սեփականության վկայականի համարը, ավտոմեքենայի դեպքում՝ մակնիշը և այլն):

30. Հավելված 1-ում կիրառվող տեղեկագրերի բովանդակությունը սահմանված է սույն կարգի Հավելված 2-ում:

31. Սույն կարգի Հավելված 3-ում սահմանված Վարկային ռեգիստրի կողմից տրամադրվող ելքային պարբերական տեղեկատվությունը լրացվում է տվյալ վարկատուի բոլոր վարկառուների մասով, որոնք ունեն գործող պարտավորություններ տվյալ վարկատուի նկատմամբ և որոնց մասին Վարկային ռեգիստրում առկա է համապատասխան տեղեկատվություն:

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման Հավելված 1-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԵՐՆ ՈՒ ՉԵՎԱՉԱՓԵՐԸ

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ

ՀՀ	Անվանումը	Փոփոխման հնարավո-րություն	Ներկայացման անհրա-ժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Չևաչափ*
1.1	Ֆիզիկական անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
1.2	Ֆիզիկական անձի անունը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		128x
1.3	Ֆիզիկական անձի ազգանունը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		128x
1.4	Ֆիզիկական անձի հայրանունը	փոփոխական	օժանդակ			128x
1.5	Ֆիզիկական անձի անհատ ձեռնարկատեր լինելը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
1.6	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	փոփոխական	պարտադիր	1.6-1.9 դաշտերը լրացվում են այն դեպքում, երբ 1.5 դաշտն ունի «Y» («Այո») արժեքը:		128x
1.7	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի պետական ռեգիստրում հաշվառման համարը	փոփոխական	օժանդակ			3n.3n.5n
1.8	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի պետական ռեգիստրում հաշվառման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
1.9	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի գործունեության ոլորտը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	2n.3n
1.10	Ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի տեսակը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	x
1.11	Ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի համարը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		1x-30x
1.12	Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային (Ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար պարտադիր լրացման ենթակա է կամ 1.12, կամ 1.13 դաշտը):***		10n
1.13	Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը	հաստատուն	պարտադիր			50x
1.14	Ֆիզիկական անձի ծննդյան ամսաթիվը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		10date
1.15	Ֆիզիկական անձի սեռը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային***	տեղեկագիր (M/F)	1a
1.16	Ֆիզիկական անձի ռեզիդենտության երկիրը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
1.17	Ֆիզիկական անձի գրանցման հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
1.18	Ֆիզիկական անձի փաստացի բնակության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
1.19	Ֆիզիկական անձի զբաղվածության կարգավիճակը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
1.20	Ֆիզիկական անձի կրթական մակարդակը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
1.21	Ֆիզիկական անձի ընտանեկան կարգավիճակը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
1.22	Ֆիզիկական անձի ընտանիքի անդամների քանակը	փոփոխական	օժանդակ			n

** Չևաչափերի նկարագրության մեջ օգտագործվում են կողեր, որոնք ունեն հետևյալ իմաստները՝*
***a**-տառային*
***n**-թվային*
***x**-տառաթվային*
***number**- թվային կող է, որը ներառում է նաև տասնորդական կոտորակը, օգտագործվում է գումարներ, տոկոսներ ներկայացնելիս*
***nn**- տվյալը պարտադիր պետք է ներկայացված լինի նշված քանակի նիշերով:*

2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

ՀՀ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրա-ժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Չևաչափ
2.1	Իրավաբանական անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
2.2	Իրավաբանական անձի ռեզիդենտության երկիր	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	3a
2.3	Իրավաբանական անձի անվանումը	փոփոխական	պարտադիր			256x
2.4	Իրավաբանական անձի կազմակերպական-իրավական տեսակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
2.5	Իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) / Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի անհատականացման համարը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		128x
2.6	Իրավաբանական անձի պետական ռեգիստրում գրանցման համարը	փոփոխական	օժանդակ			3n.3n.5n
2.7	Իրավաբանական անձի պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
2.8	Իրավաբանական անձի սեփականության ձևը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
2.9	Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	փոփոխական	պարտադիր			13n
2.10	Իրավաբանական անձի գործունեության ոլորտը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	2n.3n
2.11	Իրավաբանական անձի գործունեության գրանցման հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
2.12	Իրավաբանական անձի փաստացի գործունեության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ

3. ՀՀ/ԼՂՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրա-ժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Չևաչափ
3.1	ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի «միասնական բանկային նույնականացուցիչ» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
	ՀՀ անունից հանդես եկող մարմին լինելը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային*** *(Դաշտի «Y» («Այո») արժեքը համապատասխանում է ՀՀ-ին, իսկ «N» («Ոչ») արժեքը՝ ԼՂՀ-ին):*	տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
3.2	ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմինը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	n
3.3	ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ

4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրա-ժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Չևաչափ
4.1	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի «Միասնական բանկային նույնականացուցիչ» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
4.2	Օտարերկրյա պետության կոդը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	3a
4.3	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի տեսակը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	n
4.4	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը	փոփոխական	պարտադիր			256x
4.5	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ

5. ՀԱՍՑԵԻ ՉԵՎԱՉԱՓ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրա-ժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Չևաչափ
5.1	Երկիր	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
5.2	Մարզ/շրջան-համայնք-բնակավայր/վարչական շրջան	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	9n
5.3	Փողոց	փոփոխական	օժանդակ			512x
5.4	Տուն/շենք	փոփոխական	օժանդակ			128x
5.5	Բնակարան	փոփոխական	օժանդակ			128x

ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրա-ժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Չևաչափ
1	**Վարկառու**	**հաստատուն**	**պարտադիր**			
1.1	Վարկառուի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	հաստատուն	պարտադիր			13n
1.2	Վարկառուի կապվածությունը վարկատուի հետ	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
1.3	Վարկառուի վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x
2	**Համավարկառու**	**փոփոխական**	**օժանդակ**			
2.1	Համավարկառուի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	փոփոխական	պարտադիր			13n
2.2	Համավարկառուի համամասնական մասնակցության չափը	փոփոխական	պարտադիր			number
2.3	Համավարկառուի վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x
3	**Երաշխավոր/երաշխիք տրամադրող**	**փոփոխական**	**պարտադիր**	**Սույն կետի լրացումը պարտադիր է այն դեպքում, երբ «Վարկի ապահովվածությունը» դաշտում ունի «ապահովված է՝ երաշխավորությամբ» կամ «ապահովված է՝ երաշխիքով» արժեքներից մեկը:**		
3.1	Երաշխավորի/երաշխիք տրամադրողի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	փոփոխական	պարտադիր			13n
3.2	Երաշխավորության գումարի/տրամադրված երաշխիքի արժույթը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
3.3	Երաշխավորության գումարը/տրամադրված երաշխիքի գումարը	փոփոխական	պարտադիր			number
3.4	Երաշխավորի/երաշխիք տրամադրողի վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x
4	**Փոխկապակցված անձ**	**փոփոխական**	**օժանդակ**			
4.1	Փոխկապակցված անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	փոփոխական	պարտադիր			13n
4.2	Փոխկապակցված անձի վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x
5	**Սեփականատեր**	**փոփոխական**	**պարտադիր**	**Սույն կետի լրացումը պարտադիր է իրավաբանական անձ վարկառուների համար:**		
5.1	Սեփականատիրոջ «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	փոփոխական	պարտադիր			13n
5.2	Սեփականատիրոջ մասնաբաժինը	փոփոխական	պարտադիր			number
5.3	Սեփականատիրոջ վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x

6	Վարկ	հաստատուն	պարտադիր			
6.1	Վարկային ռեգիստրի կոդը	հաստատուն	պարտադիր			5n-8n-6n
6.2	Վարկատուի կոդը	հաստատուն	պարտադիր		տեղեկագիր	5n
6.3	Մասնաճյուղի կոդը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	5n
6.4	Վարկատուի կարգավիճակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
6.5	Վարկի տրամադրումը որպես անհատ ձեռնարկատիրոջ	հաստատուն	պարտադիր	Սույն կետի լրացումը պարտադիր է ֆիզիկական անձ վարկառուների համար:	տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
6.6	Վարկային պայմանագրի տեսակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
6.7	Վարկային պայմանագրի համարը	հաստատուն	պարտադիր			20x
6.8	Վարկային պայմանագրի կնքման ամսաթիվը	հաստատուն	պարտադիր			10date
6.9	Վարկի վերջնական մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)	փոփոխական	պարտադիր			10date
6.10	Վարկի փաստացի տրամադրման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
6.11	Վարկի փաստացի (մասնակի) մարման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
6.12	Վարկի տեսակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
6.13	Վարկի արժույթը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
6.14	Պայմանագրով նախատեսված վարկի գումարը (սահմանաչափը)	փոփոխական	պարտադիր			number
6.15	Պայմանագրով նախատեսված վարկի փոփոխված գումարը (սահմանաչափը)	փոփոխական	օժանդակ			number
6.16	Վարկի փաստացի տրամադրված գումարը	փոփոխական	օժանդակ			number
6.17	Վարկի փաստացի մարված գումարը	փոփոխական	օժանդակ			number
6.18	Վարկի մայր գումարի մնացորդը	փոփոխական	պարտադիր			number
6.19	Վարկի անվանական տոկոսադրույքը	փոփոխական	պարտադիր			number
6.20	Վարկի փաստացի տոկոսադրույքը	փոփոխական	պարտադիր			number
6.21	Վարկի անվանական տոկոսադրույքի տեսակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
6.22	Վարկի անվանական տոկոսադրույքի սուբսիդավորումը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
6.23	Վարկի անվանական տոկոսադրույքի սուբսիդավորված գումարը	փոփոխական	օժանդակ			number
6.24	Վարկի գծով փաստացի վճարված տոկոսագումար	փոփոխական	օժանդակ			number
6.25	Վարկի տրամադրման միջազգային կազմակերպության անվանումը	հաստատուն	օժանդակ		տեղեկագիր	x
6.26	Վարկի տրամադրման միջազգային ծրագրի անվանումը	հաստատուն	օժանդակ		տեղեկագիր	x
6.27	Վարկի օգտագործման ոլորտը	հաստատուն	օժանդակ		տեղեկագիր	2n.3n
6.28	Վարկի օգտագործման նպատակը	հաստատուն	օժանդակ		տեղեկագիր	n
6.29	Վարկի օգտագործման երկիրը	հաստատուն	պարտադիր		տեղեկագիր	3a
6.30	Վարկի օգտագործման մարզը	հաստատուն	պարտադիր			9n
6.31	Վարկի ժամկետանց դառնալու ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
6.32	Վարկի ժամկետանց մայր գումարը	փոփոխական	օժանդակ			number
6.33	Վարկի ժամկետանց տոկոսագումարը	փոփոխական	օժանդակ			number
6.34	Վարկի գծով հաշվարկված այլ ժամկետանց պարտավորություններ	փոփոխական	օժանդակ			number
6.35	Վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների գումարը	փոփոխական	օժանդակ			number
6.36	Վարկային ռիսկի դասը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
6.37	Վարկի ժամկետանց օրերի քանակը	փոփոխական	օժանդակ			n
6.38	Վարկի վերջին դասակարգման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
6.39	Վարկի վերջին վերանայման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
6.40	Վարկի վերանայումների թիվը	փոփոխական	օժանդակ			n
6.41	Վարկի վերանայված օրերի քանակը	փոփոխական	օժանդակ			n
6.42	Վարկի վերանայման պատճառը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
6.43	Վարկի կարգավիճակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
6.44	Վարկի մարման աղբյուրը	փոփոխական	օժանդակ	Դաշտի լրացումը պարտադիր է այն դեպքում, երբ «Վարկի կարգավիճակը» դաշտն ունի «N» («Մարված») արժեքը:	տեղեկագիր	n
6.45	Վարկի ապահովվածության տեսակը	փոփոխական	պարտադիր	Հնարավոր է ընտրել մեկից ավելի ապահովվածության տեսակներ (առանց դաշտերի արժեքների կրկնության):	տեղեկագիր	n
6.46	Փոխանցված վարկի վարկային ռեգիստրի կոդ	հաստատուն	օժանդակ			5n-8n-6n
6.47	Վարկի վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x
7	**Գրավ**	**փոփոխական**	**պարտադիր**	**Սույն կետի լրացումը պարտադիր է այն դեպքում, երբ «Վարկի ապահովվածությունը» դաշտն ունի «ապահովված է՝ գրավով» արժեքը:**		
7.1	Գրավի նույնականացուցիչ	հաստատուն	պարտադիր			128x
7.2	Գրավի առարկան	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
7.3	Գրավի գնահատման արժույթը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
7.4	Գրավի գնահատված արժեքը ըստ գնահատման արժույթի	փոփոխական	պարտադիր			number
7.5	Գրավի վերաբերյալ այլ նշումներ	փոփոխական	օժանդակ			512x

Անձը հաստատող փաստաթղթի տեսակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	stIdentityType

Անձը հաստատող փաստաթղթի տեսակի նկարագիր	Անձը հաստատող փաստաթղթի տեսակի արժեքը
ՀՀ քաղաքացու ոչ բիոմետրիկ անձնագիր	NON_BIOMETRIC_PASSPORT
Նույնականացման քարտ	ID_CARD
ՀՀ քաղաքացու բիոմետրիկ անձնագիր	BIOMETRIC_PASSPORT
Ծննդյան վկայական	BIRTH_CERTIFICATE
Կացության քարտ	RESIDENCE_CARD
Ճամփորդային փաստաթուղթ	TRAVEL_DOCUMENT
Արտասահմանյան անձնագիր	FOREIGN_PASSPORT
Այլ փաստաթուղթ	OTHER

Զբաղվածության կարգավիճակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	EmploymentStatus

Զբաղվածության կարգավիճակի նկարագիր	Զբաղվածության կարգավիճակի արժեքը
Այլ	0
Աշխատում է որպես վարձու աշխատող պետական հատվածում	1
Աշխատում է որպես վարձու աշխատող ոչ պետական հատվածում	2
Ինքնազբաղված է՝ սեփական բիզնեսում կամ որպես ընտանիքի անդամ աշխատում է առանց վարձատրության	3
Գործատու է	4
Չի աշխատում՝ աշխատունակ է	5
Չի աշխատում՝ անաշխատունակ է	6

Կրթական մակարդակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	Education

Կրթական մակարդակի նկարագիր	Կրթական մակարդակի արժեքը
Չունի տարրական	1
Տարրական հանրակրթական	2
Հիմնական հանրակրթական	3
Միջնակարգ հանրակրթական	4
Նախնական մասնագիտական (արհեստագործական)	5
Միջին մասնագիտական	6
Բարձրագույն մասնագիտական	7
Հետբուհական մասնագիտական	8

Ընտանեկան կարգավիճակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	MartialStatus

Ընտանեկան կարգավիճակի նկարագիր	Ընտանեկան կարգավիճակի արժեքը
Երբեւէ չամուսնացած	1
Ամուսնացած (գրանցված և փաստացի)	2
Այրի/կնակորույս	3
Ամուսնալուծված	4

Կազմակերպական-իրավական ձևի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	LegalType

Կազմակերպական-իրավական ձևի նկարագիր	Կազմակերպական-իրավական տեսակի արժեքը
Այլ կազմակերպական-իրավական ձև	0
Լիակատար ընկերակցություն	1
Կոմանդիտային (վստահության վրա հիմնված) ընկերակցություն	2
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	3
Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն	4
Բաց բաժնետիրական ընկերություն	5
Փակ բաժնետիրական ընկերություն	6
Արտադրական կոոպերատիվ	7
Սպառողական կոոպերատիվ	8
Հասարակական միավորում	9

Հիմնադրամ	10
Իրավաբանական անձանց միություն	11
Հիմնարկ (պետական և այլ)	12
Պետական ոչ առևտրային կազմակերպություն	13
Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն	14
Պետական (իշխանության տեղական մարմնի) ձեռնարկություն	15
Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն	16
Ինքնակարգավորվող կազմակերպություն	17
Գյուղատնտեսական վարկային ակումբ	18

Սեփականության/մասնակցության ձևի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	OwnershipType
Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Պետական մասնակցությամբ	1
Մասնավոր մասնակցությամբ	2
Օտարերկրյա մասնավոր մասնակցությամբ	3
Օտարերկրյա պետական մասնակցությամբ	4

Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի տեսակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	FCDelegate
Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Պետական գերատեսչություն	1
Դեսպանատուն	2
Հյուպատոսարան	3

ՀՀ/ԼՂՀ անունից հանդես եկող մարմնի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	P001, BankID.xsd
Կիրառվող տիպը	ctPersonRA
Որպես տեղեկագրի արժեք ընտրվում է «Վարկային ռեգիստր համակարգի շրջանակներում հաշվետվություններում օգտագործվող տեղեկագրերի բեռնման վեբ ծառայության» «Ֆունկցիոնալ նկարագիր» փաստաթղթում (Functional Specification-Reference_ books_WEB Service.docx) նկարագրված ծառայության միջոցով ստացվող համապատասխան տեղեկագրի արժեքը:	

Վարկատուի կարգավիճակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	BankID.xsd, LR3.xsd
Կիրառվող տիպը	OrganizationStatus
Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Գործող է	0
Գտնվում է սանկցիայի գործընթացում	1
Գտնվում է լուծարման գործընթացում	2
Լուծարված է	3

Վարկային պայմանագրի տեսակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stContractType
Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Պարզ	1
Բարդ	2
Համատեղ	3
Խմբային	4

Վարկի տեսակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stLoanType
Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Վարկ	1
Վերականգնվող վարկային գիծ	2
Չվերականգնվող վարկային գիծ	3
Այլ վարկային գիծ	4
Վերականգնվող օվերդրաֆտ	5
Չվերականգնվող օվերդրաֆտ	6
Վարկային քարտերով տրամադրված վարկեր	7
Լիզինգ	8
Ֆակտորինգ	9
Երաշխիք	10
Ակրեդիտիվ	11
Ռեպո	12
Սվոփ	13
Փոխառություն	14
Դեբիտորական պարտք	15

Վարկի անվանական տոկոսադրույքի տեսակի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stInterestRateType

Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Լողացող	1
Ֆիքսված	2
Փոփոխվող	3
Անտոկոս	4
Լողացող փոփոխվող	5

Վարկային ռիսկի դասի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stRisk

Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Ստանդարտ	0
Հսկվող	1
Ոչ ստանդարտ	2
Կասկածելի	3
Անհուսալի	4
Չհաշվառվող	5
Չդասակարգվող	6
Չդասակարգվող (բլանկային)	7

Վարկի մարման աղբյուրի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stRepaymentSource

Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Սեփական միջոցների հաշվին	1
Գրավի իրացման հաշվին	2
Երաշխավորի (երաշխիք տրամադրողի) միջոցների հաշվին	3
Ձիջվել է/ներվել է վարկատուի կողմից	4
Ձիջված է այլ անձի (անձանց)	5
Փոխանցվել է այլ վարկատուի	6
Փոխանցվել է այլ մասնագիտացված կազմակերպությանը	7

Վարկի ապահովվածության տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	ctCollateral

Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Ապահովված չէ՝ բլանկային	0
Ապահովված է՝ այլ ապահովվածությամբ	1
Ապահովված է՝ երաշխավորությամբ	2
Ապահովված է՝ երաշխիքով	3
Ապահովված է՝ գրավով	4

Գրավի առարկայի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	ctPawn

Տեղեկագրի արժեքի նկարագիր	Տեղեկագրի արժեքը
Այլ	0
Բանկային ոսկի	1
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ	2
Ոսկյա իրեր և զարդեր	3
Այլ թանկարժեք մետաղներ	4
Այլ թանկարժեք մետաղներից զարդեր և իրեր	5
Թանկարժեք քարեր	6
Հաշվարկային հաշիվ (ներ)	7
Ժամկետային ավանդներ	8
Այլ դրամական միջոցներ	9
Դեբիտորական պարտքեր	10
Բաժնետոմսեր	11
Պետական արժեթղթեր	12
Այլ արժեթղթեր	13
Հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ	14
Պատրաստի արտադրանք պահեստում/ վաճառակետերում	15
Ապրանքներ պահեստում / վաճառակետերում	16

Կենցաղային ապրանքներ (էլեկտրատեխնիկա, կազմ. տեխնիկա, կահույք և այլն)	17
Այլ շրջանառու միջոցներ	18
Ավտոմեքենա	19
Մեքենաներ, սարքավորումներ, հոսքագծեր	20
Գյուղտեխնիկա՝ կոմբայններ, տրակտորներ և այլն	21
Շինարարական տեխնիկա՝ կռունկներ և այլն	22
Այլ շարժական գույք	23
Հող, հողատարածքներ	24
Բնակարան	25
Բնակելի առանձնատուն	26
Ոչ բնակելի տարածք	27
Այլ անշարժ գույք	28
Այլ հիմնական միջոցներ	29
Իրավունքի գրավ	30
Աշխատավարձ	31
Վարկառուի ֆինանսական հոսքեր (հաշվարկային հաշվի և դրամարկղային միջոցների շրջանառություն)	32
Մաճր և խոշոր կենդանիներ	33

Արժույթի տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stCurrency
Որպես Արժույթի տեղեկագիր օգտագործվում է ISO 4217 աղյուսակի (http://www.currency-iso.org/en/home/tables/table-a1.html) տեղեկագիրը, որպես Արտարժույթի արժեք ընտրվում է «Alphabetic Code» դաշտի արժեքը: Օրինակ.	
Armenian Dram	AMD
US Dollar	USD
Euro	EUR
Russian Ruble	RUB
...	...

Վարչատարածքային բաժանման միավորների (մարզ/շրջան/համայնք/թաղային համայնք/բնակավայր) տեղեկագիր	
Կիրառվող հաղորդագրությունը	LR3.xsd
Կիրառվող տիպը	stRegion
